Azg Ազգ

20 ՓԵՏՐՈՒԱՐ 2007 ԵՐԵՔՇԱԲԹԻ 31 (3683)

Միակամությունը՝ գերակա տարր

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ,
Մտեփանակերտ

Տասնհինգ տարի առաջ, նույն այս օրը Լեռնային Ղարաբաղի մարզային խորհուրդը որոշում ընդունեց ինքնավար մարզը Ադրբեջանի կազմից հանելու եւ Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու մասին: Քաղաքական այս ակտը հատկանշական է ոչ միայն խորհրդային ինտերնացիոնալիզմի տաբուն ջարդելու տեսանկյունից, հանգի այդպիսի փորձ, կենտրոնական իշխանություններին նմանատիպ խնդրանքով դիմելու տարբերակով, արվել էր նաեւ 1960-ական թվականներին: Այն ժամանակ, ինչպես հայտնի է, վերամիավորման փորձի հեղինակները պատժվել են Ադրբեջանի կողմից, եւ միայն 88-ին կայսրության միջանցքներում շրջող վերակառուցման «թարմ քամին» ընձեռեց ինքնորոշման պատեհությունը: Արցախցիները ճիշտ հաշվարկով իրականացրին իրենց վաղեմի երազանքը՝ հեսայդու պարտադրված պատերազմով հատուցելով ազատության պայքարի համար:

Տասնհինգ տարի հետո ոչ միայն փոխվել են ազատության դրոշի գույները՝ խորհրդային հրաբորբը փոխարինելով անկախության եռագույնով, այլեւ՝ հիմնախնդրի նկատմամբ համընկալումը:

Տես էջ 2

Ռոբերտ Քոչարյան. «Թուրքիան պարտավոր է ներողություն խնդրել»

Ֆրանսիայում անցկացվող Հայաստանի տարվա առիթով փետրվարի 17-ին պաշտոնական այցով Փարիզ մեկնած ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը հարցազրույց է տվել «Ֆիգարո» ազդեցիկ թերթի թղթակցին:

- Ինչպե՞ս եք գնահատում Ֆրանսիայի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության ուրացումը քրեապես պատժելի դարձնելու հարցում:

- Մենք Ֆրանսիային երախտապարտ ենք Հայոց ցեղասպանության ճանաչմանն օրենքի ուժ տալու համար: Գիտեմ, որ ավելի հեռուն գնալու փորձեր են արվում: Դրանք ոչ թե մեր նախաձեռնությունն են, այլ ավելի շուտ հայ համայնքի ջանքերի արդյունքն են: Դա Ֆրանսիայի ներքաղաքական գործն է եւ նա էլ պետք է գտնի համապատասխան ձեւակերպումներ: Բայց, անշուշտ, Հայաստանը չի կարող համաձայն լինել Հայոց ցեղասպանության ճանաչմանն առնչվող ամեն ինչի:

- Թուրքիայի հետ ձեր հարաբերությունները կարո՞ղ են բարելավվել Ստամբուլում հայ լրագրող Հրանտ Դինքի սպանությունից հետո:

- Կարծիքները տարբեր են, բայց ես կարծում եմ, նախնական ցնցակաթվածն անցնելուց հետո այդ սպանությունն ազդեցություն չի ունենա: Հիմնահարցը շատ ավելի խորն է եւ սկիզբ է առնում թուրք ժողովրդի պատմությունից: Կայսրությունները միշտ էլ դժվարանում են ներողություն խնդրել, եւ սա է՛լ ավելի ճիշտ է, երբ խոսքն արեւելյան կայսրության մասին է:

Տես էջ 2

Երեկ Ֆրանսիայի մայրաքաղաքում հանդիպել են Ժակ Շիրակն ու Ռոբերտ Քոչարյանը: Նրանք մասնակցել են Լուվրում «Սուրբ Հայաստան» ցուցահանդեսի բացմանը: Լուվրի գոյության ողջ ընթացքում սա ամենամեծ ցուցահանդեսն է՝ ամբողջովին նվիրված հայ-քրիստոնեական արվեստին: Ցուցահանդեսը տեւելու է 25 օր, ժամանակի ընդգրկումը Հայաստանում քրիստոնեության ներթափանցման ժամանակից մինչեւ 19-դ դարն է:

ԼՂ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Նախաձեռնությունները ՄԱԿ-ում ղարաբաղյան հարցի առնչությամբ խոշընդոտում են բանակցություններին

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ նախաձեռնությունները ՄԱԿ-ում խոչընդոտ են բանակցությունների ընթացքին: Այս մասին, ինչպես հաղորդում է «Թրենդ» գործակալությունը, հայտարարել է ԵԱՀԿ Մինսկի խմբի ռուս համանախագահ Յուրի Մերզլյակովը. «Ջանքերը պետք է ուղղվեն հիմնական սկզբունքների համաձայնեցմանը եւ ոչ թե շեղվեն այլ բաների վրա»:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության քննարկումը ՄԱԿ-ի երջանակներում կարող է անցանկալի դարձնել Լեռնային Ղարաբաղի մասնակցությունը բանակցություններում, իսկ ԼՂ բանակցություններին ընդգրկվածությունը հայկական կողմի համար առաջնային կարեւորություն ունի: Ռուս համանախագահն ընդգծել է, որ Հայաստանին՝ ՄԱԿ-ի բանաձեւերում միակ դիմումն ընդամենը Ղարաբաղի վրա ներգործելն է: Ըստ այդմ, Հայաստանը հայտարարում է, որ եթե հարցը տեղափոխվի ՄԱԿ, ապա Ադրբեջանն ստիպված կլինի Լեռնային Ղարաբաղի հետ խոսել, ինչն, ըստ Յուրի Մերզլյակովի, բանակցային գործընթացի համար ցանկալի չէ:

Իրանից նույնական գազ, որքան Ռուսաստանից

2008 թվականին Իրանից նույնքան գազ կստանանք, որքան Ռուսաստանից: Անդրանիկ Մարգարյանն է այս մասին հայտնել՝ Jane's հետազոտական կենտրոնին տված հարցազրույցում: ՀՀ վարչապետը նաեւ տեղեկացրել է, որ Հայաստանը վարում է միջազգային հանրությանը ինտեգրվելու քաղաքականություն եւ կենտրոնի փորձագետներից հարց ստացել. «Արդյոք կհաջողվի՞ հասնել այդ նպատակին, հաշվի առնելով Երեւանի կախվածությունը Մոսկվայից», այս մասին հաղորդում է «Ազատություն» ռադիոկայանը:

Գերմանիայի արտաքին գործերի նախարարը Հայաստանում

Այսօր պաշտոնական այցով Հայաստան է ժամանում Գերմանիայի արտաքին գործերի նախարար Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերը: Այցի առաջին օրը Ծիծեռնակաբերդում Օսմանյան Թուրքիայում 1915 թ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի հուշարձանին ծաղկեպսակ դնելուց հետո Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերը կհանդիպի ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանի, ապա՝ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի հետ: Հանդիպումների ընթացքում հայ-գերմանական հարաբերությունների զարգացման հարցերից զատ կքննարկվեն տարածաշրջանային համագործակցության խնդիրները: Նախօրեին Գերմանիայի արտաքին գործերի նախարարը պաշտոնական այցով Ադրբեջանում է: Ն. Պ.

«Իրավունք» թերթի լույսընծայումը դադարեցվել է

Հրանտ Խաչատրյան-Հայկ Բաբուխանյան վեճը գագաթնակետում է

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ,

«Սահմանադրական իրավունք միություն» (ՍԻՄ) կուսակցությունում ծագած վեճը՝ հիմնադիր նախագահ Հրանտ Խաչատրյանի եւ Հայկ Բաբուխանյանի հակամարտությունը, դեռ շարունակություն է ունենում: Հիշեցնենք, որ փետրվարի 8-ին Հրանտ Խաչատրյանն իր իսկ հիմնադրած կուսակցություն այցելելով եւ դիմադրության հանդիպելով՝ հարվածել էր Հայկ Բաբուխանյանին: Դեռ 11 օր է անցել հիշյալ աղմկահարույց դեպքից, բայց արդեն «ջրի երես բարձրացավ» այդ հակամարտության հերթական «հետեւանքը»: Երեկ ՍԻՄ կուսակցության ներկայացուցիչ Հայկ Բաբուխանյանը հայտարարել է, որ կուսակցության պաշտոնաթերթը՝ «Իրավունքը», Հրանտ Խաչատրյանի եւ նրա կողմնակիցների զանգերի ու սպառնալիքների հետեւանքով երեկվանից լույս չի տեսնում:

Թերթի հրատարակման դադարեցման առնչությամբ մեկնաբանություն ստանալու համար «Ազգը» կապվեց թերթի գլխավոր խմբագիր Հովհաննես Գալաջյանի հետ: Վերջինս նշեց, որ զանգեր ու սպառնալիքներ են եղել, որից հետո իրենք որոշել են աշխատակազմի անվտանգությունն ապահովելու համար դադարեցնել թերթի աշխատանքը:

Տես էջ 3

Մերձմոսկովյան թռչնագրիպը վտանգավոր է մարդու համար

Մոսկվայի մարզում հայտնաբերված թռչնագրիպը մարդու համար վտանգավոր է: Այդ մասին ՌԻԱ գործակալության թղթակցին հայտնել է «Ռուսգյուղիսկողության» մամլո քարտուղար Ալեքսեյ Ալեքսեենկոն:

Նրա խոսքերով, փորձաքննության ընթացքում պարզվել է, որ Մոսկվայի մարզի 5 շրջաններում թռչունները վարակված են գրիպի H5N1 վիրուսի ասիական տարատեսակով: Հայտնի է, որ H5N1 վիրուսը կարող է փոխանցվել մարդուն: Հայտնի է նաեւ, որ վարակված թռչուններն օրերս վաճառվել են Մոսկվայի հարավ-արեւելքում գտնվող թռչնաբուկայում: Փետրվարի 17-ին այդ բուկայի աշխատանքը դադարեցվել է: Ներկայումս մասնագետները շարունակում են վիրուսի հետազոտությունը:

Թռչնագրիպով հավերի վարակման բոլոր դեպքերն արձանագրվել են շաբաթավերջին Մոսկվայի մարզի մասնավոր տնտեսություններում:

Ռուսաստանի բժշկագիտական ակադեմիայի վիրուսային պատրաստուկների ինստիտուտի գիտնականները հավաստիացնում են, թե վարակված թռչունները չէին կարող հայտնվել Մոսկվայի վաճառասեղաններին:

Ի դեպ, «Մոսկովսկի կոմսոմոլեց» թերթը երեկ այն տեսակետը հայտնեց, թե Մոսկվայի մարզում փետրվարին թռչնագրիպի վիրուսի հայտնվելը կարող է եւ կազմակերպված դիվերսիա լինել, քանի որ ներկայումս այնտեղով վայրի թռչուններ չեն անցնում, իսկ ընտանի թռչունները պահվում են փակ պայմաններում:

Պ. Բ.

Համառ ջանքերի շնորհիվ Մելգոնյանը կարող է փրկվել

Շենքերի պահպանման նոր նախագիծ՝ կառավարությանը

Նոր տարվա նախօրեին Կիպրոսի գերագույն դատարանը մերժեց օրինական համարել Մելգոնյան վարժարանի օտարումը արգելակող առաջին ատյանի վճիռը: Դրանով ՀԲԸ Միությունը ստացավ նոր հնարավորություն վարժարանի հողը վաճառելու: Սակայն այժմ ակնկալվում է, որ Կիպրոսի կառավարության քաղաքաշինության բաժինը շուտով շենքերի պահպանման մի նոր օրենք կհրապարակի, որով որպես ազգային ժառանգություն կճանաչի Նիկոսիայում գտնվող Մելգոնյան կրթական հաստատության կալվածների մեծ մասը, տեղեկացնում է Նիկոսիայից ստացված մեր թղթակցի հաղորդագրությունը:

Հայկական համայնքում այս լուրը հույսեր է վերակենդանացրել, որ մի օր այդ հաստատությունը թերեւս կվերագտնի իր երբեմնի փառքը:

Համաձայն շրջագայվող լուրերի, առաջիկա երկու շաբաթների ընթացքում ներքին գործերի նախարար Նեոկլիս Սիլիկիոտիսին է ներկայացվելու շենքերի պահպանության վերաբերյալ մի օրինագիծ, որով կրթական հաստատության երկու գլխավոր շենքերն ու Լիմասոլ պողոտայի երկայնքով ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված ծառերի պուրակը ճանաչվելու են ազգային ժառանգություն եւ գտնվելու են պետական հսկողության տակ: Այդպիսով վերջնականապես արգելվելու է տարածքը առեւտրական նպատակներով օգտագործելու մտադրությունները:

«Չէինք կարող թույլ տալ, որ ազգային այս հարստությունը վաճառվեր նույնպիսի հեշտությամբ, որպիսին փակվեց վարժարանը», ասել է այս առթիվ խորհրդարանում հայ համայնքի ներկայացուցիչ Վարդես Մահսեյանը, որը նոր նախագծի նախաձեռնողներից է: Հայ համայնքի հոգեւոր պետի եւ քաղաքական ու հասարակական կազմակերպությունների ղեկավարների համառ ջանքերի արդյունքում նամակներ են հղվել երկրի Գերագույն դատարանի նախագահին, գլխավոր դատախազին, ներքին գործերի նախարարությանը եւ քաղաքական կուսակցությունների առաջնորդներին, որպեսզի պետության անունից միջամտեն այս գործին եւ փրկեն վարժարանը ու նրա տարածքը (125 հազար քմ) չնչին մի գումարով (158 մլն դոլար) վաճառվելու սպառնալիքից:

«Այժմ, երբ առավել հրատապ է դարձել Լիբանանից եւ Իրաքից փախչող հայ երիտասարդներին աջակցանի եւ կրթության հնարավորություններ ընձեռելը, նշանակությունը փակել է վարժարանը, չի էլ մտածում այդ մարդկանց ճակատագրերի մասին», նշում է շրջանավարտների անունից Մասիս Տեր-Բարթողը, ավելացնելով, որ համայնքը անհամբեր սպասում է վերոհիշյալ նախագծի շուտափույթ ընդունմանը, որպեսզի ՀԲԸՄ-ի կողմից արդեն ծրագրված առեւտրական ծրագրերը գործադրելի չդառնան:

Հ. Օ.

Ավելացել են օրինական ճանապարհով առողջապահական համակարգ մտնող գումարները

Անվճար դեղորայքի արտոնություն՝ մինչեւ 7 տարեկան երեխաներին

Պետպատվերի շրջանակներում Երեւանի բոլոր առողջապահական կազմակերպություններն անցած տարի իրականացրել են 13 մլրդ 705 մլն դրամի բուժօգնություն: 2007 թվականին նախատեսվել է 13 տոկոսով ավելի՝ 15 մլրդ 581 մլն-ի: Պետպատվերային սպասարկման վերաբերյալ հաղորդագրություններից ստացվող 2 տասնյակից մի քիչ ավելի բողոքները, ըստ հաղորդագրության առողջապահության վարչության պետ **Արմեն Սողոյանի**, հիմնականում վերաբերում են դեղորայքի անվճար սպասարկմանը: Քաղաքացիները պահանջում են անվճար դեղորայքի այլ տեսակներ, որոնք չկան հիմնական դեղերի ցանկում կամ անվճար սկզբունքով չեն տրամադրվում, արտոնություն նախատեսող ինչ խմբի էլ պատկանի քաղաքացին: Հատուկ հանձնաժողովի որոշմամբ միայն հայտնի դեղերի ցանկից դուրս դեղորայքը կարելի է անվճար տրամադրել քաղաքացուն:

Երեւանի քաղաքապետարանի ենթակայությամբ առողջապահական կառույցներում 2006 թվականին իրականացվել է 2 մլրդ 405 մլն դրամի վճարովի բուժօգնություն, որը 3,4 տոկոսով դարձյալ ավելի է նախորդ տարվանից: Քանի որ նախորդ տարի պոլիկլինիկաների վճարովի ծառայությունների գերակշռող մասն անվճար դարձավ, նշված աճը վերաբերում է բացառապես սպասիոնար համակարգին:

Գումարների աճի փաստին վարչության պետը լավատեսական բացատրություն է տալիս. «Դա ապացույց է, որ գնալով ավելանում են օրինական ճանապարհով առողջապահական համակարգ մուտք գործող գումարները, այսինքն, նվազում են նաեւ ամեն տեսակի կոռուպցիոն ռիսկերը»: 7 տոկոսով ավելի է նաեւ սպասիոնար համակարգում բուժօգնություն ստացածների ընդհանուր թիվը՝ 168 հազար 436 մարդ: Անցած տարի «Շտապ բուժօգնության» ընկերությունը եւս բավական պատկառելի քանակի՝ 154 հազար 927 կանչեր է ստացել, 5 տոկոսով ավելի նախորդ տարվանից: Արդեն 2 տարի այստեղ սպասարկող մեքենաների թարմացում է կատարվում, այնքան, որ ամենահին մեքենան հիմա 1999 թվականի արտադրության է: Այսօր Երեւանում



շտապ-օգնության մոտ 37 բրիգադներ են գործում, եւ առկա մեքենաների քանակը, Արմեն Սողոյանի հավաստմամբ, գործնականում բավարար է կանչերին արագ արձագանքելու համար: Հակադարձենք, սակայն, որ այդ մեքենաների խիստ կարիքը կա մարզերում, եւ հաճախ է լինում, որ ծանր հիվանդին Երեւան հասցնելու համար օգտագործվում են Երեւանի մեքենաները, որը խիստ նվազեցնում է մայրաքաղաքի կանչերին ժամանակին պատասխանելու հնարավորությունը:

Այս տարի այս ոլորտի հիմնական խնդիրը լինելու է կարի համակարգի արդիականացումը:

2007 թվականին պոլիկլինիկաներում առաջնային բուժտպասարկումը կշարունակվի իրականացվել անվճար: Իհարկե, միայն տվյալ պոլիկլինիկայում հաշվառված քաղաքացիների համար: Եվ, թերեւ անվճար լինելու հանգամանքն անցած տարի համարյա 30 տոկոսով ավելացրեց պոլիկլինիկաներ այցելությունների թիվը: Այս հունվարին եւս, ինչպես անցած, բնակիչների ակտիվ հոսքը դեպի պոլիկլինիկաներ շարունակվում է:

Անվճար դեղորայքի հետ կապված այս տարվա նորույթն այն է, որ անվճար դեղորայքի իրավունք ու արտոնություն ունեցող խմբերին ավելացել են նաեւ մինչեւ 7 տարեկան բոլոր երեխաները:

Ընտանեկան բժշկի ինստիտուտի ուղվականը, որի մասին արդեն քանի տարի խոսվում է, կարծես սկսում է մարմին դառնալ: 196 տեղամասային թերապեւտներ ու մանկաբույժներ Համաշխարհային բանկի ֆինանսավորման շրջանակներում վերապատրաստվել եւ ստացել են ընտանեկան բժշկի մասնագիտացում: Այս տարի եւս 39 բժիշկ ու 70 բուժքույր կներառվեն այդ շրջանակում, եւ գարնանից կսկսվի քաղաքացիների գրանցումը տեղամասային թերապեւտների ու մանկաբույժների մոտ: Տվյալների ընդհանուր բազայի ստեղծումից հետո 2007 թվականի կեսերից կմեկնարկի ընտանեկան բժիշկների անհատական եւ խմբային գործունեությունը, որի ժամանակ ընտանեկան բժիշկները բնակիչների հավաքագրում կանեն ողջ համայնքի տարածքից, անկախ նրանից, թե որ պոլիկլինիկայում են գրանցված:

ԿԱՐԻՆԵ ՂԱՆԻԵԼՅԱՆ

Անցած տարի նախորդ տարվանից ավելի է ծնվել ընդամենը 344 երեխա

Երեւանի 10 ծննդատներում անցած տարի ծնվել է 14 հազար 304 երեխա, որ 2005-ի համեմատ (13 հզ. 960 երեխա) չնչին տարբերություն է նշում՝ ծնունդների թիվն ավելացել է ընդամենը 344 երեխայով կամ 2,5 տոկոսով: Հիշեցնենք, որ բնակչության պարզ վերարտադրության համար այդ ցուցանիշի գոնե կրկնակին պիտի լինի:

Կ. Դ.

Միակամությունը՝ գերակա տարր

1-ին էջից

Այսօր Արցախի ժողովրդի համար ուղենիշը անկախության գաղափարն է, եւ դա հավաստվել է անցյալ տարվա դեկտեմբերին ԼՂՀ-ում անցկացված սահմանադրական հանրաքվեով, երբ համաժողովրդական «այո» է ասվել անկախությունը փաստող գլխավոր փաստաթղթին՝ սահմանադրությանը:

Նույնը հաստատում են նաեւ սոցիոլոգիական հարցումները: Մեկ ամիս առաջ, օրինակ, ԼՂՀ-ում անցկացված հարցումները պարզել են, որ Հայաստանին վերամիավորվելու կողմնակիցներն արդեն մեծամասնություն չեն կազմում Ղարաբաղում: Իհարկե, հարցախույզի մասնակիցները հիմնականում միաձայն են Ադրբեջանի ենթակայությունը բացառելու հարցում, սակայն նկատելի է դառնում նոր սերնդի կողմնորոշումների յուրահատկությունը: Վերոհիշյալ հարցման արդյունքները միաժամանակ փաստում են, որ հարցախույզի 300 մասնակիցներից 19 կողմ են խաղաղության՝ ամեն գնով, իսկ 5 հոգի՝ անկախության դիմաց փոխզիջման կողմնակիցներ են: Ասենք, որ մեջբերված թվերը բնավ էլ նշանակալից չեն Ղարաբաղի բնակչության կողմնորոշումները հասկեցնելու առումով, բայց հարց է ծագում՝ արդյոք այս տարընկալումը 88-ի գաղափարաբանությունից նահանջ չի՞ համարվում:

Վերամիավորումը անկախության գաղափարով փոխարինելը գնահատելով իբրեւ աշխարհաքաղաքական նոր զարգացումների տրամաբանական արդյունք՝ փորձենք պարզել, թե 88-ից հետո համաժողովրդական որոշումներում ինչ էական տարր է գերակա մնացել: Տասնհինգ տարի առաջ հրապարակում փոթորկված ժողովրդի գլխավոր ուժը միասնությունն էր, որից անգամ վախեցավ միութենական իշխանությունը: Այդ միասնությունն առաջնորդեց արցախցիներին (արժե նշենք՝ համայն հայությանը), որպեսզի դիմագրավելով տասնյակ անգամ ուժեղ հակառակորդին՝ հաղթի պատերազմում: Եվ այսօր, նոր ազգանպաստ որդեգրումների պարագայում, դարձյալ միասնությունն է մնում շարժիչ ուժը: Այսինքն՝ փոխվում են ժամանակները, ռազմավարությունները, սակայն միակամության պարտադիր ներկայությունը իբրեւ վճռորոշ գործոն՝ մնում է անփոփոխ:

Տասնհինգ տարի է անցել, կանգնի նույնքան եւ ավելին, եւ դժվար է կանխատեսել, թե հետագա աշխարհաքաղաքական զարգացումները ինչ ընթացքի մեջ կոտրորդեն մեզ: Կարողանա՞նք պահպանել միասնականության գաղափարը. սա է խնդիրը: Սրանից են արտածվելու մեր հետագա հաղթանակները:

Տասնհինգ տարի առաջ բռնակցման անարդար երեւույթի դեմ ծառացած ժողովուրդը հրապարակում կիսում էր հացի վերջին պատառը, եւ դժվար է պատկերացնել, թե անարդարության համընկալումը հանկարծ սոցիալական կերպարանք կառնի՝ հացի պատառներն իրարից խլելու դրսեւորումով: Դա բացառելն էլ, անշուշտ, դժվար է, որովհետեւ կողմնորոշումների փոփոխությունը նաեւ ... այլախոհության հիմք է դառնում:

Սերտենք փետրվարի այս խորհուրդը՝ փայփայելով գալիք սերունդների համար:

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հեռախոսակապի գործող սակագներն անփոփոխ կմնան մինչեւ սեպտեմբերի 1-ը

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշմամբ, երեկ, «Արմենտելի» կողմից մատուցվող ծառայությունների կարգավորվող անցումային սակագների գործողության ժամկետը երկարաձգվել է մինչեւ 2007 թ.-ի սեպտեմբերի 1-ը:

Հիշեցնենք, որ անցյալ տարվա հոկտեմբերի 13-ին «Արմենտելը» արդեն դիմել էր հանձնաժողովին սակագների փոփոխության առաջարկով: Մասնավորապես առաջարկվում էր կտրուկ բարձրացնել լարային հեռախոսակապի սակագները: Բաժանորդավճարը ներկայիս 1100 դրամի փոխարեն առաջարկվում էր սահմանել 3000 դրամ, անվճար խոսակցության ժամանակը՝ 360 րոպեի փոխարեն 280 րոպե, րոպեավճարը 280-րդ րոպեից հետո 6 դրամ եւ այլն: Սակայն այն ժամանակ հանձնաժողովը մերժեց հայցը, որից հետո կողմերը 45-օրյա ժամկետում պետք է բանակցությունների միջոցով համաձայնության գային փոխադարձաբար ընդունելի սակագների ընդունման վերաբերյալ: Այդ համաձայնությունը չկայացավ:

Անցյալ տարվա դեկտեմբերին հանձնաժողովը եւս մեկ անգամ ճնշարկեց այդ հարցը եւ նկատի ունենալով, որ համաձայնությունը դեռ չի կայացվել, անցումային սակագների գործողության ժամկետը երկարաձգեց մինչեւ այս տարվա մարտի 1-ը: Որոշումը պայմանավորված էր նաեւ նրանով, որ այդ երկու նիստերի ընթացքում փոխվեց «Արմենտելի» սեփականատերը՝ հունական OTE-ի փոխարեն՝ ռուսական «Վիմպելկոմը», որի կողմից նշանակված նոր տնօրենը նույնպես դիմել էր հանձնաժողովին անցումային սակագները երկարացնելու խնդրանքով:

Ա. Մ.

Ռոբերտ Քոչարյան. «Թուրքիան պարտավոր է ներողություն խնդրել»

1-ին էջից

- Հայաստանն ինչո՞ւ է մերժում ցեղասպանության հարցում պատմաբանների խառը հանձնախումբ ստեղծելու Թուրքիայի առաջարկը:

- Երկկողմ հարաբերությունների կարգավորումը կառավարությունների գործն է եւ ոչ թե պատմաբանների: Ահա թե ինչու մենք պատրաստ ենք Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատել առանց նախապայմանների, պատրաստ ենք ստեղծել միջկառավարական հանձնաժողով եւ ճնշարկել բոլոր, այդ թվում առավել ցավոտ հարցերը: Եվրոպա աշխարհամասում շատ երկրներ ունեն պատմական կամ տարածքային վեճեր: Դա նրանց չի խանգարում ունենալ բաց սահմաններ, բնականոն հարաբերություններ եւ զուգահեռաբար ճնշարկել առկա խնդիրները: Իրական հարցը հետեւյալն է. Անկարայի իշխանությունները ինչո՞ւ են մերժում երկկողմ բոլոր խնդիրների լուծման նպատակով միջկառավարական հանձնաժողով ստեղծելու գաղափարը:

- Եվրամիությանը Թուրքիայի անդամակցությունը լա՞վ կլիներ Հայաստանի համար:

- ԵՄ-ին անդամակցելու գործընթացը ենթադրում է թուրքական հասարակության վերափոխմանն ուղղված լուրջ բարեփոխումներ: Դա նշանակում է առաջընթաց դեպի ավելի կանխատեսելի, ավելի բաց, փոխհամաձայնությունների հանդեպ ավելի հանդուրժող, սեփական պատմության վերագնահատմանն առավել հակված Թուրքիա: Բացի դրանից, Թուրքիայի անդամակցության դեպքում մենք կունենայինք սահման ԵՄ-ի հետ, ինչը, անշուշտ, դրական կլիներ: Բայց մենք չենք ուզում ԵՄ-ին «առաջիկ» անդամակցություն: Ցմոռանանք, որ բանակցություններ են սկսվել հարեւանի հետ իր սահմանները փակած երկրի հետ, չխոսելով արդեն թուրք-կիպրոսական հարաբերությունների չկարգավորվածության մասին:

- Ինչպիսի՞ լուծում եք ակնկալում հայաբնակ ադրբեջանական տարածք Լեռնային Ղարաբաղի համար, որի անկախացումն եք պահանջում:

- Ամեն ժողովուրդ ունի անկախության բացարձակ իրավունք: Հայտնի չէ դեպք, երբ որեւէ ժողովուրդ փաստական անկախություն ձեռքբերելուց հետո հրաժարված լինի դրանից: Ադրբեջանի տարածքային ամբողջականության մասին խոսելն անհեթեթություն է, քանզի Լեռնային Ղարաբաղն անկախացել է ԽՍՀՄ-ի փլուզման ընթացքում, իրավաբանական անթերի գործընթացի շնորհիվ եւ երբեւէ չի եղել անկախ Ադրբեջանի կազմում: Բանակցությունների նպատակը կարող է լինել միայն հանրաքվեի միջոցով Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչման ժամկետի սահմանումը:

- Ձեր փարիզյան այցը համընկնում է Ֆրանսիայում Հայաստանի տարվան: Գո՞հ եք երկկողմ հարաբերություններից:

- Ֆրանսիայում Հայաստանի տարվա կազմակերպումը մեր երկու երկրների բացառիկ հարաբերությունների վկայությունն է: Կուզենայի ընդգծել Ֆրանսիայի օժանդակությունը եվրոպական կառույցների հետ գործակցության խորացման ոլորտում, նրա ակտիվ միջնորդությունը եւ կառուցողական դերը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում: Ի դեպ, զարգանում են նաեւ մեր տնտեսական հարաբերությունները: Մեր տնտեսության տարբեր ճյուղերում ներկա են ֆրանսիական խոշոր ընկերություններ: Վերջապես, մենք մեծ կարեւորություն ենք տալիս մշակույթի, հետազոտությունների եւ կրթության ասպարեզներում համագործակցելուն: Այսպես, Երեւանի Ֆրանսիական համալսարանը դարձել է մեր երկրի ամենահեղինակավոր բարձրագույն կրթական հաստատություններից մեկը:

«Ֆիգարո»

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԶ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Լրագրողների սենյակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայություն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայություն / հեռ 529353
Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տարով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ
ԸՆԹԱՑԻԿ
www.azg.am www.azgdaily.com www.azgdaily.eu

ՀԺԿ-ն եւ մյուսները՝ հարց-միայնակ

Երբ ընդդիմադիր առաջնորդներից յուրաքանչյուրը, դեմքի խորհրդաւոր արտահայտությամբ, հայտարարում է, թե իր գլխաւորած ուժը միայնակ է գնալու ընտրությունների, հավանաբար իր նշանակալիության եւ ինքնագնահատականի մասին դատում է սեփական կուսակցության համագումարի դահլիճից լսվող ծափերի ուժգնությունից՝ այդ ծափերը թույլ չեն տալիս երկրորդի կամ երրորդի դերում տեսնել սեփական անձը: Անգամ Վազգեն Մանուկյանի ասած երկու-երեք խմբով ընդդիմադիր դաշինքն այսօր կարող է եւ չկայանալ. ըստ որոշ լուրերի՝ համաձայնության եզրեր չի գտնում հենց այն խումբը, որը պետք է ստեղծվեր ԱԺՄ-«Ժառանգություն» հիմքով՝ որպես խմորիչ, հետո գուցեեւ ընդլայնվելով: Եվ որքան էլ անցած շաբաթ ՀԺԿ համագումարում նրա լիդեր Ստեփան Դեմիրճյանն ասում էր, թե իշխանությունը փորձում է պառակտել ընդդիմությանը, դուրս է մղում իրական ընդդիմությանը՝ իր կողմից ղեկավարվող խամաճիկային ընդդիմությանն առաջ մղելով, մեր կարծիքով այս պահին ոչ ոք եւ ոչինչ չի պառակտում ընդդիմությանն այնպես, ինչպես իր իսկ միավորները: Ընդդիմությանը միասնական գոնե երկու ձեւաչափով ընտրությունների գնալուն ոչինչ չի խանգարում, բացի սեփական կուսակիցների ծափերից: Իսկ այն հարակից պատճառները, որոնք հիմնականից (վերը մեր նշած պատճառից) բացի մղում են Ստեփան Դեմիրճյանին եւ նրա ղեկավարած ուժին հայտարարելու, թե ընտրությունների միայնակ են գնալու, եւ համագործակցությունը հավանաբար հնարավոր կլինի միայն ընտրակեղծիքների դեմ պայքարող դեռ չստեղծված կառույցում միայն, մնացել են 2003 թվականի, այսինքն՝ 4 տարի առաջվա անցյալի մեջ: Այսինքն՝ այդ պատճառները հնացել են, իրավիճակն այլ է, ՀԺԿ-ն ինքն էլ, ուրեմն, դեռ 2003 թվականի մեջ է: Իշխանությունն իր կողմից քայլեր արել է՝ ստեղծելով մի նոր քաղաքական ուժ եւ փոփոխություն մտցնելով ժողովրդին, որը որոնելով նոր ուժերի կամ դաշինքների՝ չի գտնելու նրանց եւ խաբվելու է նոր թվացողի գցած ընտրացանցում: Այդ ժամանակ Գալուստ Սահակյանի «երազած ուժեղ» ընդդիմությունը ստիպված է լինելու իր ցիրուցան միավորները հավաքել միայն, իսկ պարտվելու համար սկսելու է մեղադրել բոլորին, բացի իրենից, որ ընտրություններից երկու ամիս առաջ չօգտագործեց բազմիցս փորձված այնպիսի մի գործիք, ինչպիսին դաշինքն է՝ վկան նույն 2003-ը, վկան՝ 1996-ը:

Տեսեք ինչ է ասում Ս. Դեմիրճյանը ի պատասխան «Ազգի» հարցի, թե արդյոք ճակատագրական սխալ չէ՞ այս պահին ընդդիմության ուժերը փոշիացնելն ու միայնակ ընտրությունների գնալը. «Ամորֆ դաշինքներից օգուտ չկա, ոչ էլ հասարակությունը դրանից կշահի: Դաշինք ստեղծելն ի վերջո ինքնանպատակ չէ, պետք է նայել արդյունավետությանը»: Այնուամենայնիվ՝ գոնե պատուհանը բոլորովին չի փակում. «Բայց հարցը փակված չէ», ավելացնում է. այո, այս մի ավելացումը կարող էր փրկության տեղ թողնել այն ուժերի համախմբի համար, որոնցից մեկը ՀԺԿ-ն պիտի լիներ: Այն ուժերը, որոնք չեն կարող զսպել իրենց մեծ սպասումներն ու կրքերը ու չեն պատրաստվում մի բան զիջել, որ ավելի մեծ բանի տեր լինեն՝ նրանց կուլ է տալիս պատմության աղբանոցը: Երեւի ոչ միայն ՀԺԿ-ն, այլեւ ընդդիմության այլ միավորները եւս փոխադարձ վստահության պակաս ունեն, ու նրանցից ամեն մեկը կարող է մյուսի մասին ասել այն, ինչ Դեմիրճյանն էր ասում՝ առանց կոնկրետացնելու ում մասին է խոսքը. «Իրենց ընդդիմադիր համարող որոշ գործիչներ, պայքարելու փոխարեն դասավորի կերպար են ընդունում եւ դասեր տալիս ընդդիմությանը. տեսնում ենք բոցաուչ ելույթներ, որոնց հետեւում են իշխանության հետ գործարքները: Մենք համոզված ենք, որ մեր ժողովուրդը տեսնում է՝ ո՞վ է պայքարում, եւ ո՞վ՝ անձնական հարցեր լուծում»: Բայց հազիվ թե ժողովուրդը բան հասկանա մեր ընդդիմադիր դաշտից, իսկի մենք՝ երկար ժամանակ քաղաքական լրագրությամբ զբաղվողներս բան չենք հասկանում մեր ընդդիմադիրներից շատերի բուն շարժառիթից, խեղճ ժողովուրդ, պատկերացնում ես նրան ընտրությունների օրը, համամասնական քվեաթերթիկը ձեռին, ու մի երեսուն իշխանական եւ ընդդիմադիր կուսակցությունների ցանկում մեկ որոշի ընթացքում իր «միակի ու անկրկնելիի» անունը որոնելիս

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Խորհրդարանի ամբիոնին տիրապետելու համար բավական մեծ փորձ է պետք

Ասում է Գալուստ Սահակյանը

«Ուրբաթ» ակումբում հյուրընկալված ՀՀԿ խորհրդարանական խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանից լրագրողները փորձեցին ճշտել, թե ինչո՞ւ էր «Բարգավաճ Հայաստանի» համագումարին ՀՀԿ-ն ներկայացված առաջին դեմքերով, իսկ Գագիկ Ծառուկյանը չէր ընդունել ՀՀԿ հրավերը եւ չէր եկել ՀՀԿ համագումարին: Պարզվեց, որ ԲՀԿ ներկայացուցիչը եղել է այդ համագումարին, իսկ Ծառուկյանը համագումարի օրը Հայաստանում չի եղել: Ընդհանրապես՝ Գ. Սահակյանը բավական բարեհաճ արտահայտվեց ԲՀԿ-ի մասին, համագումարն էլ շատ նորմալ ու պատշաճ գնահատեց՝ առանց նորաստեղծ ուժերին հասուկ հերոսական պաթոսի: ԲՀԿ քաղխորհրդի՝ առավելաբար ոչ քաղաքական դեմքերի մասին ասաց. «Համ ուզում եք նոր դեմքեր տեսնել, հետո էլ ասում եք՝ ճանաչելի չեն»: Գ. Սահակյանը համաձայն չէր, որ ընդդիմությունը զրկված է եթերից. «Հիմա արդեն իսկ ընդդիմադիր գործիչներն են ավելի շատ հեռուստատեսությամբ հանդես գալիս, քան իշխանականը», եւ պնդեց ավելի վաղ իր ասածը, թե քարոզչության ամենանպատակահարմար ձեւը ժողովրդի հետ կենդանի շփումն է: Խորհրդարանում տեղ գրավելու մտադրություն ունեցող նորեկների մասին էլ ասաց. «Չեն կարողանում ընկալել, որ խորհրդարանը բարդ օրգանիզմ է... խորհրդարանի ամբիոնին տիրապետելու համար բավական մեծ փորձ է պետք՝ շատ դժվար ամբիոն է: Պատգամավոր լինելն անձնազոհություն է, այլ ոչ թե ժամավաճառություն». չասաց, թե ովքեր են այդ դեմքերը, որոնց խոսելը տաղտկալի է, քանի որ վաղ հայերենով են խոսում... «Մտածում են, որ մեր պետությունը մի թիրախ է, եւ ով ցանկանա՝ կկարողանա խոսք ասել...»:

Իսկ Հայաստանը որպես ընտրությունների գնացող երկիր՝ լուրջ փորձությունների առաջ է կանգնած՝ գնալով եւ հասարակության պահանջն է փոխվում, եւ քաղաքական գործիչների գիտակցությունը:

«Այլընտրանքի»՝ այսօր սկսվող հանրահավաքների շարքի մասին. «Ուշացած մկրտություններ են դրանք, թերեւս՝ շատ ուշացած, որովհետեւ խոսք ասելու համար յուրաքանչյուր քաղաքական թիմ պետք է նախապատրաստական ճանապարհ անցնի, որը, կարծում եմ, չկա»:

Ի վերջո՝ 2007 թվականի ընտրությունները գաղափարների, թե՞ փողի միջեւ են: Մեր այս հարցի պատասխանը Գ. Սահակյանը մի փոքր պատկերավոր տվեց. «Պետք չէ մտածել, որ նոր Քրիստոս է ծնվելու կամ նոր գաղափարախոսություն, որ դա լինի գաղափար. եթե քաղաքական ուժը վերընծայտվում է ազգային արժեքներով եւ հիմնավորում է դա՝ ավելի մեծ գաղափարախոսություն դժվար գտնեք», հավանաբար հենց իր ներկայացրած ուժը փորձեց փողից հեռու-գաղափարին մոտիկ դնել Գալուստ Սահակյանը:

Սահմանադրական դատարանն անցած ուրբաթ հակասահմանադրական էր համարել հանրային հեռուստատեսության կողմից ԱԺ հայտարարություններն ու հարցուպատասխանը ԱԺ կանոնակարգով եթեր հեռարձակելու պարտադրանքը, այդպիսով՝ նաեւ ոչ եւս են «խորհրդարանական ժամ» հաղորդաշարի՝ ընդդիմության երեք որոշումները: Թեեւ արդեն ընդդիմությունը բացասաբար է անդրադարձել ՍԴ այս մոտեցմանը, սակայն Գ. Սահակյանի կարծիքով՝ այդպես ազատ լրատվամիջոցների իրավունքն է վերականգնվել. լրատվամիջոցը ազատ եւ ինքն իր գործունեության պատասխանատու պետք է լինի. «Արտահերթ նիստում հնարավոր է ԱԺ-ն քննարկի հարցը՝ ԱԺ կանոնակարգ-օրենքի փոփոխությունների քննարկման ժամանակ», ասաց Գ. Սահակյանը՝ նկատելով, թե հարցը կլուծվի մրցութային կարգով կամ պայմանագիր կնքելով:

ՀՀԿ համամասնական ցուցակի մասին մի բան իմանալու տարբեր հարցերը արդյունքի չբերեցին՝ այն դեռ թղթի վրա չէ: Գործարքները պակաս են լինելու այդ ցուցակում, քանի որ իրենք են որոշել՝ այդքան հետաքրքիր բան չէ խորհրդարանում անընդհատ մարտնչելը: Դժգոհողներ կլինեն այդ ցուցակից. «Դժգոհողներ միշտ էլ լինում են, ամեն մարդ իրեն ավելի բարձր է գնահատում, քան ընկերոջը: Դրա համար էլ կոլեգիալ մարմինն է նման խնդիրները որոշում»:

Մ. Խ.

Հեռուստաթերթերի սակագները դուրս կմղեն որոշ ուժերի

«Առեւտրային գովազդի համար սահմանված սակագներին մոտ երկու անգամ գերազանցող հեռուստաթերթերի սակագների սահմանումն ուղղակի հանցագործություն է, եւ իշխանությունները այդ մեթոդներով ուզում են իրենց ոչ հաճո քաղաքական ուժերին դուրս մղել ընտրադաշտից», երեկ այս կարծիքը հայտնեց «Ազգային ժողովրդավարների դաշինք» (ԱԺԴ) կուսակցության նախագահ, Ազգային ժողովի (ԱԺ) պատգամավոր **Արշակ Սադոյանը:** Նա համոզված է, որ հեռուստաընկերությունների սահմանած գները թանկ են եւ դժվարություններ են ստեղծում նյութապես անբարենպաստ վիճակում գտնվող կուսակցությունների համար, որոնց նույնիսկ չեն օգնի գործարարները, քանի որ վախենում են իշխանությունների ուշադրության կենտրոնում հայտնվելուց եւ իրենց բիզնեսը կորցնելու վտանգի առաջ կանգնելուց: Ի դեմ գործարարների աջակցության մասին: Սադոյանը հայտնեց, որ աջակցության համար ինքը դիմել է գործարարներին եւ հույս ունի, որ ոչ բացահայտ աջակցություն կգտնեն:

Գալով հանդիպման բուն նպատակին՝ Արշակ Սադոյանը ողջունեց ժողովրդավարական երկրների եւ միջազգային կազմակերպությունների պատասխանատվությունը՝ ֆինանսապես աջակցելու Հայաստանին ազատ եւ արդար ընտրություններ անցկացնելու գործում: Պատգամավորը ցանկություն հայտնեց, հետո էլ հիմնավորեց, որ ընտրությունների անցկացման համար մեր երկրին տրամադրված 6,5 մլն դոլարից մեկ միլիոնը պետք է տրամադրել քաղաքական ուժերին (ի դեմ, ընդդիմադիր եւ ոչ ընդդիմադիր) որեւէ հեռուստաընկերությամբ օրական մեկ եթերաժամ վարձակալելու համար: Նա նաեւ հայտնեց, որ իրենք դեռեւս ամիսներ առաջ են նման ծրագիր ներկայացրել եւ ցավոք, մինչ այսօր իրենց առաջարկը մնացել է անարձագանք:

«Եթե առաջիկա տասը օրերին արձագանք չեղավ մեր առաջարկին, մենք դիմելու ենք այդ միջազգային կազմակերպությունների երկրներին՝ ասելով, որ մեր իշխանությունները երկակի խաղեր են խաղում», ժամանակ տվեց ԱԺԴ ղեկավարը: **«Ազգի»** հարցին, թե ձեզնից բացի ուրիշ որ քաղաքական ուժերը նման մտահոգություն ունեն եւ ձեր առաջարկին էլ ովքեր են միացել, Ա. Սադոյանը պատասխանեց, որ գրեթե բոլոր ընդդիմադիր կուսակցությունները կմիանան իրենց հայտարարությանը:

ԳՈՌԾԸ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Քյոլն- Երեւան-Քյոլն՝ օդային հաղորդակցության նոր հասցե

Մարտի 29-ից Հայաստանի ամենամեծ օդանավային ընկերությունը՝ «Արմավիան» կանոնավոր՝ շաբաթական մեկ չվերթ է կատարելու Քյոլն-Բոնն օդանավակայանից Երեւան եւ հակառակը, տեղեկացնում է Քյոլն-Բոնն օդանավակայանի մամլո գրասենյակը:

Աերբուս A-320-ով թռիչքը հինգշաբթի Երեւանից կկայանա ժամը 6.50-ին, Քյոլն կժամանի 8.30-ին: Հետադարձ թռիչքը՝ ժամը 11-ին, վայրէջք Երեւանում՝ 17.55-ին տեղական ժամանակով:

Սա օդային միակ ուղիղ կապն է Հայաստանի եւ Հյուսիս Հռենոս Վեստֆալիա երկրամասի միջեւ: Հիշեցնենք, որ Գերմանիայում հայերն ամենամեծ համայնքը հենց Քյոլն քաղաքում են ձեւավորել:

Մ. Հ., Գերմանիա

«Իրավունք» թերթի լույսընծայումը դադարեցվել է

1-ին էջից

«Մենք ուղղակի որեւէ հնարավորություն չունենք այս պահին աղահովելու մեր աշխատակիցների ռեալ անվտանգությունը, իսկ նրանց զգալի մասը կանայք են: Մենք չենք կարող այդ մարդկանց դնել այդպիսի ռիսկի տակ», ասաց նա: Թերթի աշխատանքի դադարեցման որոշումը երեկ խմբագիրը հայտնել է աշխատակիցներին, որոնք էլ առանց աշխատանքը սկսելու գնացել են տուն. «Ճիշտ է, բոլորը պատրաստ էին այդպիսի վտանգի տակ աշխատել: Ես շնորհակալ եմ նրանց մարտական կեցվածքի համար, բայց ամեն դեպքում չեմ կարող թույլ տալ, որ նրանք ենթարկվեն ռեալ վտանգների»: «Այսօր է եղել վերջին զանգը՝ ամենավերջին սպառնալիքներ փոխանցելով մեր թերթի կանանց հասցեին», ասաց գլխավոր խմբագիրը՝ պատասխանելով մեր հարցին, թե երբ է եղել վերջին զանգը եւ ինչ է ասվել:

Բացի այդ, թերթի աշխատանքի խաթարմանը «նպաստել է» մեկ այլ հանգամանք եւս: Ինչպես հայտնեց «Իրավունքի» գլխավոր խմբագիրը, արդեն երկու շաբաթ փաստացի կալանք է դրված թերթի հաշվեհամարի վրա: Թերթի հետ գործարքներ կատարող «Հայէկոնոմբանկը» թերթի հաշվեհամարի վրա կալանք դնելու վերաբերյալ որեւէ հիմնավոր պատճառաբանություն չի արել: «Ասել են՝ այն կարգը, որով մինչ այժմ գումար էիք ստանում, հիմա չեք կարող այդ կարգով գումար ստանալ: Ընդամենը դա՝ չնայած որեւէ մարմին պատշաճաչափ կալանք չի դրել, եւ ինչ-որ մեկի զանգով է դա արվել», համոզված է Հ. Գալաջյանը: Նա վստահեցրեց, որ հարձակման է ենթարկվել նաեւ իր անձնական էլեկտրոնային հասցեն:

Հովհաննես Գալաջյանը հույս հայտնեց, որ ամենայն հավանականությամբ իրենք կկարողանան հրատարակել թերթի առաջիկա՝ ուրբաթ օրվա համարը: «Այսինքն երկու օրում կարողանալո՞ւ եք լուծել աշխատակազմի անվտանգության հարցերը» մեր հարցին Հովհաննես Գալաջյանը պատասխանեց. «Ամեն ինչ անելու ենք այս երկու օրում անվտանգության հարցերը լուծելու համար: Փաստորեն մեր թերթը ռազմական իրավիճակում է, մեր դեմ պատերազմ է սանձազերծվել»: Նա ընդգծեց, որ բանակցում են մի շարք մարդկանց հետ, բայց չցանկացավ ավելին հայտնել՝ անգամ այն, թե արդյոք քաղաքական ուժերի հետ են բանակցում: Վերջում գլխավոր խմբագիրը չբացառեց, որ թերթի նոր համարը հրատարակվի նոր անվամբ:

Հայկ Բաբոխանյանը հայտարարել է նաեւ, որ իրենք մեծ ակնկալիք են նախապատրաստում: Ինչ վերաբերում է Հրանտ Խաչատրյանին, ապա Հ. Բաբոխանյանը նրան առաջարկել է գալ փետրվարի 24-ին կայանալիք կուսակցության 19-րդ համագումարին եւ քվեարկել կուսակցության անդամների առաջ՝ առանց դատարան դիմելու:

Մարդասպանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում

«Ազգը» տեղեկացրել էր փետրվարի 15-ին Տերյան փողոցի 105/1 հասցեում գտնվող «Ռիլֆս» դիսկո-ակումբում տեղի ունեցած այսպես կոչվող «ռազբորկայի» մասին, որի հետեւանքով հրազենից սպանված վնասվածքներից տեղում մահացել էին Արսաբ Համբարձումյանը եւ Մհեր Պողոսյանը: Իսկ երկու այլ տուժածներ տեղափոխվել են հիվանդանոց:

Փետրվարի 19-ին գլխ. դատախազությունը լրացուցիչ մանրամասներ է հայտնում՝ 03.45-ի սահմաններում, դիսկո ակումբի սրահում Մ. Պողոսյանի եւ Ա. Համբարձումյանի (սպանվածներ) հետ վիճաբանել է ՀՀ քաղաքացի Վ. Գետրգյանը: Այնուհետեւ քաշքշոցը տեղափոխվել է ակումբի տնօրենի աշխատասենյակին հարող հասվածը, որ նաեւ ծառայողական մուտք է: Այդ ընթացքում Վ. Գետրգյանն իր մոտ օրինական հիմքերով գտնվող «Վիկինգ» տեսակի 9 մմ տրամաչափի ատրճանակից մի քանի անգամ կրակել է սպանելու դիտավորությամբ: Դեպքից հետո Վ. Գետրգյանը դիմել է փախուստի: Ջեռք բերված աղացույցների հիման վրա 17.02.2007 թ. որոշում է կայացվել Վ. Գետրգյանին որպես մեղադրյալի ներգրավելու եւ նրան ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 6-րդ կետերով մեղադրանք առաջադրելու մասին: Նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Նախաքննությունը շարունակվում է:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐԿԱՐՅԱՆ

ԱԶԳ

Մարտադաշտ

Կովկասյան էթնական խճանկար

Մոսկվայում վերացնում են էթնական աշխարհի «հին ֆորմացիայի» գեներալներին՝ տարփողում են տեղի լրատվական միջոցները: Սկզբում սպանեցին գողացված ավտոմեքենաների տուկան վերահսկող հայ էթնական հեղինակությանը: Դան հետեւեց վրացի օրենքով գողի դեմ կատարված մահափորձը: Իսկ օրերս գնդակահարվեց հայտնի աբխազ բանդիտը: Իսկական կովկասյան էթնական խճանկար ռուսաց հողում: Գուցե սրվե՞լ է էթնական ազդեցության ոլորտների վերաբաշխման գործընթացը Ռուսաստանում: Այս հարցով սկսվեց մեր հարցազրույցը Ռուսաստանի ներքին գործերի նախարարության պաշտոնաթող գնդապետ, անվտանգության հարցերով Ռուսաստանի հայերի միության նախագահի խորհրդական ԳԱՌՆԻԿ ՈՍԿԱՆՅԱՆԻ հետ:

- «Դեմոկրատիայի» պայմաններում ձեւավորված բանդիտները զուրկ են ամեն տեսակ պայմանականություններից եւ հակասության մեջ են խորհրդային «կոփվածի» օրենքով գողերի հետ, նրանց համարում են չափից դուրս պահպանողական եւ գերի՝ որոշակի գողական հասկացությունների: Եվ երբ ազդեցության ոլորտների բաշխման հարցում բախվում են նրանց շահերը, այդ նորաթուխ գողերը բնավ էլ չեն խորհում գործելու ուժի դիրքից եւ զենքի միջոցով վերացնելու ավագ «գործընկերներին»:

Բացի այդ, հին սերնդի օրենքով գողերը հաճախ են իրենց վրա վերցնում «հաշտարար դատավորի» դերը զանազան կոնֆլիկտային իրավիճակներում, եւ հնարավոր է, որ «տուժող կողմը, համարելով նրանց վճիռը անարդար, վրեժխնդիր լինի:

- Իսկ չի՞ կարող, որ նրանց վերացնում են սլավոնական ազգության բանդիտները:

- Դա էլ չի կարելի բացառել, թեեւ էթնական աշխարհում ազգային գործոնը էական չէ: Իսկ եթե ուզում եք իմանալ, այդ ես բնավ էլ չեմ զարմանա, եթե պարզվի, որ նրանց շարից հանել են կովկասցի հանցագործները:

- Ինչո՞ւ օրենքով գողեր կան այժմ Ռուսաստանում:

- Դժվար է ասել, որովհետեւ կան «իսկական» օրենքով գողեր, կան այնպիսիները, որոնք կրում են այդ «կոչումը», բայց շոշափելի ազդեցություն չունեն ինչպես էթնական, այնպես էլ սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա: Հանդիպում են նաեւ ինքնակալ գողեր: Փորձագետները գտնում են, որ առավել ազդեցիկ օրենքով գողերի թիվը հասնում է մոտ 200-ի: Գործում են 450-ից ավելի կազմակերպված հանցախմբեր՝ մոտ 12000 անդամով:

- Իսկ օրենքով գողերի մեջ տակավին ուժե՞ղ է կովկասյան գործոնը:

- Տավոլ, գերիշխում են վրացիներն ու հայերը: Հիշատակված սպանությունները եւս բնորոշում են այդ փաստը:

- Հաճախ կարելի է լսել, որ եթե միլիցիան գիտի բոլոր օրենքով գողերին, ապա ինչու նրանց պատասխանատվության չի ենթարկում կամ ծայրահեղ դեպքում ֆիզիկապես ոչնչացնում:

- Գիտեմ, ինչպես ասվեց, գողական աշխարհն էլ է փոփոխությունների ենթարկվում եւ հարմարվում նոր պայմաններին: Ներկայում, օրինակ, վերացել են խմբակային փոխադարձ արյունոտ բախումները ավտոմատների ու նռնակների օգնությամբ: Այդ հանցախմբերն ու հատկապես դրանց պարագլուխները ակտիվորեն խցկվում են բիզնեսի մեջ, ընդսմին միշտ չէ, որ օգտագործում են զուտ էթնական միջոցները: Այդ պատճառով էլ շատ դժվար է էթնական պատասխանատվության ենթարկել հանցախմբի լիդերներին: Նրանք անմիջականորեն չեն մասնակցում հանցագործություններին, կրակից շատանակ են հանում ուրիշի ձեռքով: Ի դեպ, ինչքան ինձ է հայտնի, այս տարվանից միլիցիայի գործունեության արդյունավետությունը գնահատվելու է ոչ միայն էթնական կազմավորումների հանցագործությունների բացահայտման, այլեւ այդ հանցախմբերի վերացման ու դրանց լիդերների ու ակտիվ մասնակիցների մեկուսացման չափանիշներով: Սա նոր մոտեցում է եւ, համոզված եմ, կտա իր արդյունքները:

- Դուք ասացիք, որ գողերի նոր սերունդը շատ ավելի ցինիկ է ու անողոք: Իսկ «աշխարհայացքային» ի՞նչ էվոլյուցիայի են ենթարկվում օրենքով գողերը:

- Խորհրդային տարիներին դժվար էր օրենքով գողին պատկերացնել որպես «պարկեշտ» ամուսին ու հայր: Այսօր դա սովորական երեւույթ է: Կամ նա չգիտի աշխատեր: Իսկ հիմա նա կարող է ղեկավարել օրինականորեն ձեւակերպված ապակառելի ընկերություն եւ նույնիսկ, թող տարօրինակ չթվա, հանդես գալ երկրում կարգուկանոնի հաստատման պահանջներով:

- Ռուսական մամուլում միշտ չեն հաղորդումները կազմակերպված հանցախմբերի ու զանազան ահաբեկչական, ծայրահեղական, ազգայնական կազմակերպությունների սերտաճման մասին: Ինչքանո՞վ է դա իրական:

- Ըստ էության արմատական քաղաքական շատ ուժերի գործողություններում շոշափելի է նաեւ էթնական տարրը, եւ շահերի ընդհանրության դեպքում նրանք կարող են միահյուսվել: Սա խիստ վտանգավոր երեւույթ է հասարակության համար եւ մեծ անհանգստություն է պատճառում Ռուսաստանի իրավապահ մարմիններին: Պատահական չէ, որ ՌԴ ՆԳՆ-ում համապատասխան ստորաբաժանումը այդպես էլ կոչվում է՝ կազմակերպված հանցավորության եւ ահաբեկչության դեմ պայքարի դեպարտամենտ: Նրանք կարող են «համագործակցել» զենքի առքուվաճառքի ձեռքբերման, պատվիրված սպանությունների, մարդկանց առեւանգման, ինֆորմացիայի փոխանակման եւ այլ բնագավառներում:

- Պրն Ոսկանյան, ինչքանով է դուք չէ՞, երբ էթնական տարրը դառնում է նույնիսկ հասարակական կազմակերպության ղեկավար:

- Դրա օրինակը Ռուսաստանի հայերս էլ ունեցանք հանձին Սերժ Ջիլավյանի:

- Այդ պատճառով էլ ծնունդ է առնում մաֆիայի անհաղթության առասպելը: Ես կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարին մասնակցել եմ նրա ամենաբանր տարիներին՝ 90-ական թվականներին: Եվ եթե համեմատենք այսօրվա իրավիճակի հետ, կարող եմ ասել, որ տարբերությունը հսկայական է: Համենայն դեպս Ռուսաստանում էթնական հանցախմբերի գործունեությունը վերահսկվում է: Դա նշանակում է, որ այդ աշխատանքը ճիշտ կազմակերպելու դեպքում կարելի է հասնել դրական արդյունքի: Այսօր արդեն այստեղ մարդկանց ականջը չեն սղոցում «Տամբովսկի», «Օրեխովո-Մեդվեդկովսկի», «Ռյազանսկի» եւ մի շարք այլ առնախում էթնական կազմավորումների անունները: Մաֆիայի վերացումը միայն իրավապահ մարմինների գործը չէ, դրա համար պետք է առաջին հերթին դրսեւորել, ինչքան էլ անսովոր հնչի, քաղաքական կամք:

Հարցազրույցը վարեց

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Մոսկվա

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՄԱՄՈՒԼ

Թուրքական զգացմունքներն ավելի կարեւոր են, քան ցեղասպանությունը

Ամերիկահայերը ավելի խորն են վիրավորված Հայոց ցեղասպանության հանդեպ Բուշի վարչակարգի, քան դրա ճանաչումը մերժելու թուրքերի վերաբերմունքից, գրում է «Կալիֆոռնիա կուրիեր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր Հարություն Սասունյանը իր փետրվարի 15-ի հոդվածում:

Նրանք ցանկանում են իմանալ, շարունակում է նա, թե ինչու այս մեծ երկրի առաջնորդներն առավել շահագրգռված են հածոյանալու անվստահելի մի օտար պետության, քան հայկական ծագումով իրենց քաղաքացիներին, որոնց նախնիները զոհ են գնացել այդ ցեղասպանությանը:

Ապա Բուշի վարչակարգի մտածելակերպին ավելի մոտիկից ծանոթանալու նպատակով Սասունյանը մեջբերում է հետվածներ բարձրաստիճան ամերիկացի պաշտոնյաների մամուլի ասուլիսներից: Թուրքիայի արտգործնախարար Աբդուլլահ Գյուլի Վաշինգտոն ժամանումից առաջ ԱՄՆ պետքարտուղարի օգնականի տեղակալ Մեթյու Բրայզան փետրվարի 1-ին պատասխանելով թուրք լրագրողների հարցերին ասել է.

«Մեր դիրքորոշումը (Կոնգրեսում ներկայացված Հայոց ցեղասպանության բանաձեւերին) մնում է անփոփոխ: Չենք կարծում, որ քաղաքական կամ դիվանագիտական հայտարարությունները հարմար միջոց են 1915 թվականի ահավոր իրադարձությունների մեկնաբանման հարցը լուծելու համար: Բոլորս, համոզված եմ, միակարծիք ենք այն հարցում, որ կատարվածը ահավոր ողբերգություն էր: Դա ահավոր է: Բայց հարցն ունի այնքան շատ կողմեր, տարաբնույթ ծալքեր եւ տեսակետներ, որ քաղաքական գործիչները սոսկ սահմանումներ տալով դրան՝ չեն կարող ապահովել արդարությունը: Մենք կցանկանայինք, որ հասարակ մարդիկ, պրոֆեսորներ, փիլիսոփաներ եւ պատմաբաններ հնարավորություն ստանային շարունակական եւ անկողմնակալ բանավեճ ծավալելու կատարվածի բուն պատճառների մասին, ինչը թույլ կտար հաշտվել իրենց անցյալի եւ միմյանց հետ: Դուք չեք կարող դրան հասնել քաղաքական որոշումների ճանապարհով: Հարաբերությունների կարգավորման համար Թուրքիայի եւ Հայաստանի կառավարությունները խոսում են նաեւ պատմաբանների հանձնաժողովներ ստեղծելու եւ դիվանագիտական բանավեճը անցկացնելու մասին: Հրանտ Դինքի ողբերգական սպանությունից հետո Թուրքիայի քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածի շուրջը բանավեճերն ավելի են սրվել: Ելնելով քաղաքական իրավիճակից՝ չափազանց բարդ է թուրքական կառավարության համար չեղյալ համարել այդ հոդվածը: Մենք հասկանում ենք դա: Բայց մեր կարծիքով հիանալի կլիներ, եթե 301-րդ հոդվածի հարցը հանվեր օրակարգից, քանի որ դա ոչիք է կամ պատճառ, որ Թուրքիայից դուրս աղտոտները քննադատեն Թուրքիային: Մենք այստեղ Թուրքիայի բարեկամն ենք: Հույս ունենք, որ Թուրքիան մեզ համարում է աշխարհում իր ամենամերձավոր բարեկամներից մեկը: Այս ոգով մենք ցանկանում ենք անել ամեն հնարավորը Թուրքիայում հանդուրժողականության ավանդույթներին եւ բոլոր էթնիկական եւ կրոնական համայնքների համագործակցությանն աջակցելու համար: Մենք ցանկանում ենք, որ աշխարհն ու հատկապես Եվրոպան հասկանան, թե ինչ ուժեղ ավանդույթներ ունի Թուրքիան: 301-րդ հոդվածը դեռեւս դժվարացնում է այդ հարցը, քանի որ մագնիսական ազդեցություն ունի Եվրոպայի մտածելակերպի վրա եւ սխիզում է բոլորին կենտրոնանալ այդ հարցի եւ ոչ թե Թուրքիայի ողջ պատմության վրա»:

Իսկ Գյուլի այցելության ավարտին ԱՄՆ-ի պետքարտուղարության խորհրդական Դենիել Ֆրիդը փետրվարի 8-ին թուրք լրագրողներին ասել է. «Մենք ընդգծեցինք բանաձեւը, որ ներկայացվել է հայ-թուրքական հարաբերությունների, հայերի կողմից Հայոց ցեղասպանություն կոչված հարցի վերաբերյալ: Այդ բանաձեւը չի վայելում վարչակազմի պաշտպանությունը: Վարչակազմը դեմ է դրան: Մենք դա հասկացրել ենք եւ շարունակելու ենք հասկացնել: Ավելի ուշ, այսօր, ես հանդիպելու եմ Կոնգրեսի կարեւոր անձնավորությունների հետ՝ ընդգծելու այդ հարցը, եւ ակնկալում եմ, որ մեր ջանքերը այդ առնչությամբ կշարունակվեն: Ենթադրում եմ, որ ավելի բարձր պաշտոնյաներ եւս կընդգծեն այդ հարցը: Մեր փաստարկն այն է, որ նման բանաձեւը առանց հիմնավորված պատճառի վնասելու է ամերիկա-թուրքական հարաբերությունները: Այն չի նպաստելու թուրք-հայկական երկխոսությանը եւ չի արագացնելու իր սեփական անցյալը դիմագրավելու Թուրքիայի ջանքերը: Ես միշտ այն կարծիքին եմ եղել, որ ժողովրդավարական երկրներում պարտավոր են դիմագրավել իրենց պատմության սեւ էջերը: Մեր կարծիքով Թուրքիան իրականացնում է այդ գործընթացը: 1915-ի սպանությունները սարսափելի էին: Դրանց պետք է մոտենալ ազնվորեն եւ առանց նախապաշարմունքների (տաբուների), բայց ոչ նրա համար, որ հայերն են այդպես պահանջում, այլ հենց թուրքերի իսկ շահերից ելնելով: Կարծում եմ, այս գործընթացը իրականացվում է Թուրքիայում: Ցավալի է: Նաեւ զգացմունքային... այնպես որ Կոնգրեսում իմ փաստարկը լինելու է այն, որ մենք պետք է աջակցենք, որ այս բնական ցավոտ գործընթացը Թուրքիայում ինքնաբերաբար իրականացվի, առանց դրսի ճնշումների: Չեմ կարծում, որ բոլորը համաձայնեն ինձ հետ, բայց ես կարելիս անելու եմ: Եվ ոչ միայն ես... Փելոսի-Գյուլ հանդիպումը մեր կարծիքով լավ գաղափար էր: Բայց բանակը միշտ չէ, որ լսում է վարչակազմի խորհուրդները: Նա այլ կուսակցության ներկայացուցիչ է: Հույս ունեմ, որ Թուրքիան ինքը, իր իսկ շահերից ելնելով ձեռք է մեկնելու Հայաստանին եւ հայերին: Մեծ երկրները չեն վախենում դիմագրավելու իրենց պատմության սեւ էջերը»:

Ինչպես երեւում է մեջբերումներից, երկու անձնավորություններն էլ ավելի մտահոգված են չվիրավորելու Թուրքիայի զգացմունքները, քան մի ամբողջ ազգի, որը զոհ է գնացել նրա քաղաքականությանը: Նրանք մոռանում են, որ այս բանաձեւը ավելի Հայոց ցեղասպանության վերաբերյալ Ամերիկայի նախկինում հնչեցրած ճանաչումների վերահաստատումն է, քան ճնշում Թուրքիայի վրա: Ժամանակն է, որ Մ. Նահանգների այս բարձրաստիճան պաշտոնյաները դադարեն խաղալ քաղաքական անամոթ խաղեր եւ սկսեն իրերն իրենց իսկական անունով կոչել, եզրակացնում է իր հոդվածում Հարութ Սասունյանը:

Կոնգրեսում ցեղասպանության ճանաչումը նոր «արյան բաղնիք» կառաջացնի Իրաքում

Բրիտանական «Գարդիան» թերթը փետրվարի 16-ի համարում հոդված է նվիրել Մ. Նահանգների Կոնգրեսում Հայոց ցեղասպանության բանաձեւի հավանական ճանաչման եւ ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններին, հոդվածագիր Սայմոն Տիսդալի գրչով: Խոսելով այդ բանաձեւի ընդունումը ձախողելու առաջելությամբ օրերս Վաշինգտոն մեկնած թուրք պաշտոնաստարների, մեղմ ասած, անհաջող միջամտությունների մասին, հոդվածագիրը մեջբերումներ է կատարել թուրք ճանաչված լրագրողների՝ Մեհմեդ Ալի Բիրանդի («Թրիհ դեյլի նյուզ», Անվի Այդինբաշի («Սաբահ») խոսքերից, որոնք թուրքական կառավարության խոսափողի դեր սանձնելով՝ «ցույց են տալիս» այն վտանգները, որոնք սպառնում են Թուրքիա-ԱՄՆ հարաբերություններին հատկապես Իրաքյան ճակատում: Բանաձեւի ընդունման դեպքում, ասում են թուրք լրագրողները, «Գարդիանի» հաղորդմամբ, թուրքական զորքերը հատվածներ կհատեն ոչ միայն հարավ-արեւելյան Թուրքիայում ՔԿՔ-ի զինված խմբավորումներին, այլեւ Իրաքյան Քուրդիստանում, այդպիսով ձախողելով Իրաքը կայունացնելու ամերիկյան ջանքերը: Բանաձեւի ընդունումը փաստորեն կազատի Անկարային ամերիկյան տեսակետներն անտեսելու հարցում եւ նոր «արյան բաղնիք» կառաջացնի Իրաքում:

Հարց ու պատասխան

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԱՆՈՒԿ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ՝ «ԱԶԳԻ» ԿԱՅՔԷՋՈՒՄ ՏՐՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Միխայել, Երեւան

- Պարոն Վարդանյան, «Երեւան» կինոթատրոնի հետեւի հատվածում ունենք 340 քմ հողամաս, որից տարբեր պատճառներով մնացել է 280 քմ-ն: Մեր հարեւանների 25-ն է, որը պետք է լիներ սեփական տուն: Մեզ ասել են, որ պետությունը պետք է այդ տարածքը գնի: Խնդրում եմ ասեք, թե ինչ է լինելու այդ մասը: Շնորհակալ եմ:

- Սուտենյանց 25 հասցեում գտվող անշարժ գույքը Երեւանի քաղաքապետի 2002 թ. մարտի 15-ի թիվ 414 որոշմամբ ճշտվել է, հողամասի սահմանները եւ 340 քմ տրամադրվել է վարձակալության իրավունքով: Այնուհետեւ գույքը օտարվել է եւ նոր սեփականատիրոջ անունով 04.07.2002 թ.-ին սացել պետական գրանցում: Տարբեր դատական այցելությունների կայացրած կանություն հանդիսացող հողամասերի օգտագործման, կառուցապատման իրավունքի տրամադրման գործառույթները, մեկնարկային գները: Որոշակիորեն համաձայն լինելով Ձեր նկատառումներին, նաեւ տարիների մեր ուսումնասիրությունից ելնելով, պարզ է, որ նշված գործառույթները տարեցտարի կատարելագործման անհրաժեշտություն ունեն: Մասնավորապես փոփոխություններ կատարվեցին մեկնարկային գների, լոտերի, օտարվող հողամասերի նվազագույն եւ առավելագույն չափերի սահմանման հարցերում, (մասնավորապես գյուղատնտեսական հողերի նկատմամբ սահմանափակում դրվեց մինչեւ 20 հեկտար), որը մատչելի դարձրեց համայնքի բնակիչների մասնակցությունը աճուրդներին: Սահմանվեց կոնկրետ մամուլի միջոցը՝ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթը, որը հնարավորություն տվեց բարձրացնելու քաղաքացիների տեղեկացվածությունը աճուրդների վերաբերյալ: Սահմանվեց նաեւ, որ օտարվող հողամասի բոլոր տվյալները, այդ թվում՝ օտարվող հողամասի նախագիծը, ճարտարապետահատակագծային առաջադրանքը ձեռք բերելուց հետո պետք է իրականացվի քաղաքաշինական գործունեություն՝ առանց քաշքշուկների: ՀՀ Նախագահի դիտողության հիման վրա, մասնավորապես Երեւան քաղաքում էապես բարձրացվեց հրապարակայնությունը (ինտերնետային կայք, հեռուստահեռարձակում), զգալիորեն փոխվեցին նաեւ մեկնարկային գները:

Այս ամենին կարող եք հետաքրքրված լինել նաեւ դուք, հարգելի քաղաքացիներ՝ ի դեպ ոչ միայն աճուրդների անցկացման, այլ նաեւ դրանց վերջնական արդյունքի ձեւակերպման պետական գրանցման առումով: Ինչ վերաբերում է հարցի երկրորդ մասին, նշեմ, որ որոշ ազխասակիցներ կարգապահական տույժի ենթարկվեցին, հեռացվեցին աշխատանքից: Համաձայն եմ, որ դա էապես նպաստում է վերահսկողության բարելավմանը, ինչպես նաեւ սպասարկման որակի լավացմանը: Դա իհարկե, կնպաստի թափանցիկության բարձրացմանը, բայց համայնքներում դա կապված է որոշակի ֆինանսական խնդիրների հետ: Կապված ֆինանսական ռեսուրսների եւ համակարգում իրականացվող ավտոմատացման գործընթացների հետ՝ մարզային սնորաբաժանումներում եւս տեսախցիկներ կտեղադրվեն:

Կարեն Վարդանյան, Երեւան

- Եվս մեկ հարց, այնուամենայնիվ, ինչ են ուզում Կոզեռնի բնակիչները:

- Կոզեռնի բնակիչները տարբեր պատճառներով չեն ունեցել իրավահաստատող փաստաթղթեր: Երեւանի քաղաքապետի 28.09.06թ. թիվ 1550-Ա որոշմամբ, 110 տների նկատմամբ վերականգնվել են իրավունքները: Այնուհետեւ, ՀՀ օրենսդրության հետ որոշակի անհամապատասխանության պատճառով, 15.12.06թ. թիվ 2681-Ա որոշմամբ 110-ը դարձավ 97: Այդ 97-ից 10-ի մասով առկա են օրենսդրական խնդիրներ: Դրանք ինքնակամ կառույցներ են, որոնց խնդիրը պետք է կարգավորվի ոչ թե իրավունքների վերականգնմամբ, այլ ՀՀ կառավարության 18.05.06թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման եւ տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 912-Ն որոշմամբ: Կադաստրի պետական կոմիտեի տարածային սնորաբաժանում դիմելու փոխարեն, Կոզեռնի բնակիչները անհասկանալի պատճառներով հարցը փորձեցին կարգավորել տարբեր առիթներով դժգոհություններ արտահայտելով: Մինչդեռ մեզ դիմածներից 71-ը սացել են վկայականներն առանց ժամկետների խախտման, աշխատանքային երկու օրվա ընթացքում: Ժամկետային խախտման որեւէ դեպք չի արձանագրվել: Դժգոհ մնացել են ընդամենը այն 10 բնակիչները, ովքեր ունեն ինքնակամ կառույցներ, ըստ այդմ, չեն կարող ստանալ պետական գրանցում: Նրանց խնդիրները պետք է կարգավորվեն Երեւանի քաղաքապետարանում: 7-ը դեռ չեն դիմել, 9-ի գործերն էլ տարբեր պատճառներով (գլխավոր հատակագծերի բացակայություն) քաղաքապետարանում են: Մենք լավ ենք հասկանում բնակիչների մտահոգությունը գույքի հետ կապված, սակայն նրանց խնդիրները, այնուամենայնիվ, պետք է լուծում ստանան օրենքի շրջանակներում:

Կարեն Վարդանյան, Երեւան

- Հարգելի Մանուկ Վարդանյան, իրացման գոտիներում ինչո՞ւ գրանցումներ չեք կատարում: Այդ ինչ խորհրդի որոշում եք պատրաստված քարե պարիսպները քանդի: Դրանք օրինական են, թե՞ անօրինական:

- «Սեւան» ազգային պարկի հողահատկացումներն իրականացվում են «Սեւան» ազգային պարկի կողմից համայնքի վարչական սահմաններում, համաձայնեցնելով համայնքի ղեկավարի, իսկ վարչական սահմաններից դուրս՝ մարզպետի հետ ըստ հողամասի գտնվելու վայրի, կամ համայնքի ղեկավարի ու մարզպետի կողմից համաձայնեցնելով «Սեւան» ազգային պարկի հետ, ազգային պարկի հողերի հողօգտագործման եւ գոտեւորման սխեմայի եւ ՀՀ կառավարության 13.05.04թ. թիվ 766-Ն որոշման հիման վրա: Նկատի ունենալով, որ տարածքում բացակայում էր հողօգտագործումը կանոնակարգող փաստաթուղթը, 100-ից ավելի պայմանագրեր կադաստրում չեն գրանցվել: Ներկայումս ՀՀ կառավարությունում քննարկվել եւ հաստատվել է «Սեւան» ազգային պարկի կառավարման պլանը (հողօգտագործման եւ գոտեւորման սխեման), որը ուժի մեջ մտնելուց հետո «Սեւան» ազգային պարկի նշված պայմանագրերը համապատասխանեցնելով կառավարման պլանի պահանջներին՝ դրանք կարող են ստանալ պետական գրանցում: Ինչ վերաբերում է դրանց նկատմամբ կառուցապատման եւ ապօրինի հողօգտագործման խնդիրներին, ապա դա պետք է իրականացվի «Սեւան» ազգային պարկի եւ համայնքի ղեկավարի ու մարզպետի կողմից՝ ըստ հողամասի գտնվելու վայրի: Սեւանի այդ հատվածում առկա են թե՛ օրինական, թե՛ անօրինական շինություններ:

Սերգեյ Գասպարյան, Երեւան

- Հարգելի պարոն Վարդանյան, ձեռք եմ բերել բնակարան նոր կառուցվող շենքում: Շինարարությունը դեռ ավարտված չէ, բայց գումարը վճարել եմ: Ինչ փաստաթուղթ պետք է ունենամ, կարո՞ղ է ինձ խաբեն: Շնորհակալություն:

- Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224. հոդվածի 4-րդ մասի՝ կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերում բնակարան կամ ոչ բնակելի տարածք ձեռք բերելիս սեփականության իրավունքով ձեռք է բերվում հողամասի համապատասխան բաժնային մասը, իսկ նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերում հողամասի, բնակարանի եւ ընդհանուր օգտագործման տարածքների նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման կարգը սահմանվում է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածով սահմանված է, որ կառուցվող ստորաբաժանված շենքերի համար կադաստրային գործում պետք է լինեն սահմանված կարգով հաստատված նախագիծը եւ շինարարության թույլտվությունը:

Սահմանված կարգով հաստատված նախագծում բնակարանները եւ անշարժ գույքի այլ առանձին միավորները ծածկագրվում են (համարակալվում), որոնք կազմված են հողամասի ծածկագրի հետ: Պետական գրանցումից հետո սեփականատիրոջը տրամադրվում է անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական, որտեղ նշվում է հողի բաժնային սեփականության իրավունքը, եւ վկայականի հետ միասին տրամադրվում է սահմանված կարգով հաստատված նախագծով՝ անշարժ գույքի առանձին միավորների հատակագիծը:

Սահմանված կարգով շենքի, շինության շահագործման ակտի ձեւակերպումից հետո սեփականատիրոջ դիմումի հիման վրա գրանցվում են հողամասի բաժնային սեփականության իրավունքը, ստորաբաժանված շենքում ձեռք բերված բնակարանը կամ անշարժ գույքի առանձին միավորները եւ ստորաբաժանված շենքում ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով նախատեսված տարածքները:

Համո Արմավիրցի, Բելգիա Ձավենտեմ

- Հարգարժան պարոն նախարար, ես Բելգիայի քաղաքացի եմ ցանկանում եմ սեփական առանձնատուն գնել Երեւանում: Վերջերս պարոն քաղաքապետին ուղղված իմ հարցմանը նա պատասխանել էր այսպես. «ՀՀ հողային օրենսգրքի 4-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է . Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք չեն կարող հողի նկատմամբ ունենալ սեփականության իրավունք: Նրանք կարող են լինել միայն հողի օգտագործողներ: Հաշվի առնելով նշվածը, Դուք կարող եք Երեւան քաղաքում սահմանված կարգով ձեռք բերել բնակելի տուն, որի համար պետք է վճարվի գույքահարկ եւ հողօգտագործման վճար»: Խնդրում եմ պարզաբանեք, ինչ գույքահարկի հողօգտագործման մասին է խոսքը: Շնորհակալություն:

- Հարգելի պարոն Արմավիրցի, տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ Ազգային Ժողովի կողմից ՀՀ Հողային օրենսգրքում 23.05.06թ. կատարված լրացումներով սահմանվեց, որ օտարերկրյա քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետությունում հողի նկատմամբ սեփականության իրավունքից օգտվելու սահմանափակումը չի տարածվում տնամերձ, այգեգործական, ինչպես նաեւ անհատական բնակելի տան կառուցման եւ սպասարկման, հասարակական եւ արտադրական օբյեկտների կառուցման եւ սպասարկման, բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման եւ սպասարկման համար հողամասերի վրա, ուստի եւ օտարերկրյա քաղաքացիները կարող են սեփականության իրավունքով ձեռք բերել վերը նշված կատեգորիաների հողամասերը: Իսկ սեփական հողամասի եւ անհատական բնակելի տների համար մեր երկրում սահմանված է հողի հարկ եւ գույքահարկ «Հողի հարկի մասին» եւ «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքներով սահմանված դրույքաչափերով:

Ամալյա Սիմոնյան, Երեւան

- Գյուղերում մարդկանց ունեցվածքը փաստաթղթավորեցիք, կարողանում են տնօրինել սեփական հայեցողությամբ, իսկ քաղաքներում ինչո՞ւ չլուծեցիք: Այս ու այն քաղամասերում մասսայական դժգոհություններ կան: Կադաստրի կողմից պահանջվող փաստաթղթերը պարզապես չեն տրամադրում քաղաքապետարանում: Ինչ անեն հասարակ քաղաքացիները, ո՞ւմ բողոքեն, չէ՞ որ դուք չեք գրանցում եւ դժգոհության ամբողջ պատճառը դուք եք դառնում: Հասկանում ենք, որ պահանջվող փաստաթղթերը չներկայացնելով, հնարավոր չէ գոնե պատասխան ստանալ: Որպես ոլորտում քաղաքականություն վարող հնարավոր չէ՞ օրենքներով սահմանել այդ հարցերը, որ համայնքների հետ գործ չունենանք:

- 2000 թ.-ից սկսած Հայաստանում սկսվեցին կադաստրային քարտեզագրման եւ առաջին պետական գրանցման աշխատանքները: Գյուղական համայնքներում առավել կազմակերպած այն ընթացավ, քան քաղաքային համայնքներում, որը մի գուցե կապված էր քաղաքային

→

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Հարց ու պատասխան

համայնքներում քաղաքաշինական գործունեության հետ: Գյուղական համայնքներում, իրականացված մի շարք օրենսդրական փոփոխությունների հիման վրա, շուրջ 1.4 միլիոն գրանցումներ իրականացվեցին: Դրա արդյունքում սեփականատերերին անվճար տրամադրվեցին իրավունք հաստատող փաստաթղթեր՝ վերականգնելով նաեւ դրանց իրավունք հաստատող փաստաթղթերը հողային բարեփոխումների եւ սեփականաշնորհման հանձնաժողովների որոշումներով: Քաղաքային վայրերում, պայմանավորված խոչընդոտներով (ինքնակամ շինություններ, ինքնակամ զբաղեցված հողամասեր, չպահպանված իրավունք հաստատող փաստաթղթեր, օրենսդրությամբ սահմանված իրավունք հաստատող փաստաթղթեր, տեղեկանքներ), գրանցման գործընթացը ֆիզ այլ կերպ ընթացավ: Կոմիտեի կողմից շուրջ 150000 գույքի մասին տեղեկատվություն ներկայացվեց քաղաքային համայնքների իշխանություններին, սակայն նրանց կողմից հարցը չկարգավորվեց եւ նրանք խնդիրները պետք է լուծեն այսօրվա օրենսդրությամբ սահմանված պահանջներով: Որպես ոլորտում քաղաքականություն մշակող մարմին, մենք որեւէ փաստաթղթով չենք կարող կարգավորել՝ ելնելով քաղաքային համայնքների առանձնահատկությունից եւ նրանց վերապահված լիազորություններից: Ընդհանուր առմամբ կուզենայի ասել, որ առաջին պետական գրանցման աշխատանքներն ավարտվել են 31.12.06թ դրությամբ: Այսօր 2.2 միլիոն գույքի նկատմամբ առկա են սեփականության իրավունքի վկայականներ, որոնցից 1.7 միլիոնը առաջին պետական գրանցման աշխատանքների շրջանակներում: Առաջիկայում գրանցված միավորներն ըստ գույքի տեսակի կհրապարակվի մամուլում, ինչպես նաեւ մեր էլեկտրոնային կայքում:

Արման Կիրակոսյան, Երեւան

- Անցյալ տարի շատ էին խոսում հիփոթեքից: Ինչ որ օրենքներ, քայլեր էին ձեռնարկվում, հիմա ո՞ր փուլում ենք: Կխնդրեի եւս մեկ հարցի պատասխանել՝ գները նորից արհեստական պետք է բարձրացնե՞ք:

- 2005 թ.-ին հանրապետությունում երկու ուղղությամբ՝ օրենսդրական եւ ֆինանսական բարեփոխումներ սկսվեցին: Օրենսդրականը իրականացրեց կադաստրի կոմիտեն միջգերատեսչական հանձնաժողովների միջոցով: ՀՀ ԱԺ ներկայացվեց 11 օրենքների փաթեթ՝ «Հիփոթեքային փաթեթ» անվանումը, որտեղ էապես կարգավորվեցին գույքը լիարժեք շրջանառության մեջ դնելու խնդիրները, հիփոթեքով ձեռք բերվող բնակարանների առանձնահատկությունները, գնահատման սանդղակները:

Ըստ էության, օրենսդրական բարեփոխումների հիմնական նպատակն էր հնարավորինս հստակեցնելու հիփոթեքային վարկավորման եւ դրա հետ կապված այլ հարաբերությունները կարգավորող իրավական դաշտը, որը իր հերթին պետք է նաեւ հիփոթեքային շուկայի հետագա զարգացման խթան հանդիսանար:

Կարծում եմ, որ բարեփոխումները ունեցան իրենց դրական ազդեցությունը, որի մասին են վկայում ինչպես շուկայում հիփոթեքով ապահովված գործարքների աճը, այնպես էլ բանկերի կողմից տրամադրվող հիփոթեքային վարկավորման պայմանների (տոկոսադրույքներ, ժամկետներ) բարելավումը: Հուսանք, որ իրականացված բարեփոխումները, ի վերջո, կնպաստեն Հայաստանում հիփոթեքային շուկայի էլ ավելի զարգացմանը, որի արդյունքում հիփոթեքային վարկը պետք է հասանելի լինի ոչ թե բնակչության մի փոքր մասի, ինչպես դա, ցավոք սրտի, այսօր է, այլ պետք է քաղաքացիների սվար զանգվածի համար դառնա բնակարանային ապահովման եւ փոխառու միջոցների ձեռքբերման հասանելի եւ արդյունավետ միջոց:

Ինչ մնում է գներն արհեստականորեն բարձրացնելու հարցին, ապա ես մի քանի անգամ մամուլում անդրադարձել եմ այս թեմային եւ պետք է նշեմ, որ անշարժ գույքի շուկայում գնորդի եւ վաճառողի միջեւ այդ գներով իրականացվող գործարքները արհեստական համարել չենք կարող: Եվ բազմիցս եմ ընդգծել, որ առաջարկ-պահանջարկի հարաբերակցությունը որոշում է շուկան, այլ ոչ թե կադաստրի պետական կոմիտեն: Մենք ներկայացնում եւ ՀՀ կառավարության կողմից հաստատվում են հողի կադաստրային արժեքները, որոնք 2006 թվականին չեն փոփոխվել եւ որպես կանոն ցածր են շուկայական արժեքներից:

Վարդան, Երեւան

- Դուք այն պաշտոնյաներից եք, որ բացառում եք կոռուպցիան պետական համակարգում: Ձեր ղեկավարած համակարգում կոռուպցիա կա, թե՞ ոչ:

- Ես մեր համակարգում չեմ բացառում կոռուպցիոն դրսեւորումները: Այդ մասին միշտ նշել եմ ասուլիսներում եւ ամեն տարի որոշակի քայլեր ձեռնարկել դրանք նվազեցնելու նկատառումով: Մասնավորապես՝

- գրանցման ժամկետները 15 օրից կրճատել ենք 3-ի

- տեղեկատվության տրամադրումը 5 օրյա ժամկետից նվազեցրել ենք 1 օրվա

- հստակեցվել է գործավարության կարգը

- հստակ սահմանվել է պահանջվող փաստաթղթերի ցանկը

- ներդրվել է «մեկ պատուհան»-ի գաղափարը

- ներդրվել է էլեկտրոնային վերահսկողության համակարգը

- տեսանելի վայրերում փակցված են օրենքով սահմանված տուրքերի եւ վճարների չափերը

- տարածքային ստորաբաժանումներում տեղադրվեցին դիմում-բողոքների արկղերը եւ վստահության հեռախոսները

- տպագրվել են ուսուցողական եւ բացատրական բնույթի ուղեցույցեր

- առաջիկայում էլեկտրոնային կայքում կտեղադրվի Երեւանի հողի հարկի եւ գույքահարկի բազան:

Քաղաքացի

- Արդո՞ք Դուք որեւէ կուսակցության անդամ եք: Եթե այո, ապա դա չի՞ խանգարում Ձեզ աշխատել: Չէ՞ որ կադաստրն ինքնին տեղեկատվական համակարգ է: Ես, օրինակ, սխալ եմ համարում Աղվան Վարդանյանի դաշնակցական կուսակցական լինելու պարագան:

- Ես անկուսակցական եմ: Մենք հասկանում ենք, որ մենք կառավարում ենք անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվությունը, որը օրենքով սահմանված կարգով որեւէ մեկի կողմից օգտագործվել չի կարող: Համակարգը բաց է, բացի անհատին, շենքերի-շինությունների հասակագծին, պետական, ծառայողական, առեւտրային գաղտնիք պարունակող տեղեկատվությունից:

Հայ Արիական Միաբանության անդամ Ատոմ Հակոբ, Հայաստան, գ. Աբովյան

- Հարգելի պարոն Վարդանյան, մամուլում շատ գրվեց կեղծ անդորրագրերի պատմության մասին: Ցանկանում եմ իմանալ, ի վերջո, ո՞րն է իրական պատմությունը: Պարզվե՞լ են մեղավորները:

- Չեմ ուզում մանրամասն անդրադառնալ այս հարցին, քանի որ գործընթացն ամբողջությամբ ավարտված չէ, իսկ իմ նախնական տեսակետն արտահայտել եմ դեռ նախորդ տարի հուլիսին մամուլի ասուլիսի ընթացքում, որի ժամանակ ներկայացրեցի խնդրի էությունը եւ ձեռնարկված քայլերը շուրջ 130 գրանցումները չեղյալ համարելու մասին «Վարչարարության իրավական հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջները կիրառելով: Ըստ դատախազության հայտարարության, գործն ավարտվել է միայն կադաստրի համակարգում, բայց այն դեռ շարունակվում է: Ընդամենը նշենք, որ կադաստրը բոլոր գործարքների վերջին օղակն է: Նշենք, որ տասնյակ մարդիկ իմ հրամանով հեռացվել են աշխատանքից, որոշ մարդիկ ենթարկվել են տարբեր աստիճանի քրեական պատասխանատվության: Կցանկանայի նշել, ինչը արտահայտվեց նաեւ դատավճիռներում, որ համաձայն «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի եւ քաղաքացիության պաշտոնի անձնագրերի, կադաստրի աշխատակիցը չուներ գումարներ գանձելու, անդորրագրերի, որոշումների, փաստաթղթերի իսկությունը ստուգելու լիազորություն: Նրանք գործել են ոչ թե իբրեւ լիազորություններ ունեցող պաշտոնյաներ, այլ որպես մասնավոր անձիք՝ հիմնական հանցախմբի հետ: Կարծում ենք, որ գործի ավարտից հետո կպարզվի նման լիազորություններ ունեցող անձանց շրջանակը եւ պատասխանատվության սահմանը: Միայն նշեմ, որ առաջին իսկ օրվանից համակարգը համագործակցել է դատախազության եւ վերահսկողության ծառայությունների հետ:

Ի դեպ, 2005-2006թթ հայտնաբերվել են 186 գույքի նկատմամբ իրականացված գործարքի հետ կապված շուրջ 241 կեղծ անդորրագիր, որից 11 գույքի վերաբերյալ գրանցումները մերժվել են տարբեր պատճառաբանությամբ՝ ոչ անդորրագրերի պատճառով, 78 դեպքը վերաբերվել է ինքնակամ կառույցների օրինականացմանը, 15-ը՝ ուղղակի վաճառքի եւ աճուրդների դեպք էր, 76-ը՝ ՀՀ հողային օրենսգրքի 23 հոդվածով սահմանված դեպք էր, որից 34-ը հասարակական նշանակության շենքեր, շինություններ, եւ ՀՀ կառավարության 30.12.04թ թիվ 879-Ն որոշմամբ հաստատված ցանկից՝ 6 դեպք:

Ընդգծեմ, որ չեղյալ համարված գրանցումներին կարող ենք անդրադառնալ միայն գումարները վճարելու պարագայում: Այսօրվա դրությամբ վերականգնվել է 660մլն դրամ 1.4մլրդ դրամից: ՀՀ ֆինանսների նախարարության հետ համատեղ հրամանով նման երեւույթները բացառելու նպատակով սահմանվել է նոր կարգ, համաձայն որի, փոփոխություն է կատարվել գրանցման հրահանգներում եւ գործավարության կարգում: Ըստ այդ փոփոխության, ամեն օր ինտերնետի միջոցով կենտրոնական գանձապետարանից ստանում ենք տվյալ մուտք եղած գումարի վերաբերյալ: Հակառակ պարագայում դա հիմք է գրանցման մերժման համար, ինչպես նաեւ չվճարման, այդ թվում՝ գույքը կորցնելու իրավական հետեւանքներով:

Լուսինե Ասատրյան, Գավառ

- Մեր տունը գնել ենք խորհրդային տարիներին: Ունենք միայն տնային գրքույկ, որտեղ նշված են տարածքի սահմանները: Հետագայում սեփական տնամերձ հողամասը գրեթե կրկնակի ավելացրեցինք: Արդո՞ք այդ հատվածը ապօրինի է համարվում: Եթե այո, ի՞նչ սկզբունքով ենք կատարելու տան սեփականաշնորհումը: Դարձյալ նույն սկզբունքն է գործելու, երբ պետությունն ադեն իրավունք ունի տիրոջից գնելու ապօրինի հատվածները եւ կադաստրային գներով վաճառելու նրան:

- Եթե Ձեր կողմից ներկայումս օգտագործվում է հողամասի նկատմամբ իրավունք հաստատող փաստաթղթերում նշված չափերից ավելի հողամաս, ապա փաստաթղթերում նշված չափից ավելի հողամասը օգտագործվում է ինքնակամ: Նշված հողամասը՝ կառուցապատ լինելու դեպքում, դրա հետագա կարգավիճակը կարող է որոշվել ՀՀ Կառավարության 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման եւ տնօրինման կարգը հաստատելու մասին» որոշման պահանջների համաձայն: Ինչ վերաբերում է որեւէ կառույցով չծանրաբեռնված ինքնակամ օգտագործվող հողամասերին, ապա դրանց «օրինականացման» որեւէ եղանակ ներկայումս օրենսդրությամբ նախատեսված չէ: Նշված հողամասերը հանդիսանում են պետական կամ համայնքային սեփականություն եւ կարող են տնօրինվել լիազոր մարմինների կողմից միայն օրենքով սահմանված կարգով: Առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու անհրաժեշտության դեպքում կարող եք դիմել կոմիտե կամ ըստ գույքի գտնվելու վայրի կոմիտեի տարածքային ստորաբաժանում:

Արմեն, Հայաստան, Երեւան

- Հուսամ գիտեք, որ ամբողջությամբ կաշառակերության մեջ է ընկղմված ձեր ղեկավարած կառույցը: Արդո՞ք անհարմար չեք զգում եւ միգուցե մտածեք ինչ պակաս պատասխանատվությամբ աշխատանքի անցնեք:

- Հարգելի պարոն Արմեն, ենթադրում եմ Ձեր հարցը ուղղորդված է, բայց կփորձեմ հակիրճ ներկայացնել համակարգում արվածը.

- ճշգրտվեց եւ վերականգնվեց 1942թ.կոորդինատային համակարգը,

- առաջին անգամ համաշխարհային կոորդինատային համակարգում (WGS-84) ստեղծվեց պլանային եւ բարձունքային կոորդինատային համակարգը, միանալով եվրոպական միասնական կոորդինատային համակարգին,

- առաջին անգամ իրականացվեցին օդալուսանկարահանման աշխատանքները,

- իրականացվեցին արբանյակային հանութագրման աշխատանքներ,

- ստեղծվեցին օրթոֆոտոքարտեզներ,

- հանութագրված նյութերի հիման վրա ստեղծվեցին 1:10000 մասշտաբի թվային տեղագրական քարտեզներ, որոնք միակն են ԱՊՀ երկրներում,

- գեոդեզիայի ոլորտում ստեղծվեցին ժամանակակից պահանջներին համապատասխան նորմատիվ տեխնիկական փաստաթղթեր,

- հրատարակվեցին 40 թեմատիկ քարտեզներ,

- հրատարակվեց Ազգային ատլասի Ա հատորը (ֆիզիկաաշխարհագրական), չորս ամիս հետո լույս կտեսնի Բ հատորը (պատմական),

- ձեռք բերվեցին հարյուրից ավելի գերժամանակակից գեոդեզիական չափման գործիքներ, GPS կայաններ, էլեկտրոնային տախեոմետրեր, մոտ 250 DISTO հեռաչափեր, ամբողջությամբ հրաժարվելով ավանդական չափման գործիքներից,

- ձեռք բերվեցին օդալուսանկարահանման եւ արբանյակային հանութագրման նյութերի վերծանող թվային սարքեր, համակարգչային եւ ծրագրային ապահովման միջոցներ,

- ամբողջությամբ քարտեզագրվեց ՀՀ տարածքը, ստեղծվեցին ամբողջովին նոր թվային կադաստրային քարտեզներ,

- ներդրվեց GIS (երկրատեղեկատվական) համակարգ, իրականացվեց փորձնական երեք համայնքներում,

- իրականացվեց համայնքների վարչական սահմանների նկարագրությունը,

- բոլոր համայնքներում բացառությամբ Երեւանի, որը օրենքով չի թույլատրվում, պետական սեփականության հողերը փոխանցվեցին համայնքային սեփականություն՝ համայնքին դարձնելով հողի կառավարման միակ մարմինը եւ անշարժ գույքի շուկայի լիարժեք մասնակից,

- իրականացվեց ՀՀ տարածքի հողերի սկզբնական հաշվառում, կազմվեց նոր հողային հաշվեկշիռը (համայնք, մարզ, ՀՀ),

- 10 մարզերում իրականացվեցին շուրջ 35000 միավոր օտարահունչ աշխարհագրական օբյեկտների անվանումների անվանափոխման եւ անվանակոչման աշխատանքներ, հաստատվեցին ՀՀ կառավարության կողմից եւ 57 համայնքների օտարահունչ անունները փոփոխվեցին,

- բոլոր համայնքներում իրականացվեցին առաջին պետական գրանցման աշխատանքներ,

- 2.2 միլիոն սեփականության վկայականներ տրամադրվեցին, որից 1.7 միլիոնը՝ անվճար փաստաթղթելով եւ արժեւորելով ՀՀ գույքը,

- ներդրվեց շարժական գույքի գրավի եւ լիզինգի ռեգիստրը,

- իրականացվում է կադաստրային գործերի էլեկտրոնային արխիվների ստեղծումը,

- ներդրվեց հաստատման գրանցման ռեգիստրը, հաստատվեցին եւ գրանցվեցին 840 գյուղական համայնքները, ընթացքում է քաղաքային համայնքների հաստատավորումը եւ գրանցումը,

- ձեւավորվեց եւ կատարելագործվեց շուրջ 1.6 միլիոն միավոր հողի հարկի եւ 800 հազար միավոր գույքահարկի բազան, որը հանդիսանում է համայնքային բյուջեների հիմնական եկամտի աղբյուրը,

- մշակվեցին եւ ընդունվեցին «ՀՀ հողային օրենսգիրքը», «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին», «Գեոդեզիայի եւ քարտեզագրության մասին», «Աշխարհագրական օբյեկտների մասին», գույքահարկի եւ հողի հարկի մասին օրենքները եւ դրանից բխող 300 նորմատիվ ակտերը, որը չունեինք 5 տարի առաջ,

- տարեկան իրականացվում են 120000 ընթացիկ գրանցումներ, շուրջ 200000 տեղեկատվության տրամադրում՝ տարեկան պետբյուջեին մուծելով շուրջ 1մլրդ դրամի պետական տուրք եւ ծառայության վճարներից գանձված մոտ 200-400 մլն դրամի տնտեսված գումարներ,

- ավարտին է մոտենում համակարգի ավտոմատացումը, ամբողջ տվյալների բազաների կենտրոնացումը եւ սանդղակացումը, իսկ Երեւան քաղաքում ավարտվել է եւ առաջիկայում քաղաքացիներին կտրամադրենք ինտերնետի միջոցով: Սրանք այն ծրագրային աշխատանքներն են, որոնք իրականացվել ու շարունակվում են համակարգում, իսկ ընթացիկ գործունեության ժամանակ ձեռնարկված քայլերը կարող եք կարդալ մնացած պատասխաններում:

Նշեմ նաեւ, որ գրանցում հանրապետությունում արվում են 48 տարածքային ռեգիստրների միջոցով, որոնք ամսական անում են 12-15 հազար ընթացիկ գրանցումներ, մոտ 20 հազար տեղեկատվության տրամադրում, իսկ բացի այդ 6 տարվա ընթացքում կատարված առաջին պետական գրանցման շրջանակներում ամսեկան իրականացվել է շուրջ 25 հազար պետական գրանցում:

Ի հավելումն կուզենայի նշել նաեւ, որ պետական կառավարման համակարգում մեր ոլորտը բացասական առումով առաջնային դիրքերում չէ, իսկ կոռուպցիայի դեմ պայքարի ուսումնասիրության համաձայն, մեր ունեցած տվյալներով, տասնյակից ներքեւ ենք:

Մակիչ Պետրոսյան, Հայաստան, Երեւան

- Պարոն Վարդանյան, ի՞նչ բարեփոխումներ են սպասվում առաջիկայում սպասարկման բարելավման ուղղությամբ:

- Կադաստրը պետական միակ մարմինն է, որ շփվում է հասարակության բոլոր շերտերի, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, շուկայի մասնակից մասնագիտացված կազմակերպությունների հետ, ինչն ինքնին ենթադրում է դժվարություններ: Հարցը բաժանենք երկու մասի՝ ծրագրային եւ ամենօրյա: Քաղաքացիներին պատշաճ սպասարկելն ամենօրյա պահանջ է, քանզի նույն կադաստրի աշխատակիցն էլ քաղաքացի է եւ կարող է շփվել այլ ոլորտների հետ: Իսկ ծրագրայինը՝ համակարգի ավտոմատացման գործընթացն է, որ կապի ժամանակակից միջոցները օգտագործելով կարող են ստանալ տեղեկատվություն ինտերնետ միջավայրում՝ իրական ժամանակում:

Տիգրան, Հայաստան, Երեւան

- Լսել ենք, որ Հայաստանում անշարժ գույքի նկատմամբ գրանցման համակարգը ճանաչվել է երկրորդ աշխարհում: Ո՞ր կազմակերպության կողմից է դա ճանաչվել եւ ի՞նչ սկզբունքով:

- Յուրաքանչյուր տարի Համաշխարհային Բանկի եւ Միջազգային Ֆինանսական կորպորացիայի կողմից գործարար միջավայրի ուսումնասիրություն է կատարվում: Դրա շրջանակներում «Ինչպես կատարել բարեփոխումներ» հետազոտության մեջ Հայաստանի կադաստրի համակարգը իրականացված բարեփոխումների, գործընթացների, վճարների, ժամկետների մասով ճանաչվեց երկրորդը 175 երկրների շարքում:

Հայտարարություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ դասական դեղարտամենտը (այսուհետ՝ Դեղարտամենտ) հայտարարում է բաց մրցույթ դասական ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար

1. ՀՀ դասական դեղարտամենտի միջազգային համագործակցության, առողջապահության եւ տեղեկատվության վարչության զանգվածային լրատվության միջոցների հետ կապերի ավագ մասնագետ (դասական ծառայության գլխավոր պաշտոնների խմբի 2-րդ ենթախումբ կոդ՝ ԴԴ -2.2-72):

Միջազգային համագործակցության, առողջապահության եւ տեղեկատվության վարչության զանգվածային լրատվության միջոցների հետ կապերի ավագ մասնագետը մասնակցում է ՀՀ դասարանների եւ Դեղարտամենտի գործունեության լուսաբանմանը, ՀՀ դասարանների եւ Դեղարտամենտի գործունեության վերաբերյալ պատրաստում է մամուլի հաղորդագրություններ, առաջադրվում է ՀՀ դասարանների եւ ՀՀ դասական ծառայողների կողմ զանգվածային լրատվության միջոցների հետ, մասնակցում է ՀՀ դասարանների եւ Դեղարտամենտի ներկայացուցիչների մամուլի ասուլիսների, հարցազրույցների, ինչպես նաեւ լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ հանդիպումների կազմակերպմանը, կազմում է լրատվության միջոցների, այդ թվում՝ հայաստանյան մամուլի ամենօրյա տեսություն, ինչպես նաեւ ինտերնետի միջոցով ուսումնասիրում օտարերկրյա թերթերի ու գործակալությունների նյութերը, դրանց հիման վրա պատրաստում ամենօրյա տեսություններ, իրականացնում է կանոնադրությամբ, օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորություններից բխող այլ գործառույթներ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն,
- դասական (պետական) ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա սպած կամ առնվազն երեք տարվա դասական ծառայության սպած կամ դասական ծառայության առնվազն 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ գիտական աստիճան կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային սպած կամ վերջին երեք տարվա ընթացքում խաղաղական կամ հայեցողական կամ խաղաղցիական պաշտոնում առնվազն մեկ տարվա աշխատանքային սպած,
- իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
- գրական հայերենի պատշաճ իմացություն,
- տիրապետում է առնվազն մեկ օտար լեզվի:

2. Դասական դպրոցի ավագ մասնագետ (դասական ծառայության գլխավոր պաշտոնների խմբի 2-րդ ենթախումբ կոդ՝ ԴԴ -2.2-67.2):

Դասական դպրոցի ավագ մասնագետը դպրոցի տնօրենի հանձնարարությամբ կամ դպրոցի աշխատանքային ծրագրին համապատասխան իրականացնում է ՀՀ դասական համակարգում ուսումնական ծրագրերի կազմակերպման հետ կապված աշխատանքներ, ներկայացնում է համապատասխան հաշվետվություններ եւ առաջարկություններ, Դասական դպրոցի տնօրենի հանձնարարությամբ նախապատրաստում է անհրաժեշտ նյութեր, զեկուցում կատարված աշխատանքների մասին, կազմում եւ դպրոցի տնօրենի հաստատմանն է ներկայացնում ուսումնական ծրագրեր, ժամանակացույցեր եւ ուսումնական գործընթացը պատշաճ կազմակերպելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր, կազմում եւ վարում է մատյաններ, հաճախելիության թերթիկներ եւ ուսումնական գործընթացը պատշաճ կազմակերպելու համար անհրաժեշտ փաստաթղթեր.

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն,
- դասական (պետական) ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա սպած կամ առնվազն երեք տարվա դասական ծառայության սպած կամ դասական ծառայության առնվազն 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ գիտական աստիճան կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային սպած կամ վերջին երեք տարվա ընթացքում խաղաղական կամ հայեցողական պաշտոններում կամ խաղաղցիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային սպած.
- իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- գրական հայերենի պատշաճ իմացություն:

3. ՀՀ դասական դեղարտամենտի դասական պրակտիկայի ամփոփման վարչության մասնագետ (դասական ծառայության առաջատար պաշտոնների խմբի 1-ին ենթախումբ կոդ՝ ԴԴ -3.1-143.6):

Հայաստանի Հանրապետության դասական դեղարտամենտի դասական պրակտիկայի ամփոփման եւ դասական վիճակագրության վարչության մասնագետը Վարչության պետի հանձնարարությամբ կամ Վարչության աշխատանքային ծրագրին համապատասխան իրականացնում է Հայաստանի Հանրապետության դասարաններում դասական պրակտիկայի ուսումնասիրություններ եւ կատարված աշխատանքների արդյունքների մասին ներկայացնում է համապատասխան հաշվետվություններ եւ առաջարկություններ, Վարչության պետի հանձնարարությամբ նախապատրաստում է անհրաժեշտ նյութեր, կատարված ուսումնասիրությունների վերաբերյալ կազմում տեղեկանքներ, պրակտիկայի ամփոփման արդյունքներով՝ տեսություն, ենթարկում է խաղաղացիների եւ այլ անձանց դիմումները՝ կապված դասական պրակտիկայում առկա հակասությունների հետ եւ անհրաժեշտության դեպքում նախապատրաստում է դրանց վերացմանն ուղղված առաջարկություններ եւ դրանք ներկայացնում է Վարչության պետին.

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն իրավաբանական կրթություն,
- դասական (պետական) ծառայության պաշտոններում երկու տարվա սպած կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային սպած կամ վերջին երեք տարվա ընթացքում խաղաղական կամ հայեցողական կամ խաղաղցիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային սպած.
- իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- գրական հայերենի պատշաճ իմացություն:

4. ՀՀ դասական դեղարտամենտի կազմակերպական վարչության մասնագետ (դասական ծառայության առաջատար պաշտոնների խմբի 1-ին ենթախումբ կոդ՝ ԴԴ-3.1-144.3):

ՀՀ դասական դեղարտամենտի կազմակերպական վարչության մասնագետը վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է Դեղարտամենտի գործունեության կոնկրետ ոլորտի հետ կապված աշխատանքները, վարչության պետի հանձնարարությամբ նախապատրաստում է անհրաժեշտ նյութեր եւ տեղեկատվություն համակարգում է ՀՀ օրենսդրությամբ հանձնաժողովների նիստերի նախապատրաստական եւ կազմակերպական աշխատանքները, իրականացնում է ՀՀ դասարաններում աշխատանքի կազմակերպման ուսումնասիրություններ, պատրաստում է խաղաղացիների դիմումների պատասխան-գրությունների նախագծերը, իրականացնում է օրենքներով եւ կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ.

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն իրավաբանական կրթություն,
- դասական (պետական) ծառայության պաշտոններում երկու տարվա սպած կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային սպած, կամ վերջին երեք տարվա ընթացքում խաղաղական կամ հայեցողական, կամ խաղաղցիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային սպած.
- իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- գրական հայերենի պատշաճ իմացություն:

5. Դասական դպրոցի մասնագետ (դասական ծառայության առաջատար պաշտոնների խմբի 1-ին ենթախումբ կոդ՝ ԴԴ -3.1-141.3):

Դասական դպրոցի մասնագետը Դասական դպրոցի տնօրենի հանձնարարությամբ կամ Դասական դպրոցի աշխատանքային ծրագրին համապատասխան իրականացնում է Հայաստանի Հանրապետության դասական համակարգում ուսումնական ծրագրերի կազմակերպման հետ կապված աշխատանքներ, ներկայացնում է համապատասխան հաշվետվություններ եւ առաջարկություններ, Դասական դպրոցի տնօրենի հանձնարարությամբ նախապատրաստում է անհրաժեշտ նյութեր, զեկուցում կատարված աշխատանքների մասին, կազմում եւ Դասական դպրոցի տնօրենի հաստատմանն է ներկայացնում ուսումնական ծրագրեր, ժամանակացույցեր եւ ուսումնական գործընթացը պատշաճ կազմակերպելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր, կազմում եւ վարում է մատյաններ, հաճախելիության թերթիկներ եւ ուսումնական գործընթացը պատշաճ կազմակերպելու համար անհրաժեշտ փաստաթղթեր.

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն,
- դասական (պետական) ծառայության պաշտոններում երկու տարվա սպած կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային սպած կամ վերջին երեք տարվա ընթացքում խաղաղական կամ հայեցողական կամ խաղաղցիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային սպած.
- իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- գրական հայերենի պատշաճ իմացություն:

6. ՀՀ դասական դեղարտամենտի տնտեսական շահագործման վարչության ավագ մասնագետ (դասական

→

→

Մանրամասն տեղեկատվություն կարող եք ստանալ www.doingbusines.org էլեկտրոնային կայքում: 2004 թ.-ին մեր համակարգը ճանաչվեց օրինակելի եւ խորհուրդ տրվեց Արեւելյան Եվրոպայի եւ ԱՊՀ երկրներին ուսումնասիրել մեր փորձը եւ ներդնել իրենց երկրներում:

Չնայած միջազգային կազմակերպությունների գնահատականներին, կարծում եմ, որ մեր համակարգում դեռ անելիքներ կան՝ սպասարկման եւ դրա որակի բարձրացման, ինչպես նաեւ իրականացված բարեփոխումների ոլորտում:

Ֆլորա Մարգարյան, ք. Երեւան

- Պարոն Վարդանյան, բնակվում ենք 2-րդ Արհեստավորների փողոցում: Տվյալ թաղամասի տները, գիտեք, որ 30-50-ական թվականներին են կառուցվել: Շատերին չեն թույլատրել սեփականաշնորհել տները: Այժմ խոսակցություններ են գնում, որ հիշյալ տարածքը իրացվելու է: Ինչ է սպասում մեզ: Կանխավ շնորհակալություն:

- Արհեստավորների փողոցի մի մասը ճանաչվել է հասարակության եւ պետության կարիքների համար օտարման ենթակա գոտի: Եթե Դուք ունեք համապատասխան իրավահաստատող փաստաթղթեր, ապա կարող եք դիմել կադաստրի կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանում եւ ստանալ իրավունքների պետական գրանցում: Իսկ եթե հիմքեր չեն պահպանվել, ապա կարող եք դիմել Երեւանի քաղաքապետարան՝ դրանք ՀՀ հողային օրենսգրքի 64 հոդվածի 16 կետով սահմանված կարգով վերականգնելու համար:

Գոհար, Երեւան

- Պարոն Վարդանյան, ես բնակարան ունեմ Թումանյան փողոցի վրա, Օղերայի հարեւանությամբ: Բնակարանը հենց փողոցին է նայում: 2 հարկանի տուֆից շենք է, որը 3 տարի է, ինչ ասում են, որ քանդվելու է ու դեռ կոնկրետ պատասխան չեն տվել: Բացի դրանից, եթե պետությունը իրացնի, անշարժ գույքի կադաստրի կոմիտեի գնահատմամբ, 1 մ-ին տալու են 300-500$՝ իբր օրենքով: Այնինչ տունը քաղաքի ամենալավ տեղում է գտնվում, որը համապատասխան շուկայական գնով գնահատելու դեպքում 1000 դոլարից պակաս չի կարող արժենալ:

Բնակարանի մակերեսը 72մ է: Այսինքն, առավելագույնը՝ 30000$ կտան: Այդ գումարով ի՞նչ եք առաջարկում անել՝ քաղաքից դուրս տուն գնենք, որովհետեւ Թումանյանի վրա բնակարանի 1 մ-ն արժե 1500-2000 դոլար, իսկ, օրինակ՝ Դավիթաշենում՝ 3 սենյակը 55000-ից է սկսվում: Ինչպե՞ս կարող ենք այս անորոշ վիճակում ապրել: Օրենք չկա՞ այս երկրում:

- Թումանյան փողոցում, Օղերայի հարեւանությամբ, ՀՀ կառավարության կողմից պետության եւ հասարակության կարիքների համար չկա օտարման ենթակա ճանաչված տարածք: Իսկ եթե շենքի հետ կապված խնդիր կա, ապա այն պետք է կարգավորել Երեւանի քաղաքապետարանում: Ինչ վերաբերում է Ձեր արծարծած փոխհատուցմանը, իրացման գոտի լինելու պարագայում հարցը կարգավորվում է «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով, իսկ մնացած դեպքերում ինքներդ եք տնօրինում Ձեր գույքը: Իսկ եթե Ձեզ որոշակի հետաքրքրում է քաղաքացուի մեջտեղ ունեցվածքի, կադաստրի կոմիտեն ամսական, եռամսյակային, կիսամյակային, տարեկան կտրվածքներում անշարժ գույքի շուկայի վերլուծությունները հրապարակում է մամուլում: Կարող եք պարակում եւ նաեւ օգտվել լիցենզավորված գնահատողների ծառայություններից:

Մովսես, Երեւան

- Պարոն Վարդանյան, ի՞նչ նորություններ կան Շրջանցիկ թունելի տարածքի հողամասերի սեփականացման վերաբերյալ:

- Քանաքեռ ՀԷԿ-ին հարող տարածքում՝ ներառյալ նաեւ շրջանցիկ թունել կոչվող հատվածը, 2005թ. հաշվառման տվյալներով, առկա է շուրջ 530 միավոր տարբեր տարիներին ինքնակամ կառուցված անշարժ գույք եւ 316 միավոր զավթած դատարկ հողամաս: 1998-2005թթ ՀՀ կառավարության որոշման եւ համապատասխան օրենքի հիման վրա Երեւանի քաղաքապետարանը օրինականացվել եւ կադաստրում իրավունքների պետական գրանցում են սացել 20 միավոր ինքնակամ կառույց: Ձեր կողմից ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների հետագա կարգավիճակը կարող եք կարգավորել ՀՀ կառավարության 18.05.06թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման եւ տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով եւ քաղաքաշինական հիմնական փաստաթղթերի շրջանակներում:

Արսյոմ Մովսիսյան, ք. Երեւան

- Պարոն Վարդանյան, անշարժ գույքի գործակալները (բրոկերները) վստահություն չեն ներշնչում բնակչության մոտ եւ իրենց ծառայությունների համար հաճախ շատ բարձր վճարներ են պահանջում: Ձեր ղեկավարած կառույցի կողմից նախատեսվո՞ւմ են որոշակի քայլեր այդ ոլորտի կարգավորման ուղղությամբ: Նախապես շնորհակալություն:

- Ռիելթորական գործունեության լիցենզավորումը մեր երկրում սկսել է 1998 թվականի սեպտեմբերից: Լիցենզավորվել է 160 կազմակերպություն, որից 2006 թ.-ին՝ 47: Ռիելթորական գործունեության համար ծառայության վճարը օրենսդրորեն չի կարգավորվում, այն խաղաղցիաիրավական հարաբերություն է եւ կարգավորվում է պայմանագրով՝ փոխադարձ համաձայնությամբ:

Սա պարտադրված գործունեություն չէ եւ խաղաղցին ինքն է ընտրում համապատասխան ռիելթորին, բայց նաեւ նշեմ, որ սա բավականին կայացած ոլորտ է: Նրանք ներգրավված են շուկայում բավականին շատ գործընթացներում, այդ են վկայում նախորդ տարի 47 կազմակերպությունների լիցենզավորումը, ունեն իրենց գրասենյակները, հեռուստահաղորդումները, գովազդները: Ներկայումս ընթանում են քննարկումներ «Ռիելթորության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման անհրաժեշտության կապակցությամբ: Կոմիտեում պարբերաբար կազմակերպվում եւ հետագայում եւս կազմակերպվելու են հանդիպումներ, խորհրդակցություններ ռիելթորների մասնակցությամբ: Ներկայումս շուկայում գործում են նաեւ չլիցենզավորված ռիելթորները, որոնք էլ կարող են հանդիսանալ առկա անվստահության պատճառը: Ոլորտը կանոնակարգելու հետագա ծրագրերի մաս են կազմելու նաեւ չլիցենզավորված ռիելթորների գործունեությունը բացառելուն ուղղված քայլերը, որի արդյունքում կարող է բարձրանալ բնակչության վստահությունը տվյալ ոլորտի մասնագետների նկատմամբ:

Գայանե Հովսեփյան, Երեւան

- 2 տարի առաջ թաղամասերից եկան մեր տուն՝ գույքահարկը գանձելու: Պարզվեց, որ ես ավելի շատ պետք է վճարեմ, քան իմ հարեւանը, որի բնակարանը համադա նույն չափերն ունի, ինչպես նաեւ բավական մեծ չափերի անօրինական շինություն: Կարծում եմ, անարդարացի է, որ նա, ով չի կատարում անօրինական շինարարություն, ավելի շատ է վճարում գույքահարկ, քան նա, ով անօրինական բնակարան է կառուցում ի հաշիվ շենքի բակի: Ինձ թաղամասերանի աշխատակիցը ասաց, որ կադաստրն է գույքահարկը այդպես սահմանել:

- «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն, կադաստրի կոմիտեն երեք տարին մեկ անգամ իրականացնում է գույքահարկով հարկվող օբյեկտ հանդիսացող շենքերի, շինությունների կադաստրային գնահատում, որի հիման վրա ձեւավորվում է գույքահարկի բազան: Ձեւավորված բազաները սահմանված կարգով հանձնվում են տեղական ինքնակառավարման մարմիններին, որոնք էլ իրականացնում են գույքահարկի հաշվառման եւ գանձման գործառույթները: 2005 թ.-ին «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններին կից ինքնակամ կառույցները եւս գնահատվեցին եւ ընդգրկվեցին գույքահարկի բազաներում: Ինչ մնում է ինքնակամ կառույցին, ապա այստեղ պետք է նշեմ, որ օրենսդրությամբ նախատեսված է նաեւ այլ դրույթներ: Մասնավորապես՝ լուծք պատասխանատվություն է սահմանված ՀՀ վարչական իրավախախտումների մասին եւ քրեական օրենսգրքերով, ըստ որի վարչական եւ քրեական պատասխանատվություն է սահմանված ոչ միայն իրականացնողի, այլեւ պատշաճ վերահսկողություն չիրականացնողի նկատմամբ: Այդ լիազորությունները վերապահված են համայնքում՝ համայնքի ղեկավարներին եւ տեսչական ֆունկցիաներ ունեցող պետական լիազորված մարմիններին:

Ավետիս Պողոսյան, ք.Երեւան

- Պարոն Վարդանյան, որքան ինձ է հայտնի, Երեւանի առանձնատների մի մասը դեռեւս սեփականաշնորհված չէ: Մասնավորապես, Ներքին Շենգավիթ թաղամասի տները, որոնք կառուցվել են 1960-70-ական թվականներին եւ մինչ այժմ համարվում են ադմինիստրատիվ: Խնդրում եմ ասեք, թե կադաստրի պետական կոմիտեն կամ կառավարությունն ի՞նչ նոր քայլեր են նախատեսում այդ տները նույնպես օրինական դաշտ բերելու, սեփականության վկայականներ հատկացնելու համար:

- Ընդհանրապես անշարժ գույքի հետ կապված ցանկացած խնդրի լուծում օրենսդրորեն հստակ կարգավորված է: Ձեր կողմից նշված թաղամասի խնդրին տեղյակ եմ, սակայն այդ խնդիրները քաղաքապետի իրավասության ներքո են: Այդ կարգով կարգավորվեց Սիլիկյան թաղամասի խնդիրը: Նման խնդիրներ կան Սարի Թաղ, Ներքին Չարբախ, Նուբարաշեն, Նորագյուղ, Քանաքեռ թաղամասերում: Իսկ եթե կոնկրետ Ձեր դեպքը ինքնակամ կառույցի խնդրին է առնչվում, ապա այն պետք է կարգավորվի ՀՀ կառավարության 18.05.06թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման եւ տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912 որոշմամբ: Երկու դեպքերում էլ սեփականության վկայականներ կարող են տրամադրվել Երեւանի քաղաքապետի կողմից խնդիրները կարգավորելուց հետո:

(մասնակի կրճատումներով)

Դատություն

ծառայության առաջաստր պաշտոնների խմբի 1-ին ենթախումբ կող՝ ԴԴ -3.1-96):

Տնտեսական շահագործման վարչության ավագ մասնագետը աշխատանքի է ընդունվում Դեղարտամենտի վարչական շենքերի եւ դրանց հարող տարածքների շահագործումը, բարեկարգումը, ընթացիկ շինարարությունը, աշխատանքի է ընդունվում դասարանների աշխատանքային անհրաժեշտ պայմանները, համակարգչային, հեռախոսակապի, կապի այլ տեսակի աշխատանքը, աշխատանքի է ընդունվում ընթացիկ տարվա ֆինանսական հաշվեցումների խնայողական օգտագործումը եւ աշխատանքային արժեքների պահպանվածությունը, դեղարտամենտի կառուցվածքային եւ առանձնացված ստորաբաժանումների հետ համատեղ աշխատանքի է ընդունվում դեղարտամենտի ղեկավարի, դեղարտամենտի այլ պաշտոնաստր անձանց մասնակցությամբ անցկացվող առողջապահական եւ այլ միջոցառումների տեխնիկական օժանդակությունը:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն իրավաբանական կրթություն,
- դասական (պետական) ծառայության առաջաստր պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա աստիճան կամ առնվազն երեք տարվա դասական ծառայության աստիճան կամ դասական ծառայության առնվազն 2-րդ դասի առաջաստր ծառայողի դասային աստիճան կամ գիտական աստիճան կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային աստիճան կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական ծառայության համարժեք պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային աստիճան:
- իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- գրական հայերենի պատշաճ իմացություն.
- տիրապետում է առնվազն երկու օտար լեզվի:

7. ՀՀ տնտեսական դատարանի աշխատակազմի գրասենյակի ավագ մասնագետ (դասական ծառայության առաջաստր պաշտոնների խմբի 1-ին ենթախումբ կող՝ ԴԴ -3.1-101):

8. Երեւան քաղաքի Ավան եւ Նոր-Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի աշխատակազմի գրասենյակի ավագ մասնագետ (դասական ծառայության առաջաստր պաշտոնների խմբի 1-ին ենթախումբ կող՝ ԴԴ -3.1-105)

9. Երեւան քաղաքի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի աշխատակազմի գրասենյակի ավագ մասնագետ (դասական ծառայության առաջաստր պաշտոնների խմբի 1-ին ենթախումբ կող՝ ԴԴ -3.1-106) :

10. Երեւան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի աշխատակազմի գրասենյակի ավագ մասնագետ (դասական ծառայության առաջաստր պաշտոնների խմբի 1-ին ենթախումբ կող՝ ԴԴ -3.1-107):

11. Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքների առաջին ատյանի դատարանի աշխատակազմի գրասենյակի ավագ մասնագետ (դասական ծառայության առաջաստր պաշտոնների խմբի 1-ին ենթախումբ կող՝ ԴԴ -3.1-108):

12. Երեւան քաղաքի Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի աշխատակազմի գրասենյակի ավագ մասնագետ (դասական ծառայության առաջաստր պաշտոնների խմբի 1-ին ենթախումբ կող՝ ԴԴ -3.1-109):

13. Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի աշխատակազմի գրասենյակի ավագ մասնագետ (դասական ծառայության առաջաստր պաշտոնների խմբի 1-ին ենթախումբ կող՝ ԴԴ -3.1-110):

14. Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի աշխատակազմի գրասենյակի ավագ մասնագետ (դասական ծառայության առաջաստր պաշտոնների խմբի 1-ին ենթախումբ կող՝ ԴԴ -3.1-111):

15. Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի աշխատակազմի գրասենյակի ավագ մասնագետ (դասական ծառայության առաջաստր պաշտոնների խմբի 1-ին ենթախումբ կող՝ ԴԴ -3.1-112):

16. Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի աշխատակազմի գրասենյակի ավագ մասնագետ (դասական ծառայության առաջաստր պաշտոնների խմբի 1-ին ենթախումբ կող՝ ԴԴ -3.1-114):

17. Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի աշխատակազմի գրասենյակի ավագ մասնագետ (դասական ծառայության առաջաստր պաշտոնների խմբի 1-ին ենթախումբ կող՝ ԴԴ -3.1-115):

18. Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի աշխատակազմի գրասենյակի ավագ մասնագետ (դասական ծառայության առաջաստր պաշտոնների խմբի 1-ին ենթախումբ կող՝ ԴԴ -3.1-116):

19. Վայոց ձորի մարզի առաջին ատյանի դատարանի աշխատակազմի գրասենյակի ավագ մասնագետ (դասական ծառայության առաջաստր պաշտոնների խմբի 1-ին ենթախումբ կող՝ ԴԴ -3.1-117):

20. Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի աշխատակազմի գրասենյակի ավագ մասնագետ (դասական ծառայության առաջաստր պաշտոնների խմբի 1-ին ենթախումբ կող՝ ԴԴ -3.1-118):

Սույն հայտարարության 7-20 կետերում նշված գրասենյակի ավագ մասնագետներն իրականացնում են հետեւյալ գործառույթները՝

Գրասենյակի ավագ մասնագետը գրասենյակի պետի հանձնարարությամբ նախապատրաստում է անհրաժեշտ նյութեր եւ տեղեկատվություն, առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր եւ այլ գրություններ, աշխատանքի է ընդունվում դասարան ներկայացվող բոլոր փաստաթղթերի եւ դասական գործերի ստացումը, գրանցումը եւ հանձնումը հասցեատերերին աշխատանքի է ընդունվում դասարանից առաքվող բոլոր փաստաթղթերի ու գործերի գրանցումն ու առաքումը, աշխատանքի է ընդունվում փաստաթղթերի, գրասենյակում պահվող մատյանների պահպանումը եւ դրանք ներկայացնում արխիվացման վարում է պետական տուրքի հաշվառումը կազմում է վիճակագրական հաշվետվություններ պատասխանատվություն է կրում գործավարության իրականացման արդյունքում ստացված տեղեկատվության ամբողջականության, հավաստիության եւ ճշգրտության համար :

Սույն հայտարարության 7-20 կետերում նշված թափուր պաշտոններն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն,
- դասական (պետական) ծառայության պաշտոններում երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.
- իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- գրական հայերենի պատշաճ իմացություն:

21. ՀՀ դասական դեղարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ (դասական ծառայության առաջաստր պաշտոնների խմբի 2-րդ ենթախումբ կող՝ ԴԴ -3.2-164.3):

ՀՀ դասական դեղարտամենտի համակարգչային ծառայության մասնագետը իրականացնում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության, տեղեկատվական միջազգային համակարգերի, հասանելիության միջոցների նախագծումը, դրանց շահագործումը, իրականացնում է Դեղարտամենտի ցանցի ծրագրային անվտանգությունը, Դեղարտամենտում կազմակերպում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը, արխիվացնում եւ պահպանում է էլեկտրոնային գործավարության եւ նրա գործունեության ընթացքում առաջացած էլեկտրոնային փաստաթղթերը:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն իրավաբանական կրթություն,
- դասական (պետական) ծառայության պաշտոններում երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.
- իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- գրական հայերենի պատշաճ իմացություն:

22. ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի համակարգչային մասնագետ (դասական ծառայության առաջաստր պաշտոնների խմբի 2-րդ ենթախումբ կող՝ ԴԴ-3.2-165):

ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի համակարգչային մասնագետն իրականացնում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության, տեղեկատվական միջազգային համակարգերի, հասանելիության միջոցների նախագծումը, դրանց շահագործումը, իրականացնում է Դեղարտամենտի ցանցի ծրագրային անվտանգությունը., Դեղարտամենտում կազմակերպում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը, արխիվացնում եւ պահպանում է էլեկտրոնային գործավարության եւ նրա գործունեության ընթացքում առաջացած էլեկտրոնային փաստաթղթերը.

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն,
- դասական (պետական) ծառայության պաշտոններում երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.
- իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- գրական հայերենի պատշաճ իմացություն:

23. ՀՀ դասական դեղարտամենտի դասական պրակտիկայի ամփոփման վարչության դասական վիճակագրության բաժնի մասնագետ (դասական ծառայության առաջաստր պաշտոնների խմբի 2-րդ ենթախումբ կող՝ ԴԴ -3.2-153):

ՀՀ դասական դեղարտամենտի դասական պրակտիկայի ամփոփման վարչության դասական վիճակագրության բաժնի մասնագետը բաժնի պետի հանձնարարությամբ կամ բաժնի աշխատանքային ծրագրին համապատասխան իրականացնում է ՀՀ դասարաններում դասական վիճակագրության ուսումնասիրություններ եւ կատարված աշխատանքների արդյունքների մասին ներկայացնում է համապատասխան հաշվետվություններ եւ առաջարկություններ, բաժնի պետի հանձնարարությամբ նախապատրաստում է անհրաժեշտ նյութեր, կատարված ուսումնասիրությունների վերաբերյալ կազմում տեղեկանքներ, վարում է դասական վիճակագրությունը եւ իրականացնում է Օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորություններից բխող այլ գործառույթներ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն իրավաբանական կրթություն,
- դասական (պետական) ծառայության պաշտոններում երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.
- իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- գրական հայերենի պատշաճ իմացություն:

24. ՀՀ դասական դեղարտամենտի տնտեսական շահագործման վարչության մասնագետ (դասական ծառայության առաջաստր պաշտոնների խմբի 2-րդ ենթախումբ կող՝ ԴԴ -3.2-150):

Տնտեսական շահագործման վարչության մասնագետը իսկողություն է իրականացնում դեղարտամենտի գույքի տնօրինման, նպատակային օգտագործման նկատմամբ, վարչության պետի հանձնարարությամբ նախապատրաստում է անհրաժեշտ նյութեր եւ տեղեկատվություն, իրականացնում է Օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորություններից բխող այլ գործառույթներ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն,
- դասական (պետական) ծառայության պաշտոններում երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական ծառայության համարժեք պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.
- իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- գրական հայերենի պատշաճ իմացություն:

25. ՀՀ դասական դեղարտամենտի տնտեսական շահագործման վարչության գնումների գծով մասնագետ (դասական ծառայության առաջաստր պաշտոնների խմբի 2-րդ ենթախումբ կող՝ ԴԴ-3.2-149.2):

Տնտեսական շահագործման վարչության գնումների գծով մասնագետը իրականացնում է՝ դեղարտամենտի կառուցվածքային եւ առանձնացված ստորաբաժանումներին անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռք բերումը, գնման հայտի փաթեթների կազմումը, ինչպես նաեւ մասնակցում է գնումների գործընթացին, իսկողություն դեղարտամենտի գույքի տնօրինման, նպատակային օգտագործման նկատմամբ, վարչության պետի հանձնարարությամբ նախապատրաստում է անհրաժեշտ նյութեր եւ տեղեկատվություն, իրականացնում է Օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորություններից բխող այլ գործառույթներ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն,
- դասական (պետական) ծառայության պաշտոններում երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական ծառայության համարժեք պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.
- իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- գրական հայերենի պատշաճ իմացություն:

26. ՀՀ դասական դեղարտամենտի ՀՀ դատարանների արխիվի մասնագետ թափուր 2 հաստիք (դասական ծառայության առաջաստր պաշտոնների խմբի 2-րդ ենթախումբ կող՝ ԴԴ-3.2-152.1, ԴԴ-3.2-152.2):

ՀՀ դասական դեղարտամենտի ՀՀ դատարանների արխիվի մասնագետը կատարում է արխիվ հանձնված դասական ակտերի գիտատեխնիկական մշակում, համակարգում եւ դասավորում, պատասխանատվություն է կրում ՀՀ դատարանների արխիվ հանձնված գործերի, վճիռների, դատավճիռների, որոշումների եւ այլ փաստաթղթերի պահպանության հարցում, կատարում է ՀՀ դատարանների արխիվ հանձնված գործերի, վճիռների, դատավճիռների, որոշումների հաշվառում, կատարում է ՀՀ դատարանների արխիվի պետի կողմից հանձնարարությունները՝ արխիվի աշխատանքները կազմակերպելու համար, ՀՀ դատարանների արխիվի պետի հանձնարարությամբ կամ ՀՀ դատարանների արխիվի աշխատանքային ծրագրին համապատասխան իրականացնում է ՀՀ դատարաններում աշխատանքի կազմակերպման ուսումնասիրություններ, ՀՀ դատարանների արխիվի պետի հանձնարարությամբ նախապատրաստում է անհրաժեշտ նյութեր եւ տեղեկատվություն.

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն,
- դասական (պետական) ծառայության պաշտոններում երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.
- իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- գրական հայերենի պատշաճ իմացություն:

27. ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի աշխատակազմի գրասենյակի գործավար (դասական ծառայության կրտսեր պաշտոնների խմբի 2-րդ ենթախումբ կող՝ ԴԴ-4.2-233):

Գրասենյակի գործավարը գրասենյակի պետի հանձնարարությամբ օժանդակում է գրասենյակի խնդիրների լուծմանը, իրականացնում է գրասենյակի առջեւ դրված գործառույթներից եւ խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների եւ այլ փաստաթղթերի պահպանության եւ արխիվացման աշխատանքները, իրականացնում է գրասենյակի փաստաթղթային սպասարկումը, փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքները, համակարգչային մուտքագրման եւ ելքագրման աշխատանքները, իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

28. ՀՀ քրեական եւ զինվորական գործերով վերաքննիչ դատարանի աշխատակազմի գրասենյակի գործավար (դասական ծառայության կրտսեր պաշտոնների խմբի 2-րդ ենթախումբ կող՝ ԴԴ-4.2-234):

Գրասենյակի գործավարը գրասենյակի պետի հանձնարարությամբ օժանդակում է գրասենյակի խնդիրների լուծմանը, իրականացնում է գրասենյակի առջեւ դրված գործառույթներից եւ խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների եւ այլ փաստաթղթերի պահպանության եւ արխիվացման աշխատանքները, իրականացնում է գրասենյակի փաստաթղթային սպասարկումը, փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքները, համակարգչային մուտքագրման եւ ելքագրման աշխատանքները, իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

29. Երեւան քաղաքի Էրեբունի եւ Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի աշխատակազմի գրասենյակի գործավար (դասական ծառայության կրտսեր պաշտոնների խմբի 2-րդ ենթախումբ կող՝ ԴԴ-4.2-236):

Գրասենյակի գործավարը գրասենյակի պետի հանձնարարությամբ օժանդակում է գրասենյակի խնդիրների լուծմանը, իրականացնում է գրասենյակի առջեւ դրված գործառույթներից եւ խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների եւ այլ փաստաթղթերի պահպանության եւ արխիվացման աշխատանքները, իրականացնում է գրասենյակի փաստաթղթային սպասարկումը, փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքները, համակարգչային մուտքագրման եւ ելքագրման աշխատանքները, իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

30. Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի աշխատակազմի գրասենյակի գործավար (դասական ծառայության կրտսեր պաշտոնների խմբի 2-րդ ենթախումբ կող՝ ԴԴ -4.2-237):

Գրասենյակի գործավարը գրասենյակի պետի հանձնարարությամբ օժանդակում է գրասենյակի խնդիրների լուծմանը, իրականացնում է գրասենյակի առջեւ դրված գործառույթներից եւ խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների եւ այլ փաստաթղթերի պահպանության եւ արխիվացման աշխատանքները, իրականացնում է գրասենյակի փաստաթղթային սպասարկումը, փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքները, համակարգչային մուտքագրման եւ ելքագրման աշխատանքները, իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

27-30 կետերում նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝

- միջնակարգ կրթություն.
- իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն.
- համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- գրական հայերենի պատշաճ իմացություն.

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթին կարող են դիմել միայն ՀՀ քաղաքացիները:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթին դիմողները Դեղարտամենտի կենտրոնական մասնաճյուղերի բաժին (ք. Երեւան, Վազգեն Սարգսյան 5) պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝

- գրավոր դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով՝ նշելով այն պաշտոնը, որին հավակնում է.
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք հատատասխան մասնաճյուղից) պատճենները բնօրինակների հետ միասին.
- առկա սեռի անձին՝ նաեւ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին.
- տեղեկանք դասական ծառայության պաշտոնում նշանակվելու դեպքում ծառայողական պարտականությունների կատարմանը եւ լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդություններով չտառապելու մասին (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1535-Ն որոշմամբ).
- երկու լուսանկար՝ 3X4 սմ չափի.
- անձնագրի պատճենը:

Դիմողը մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ:

Դիմողները մրցույթին ներկայանում են անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչեւ 17:30-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 9.03.2007 թ.:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաեւ պաշտոնի անձնագրին ծանոթանալու համար կարող են դիմել Դեղարտամենտի կադրերի բաժին (ք. Երեւան, Վազգեն Սարգսյան 5, հեռ. 56-79-53):

24 - 26-րդ կետերում նշված թափուր պաշտոններն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 16.03.2007թ.՝ ժամը 11:00-ին, Դեղարտամենտի շենքում (ք. Երեւան, Վազգեն Սարգսյան 5, հեռ. 56-79-53):

21 - 22-րդ կետերում նշված թափուր պաշտոններն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 16.03.2007թ.՝ ժամը 15:00-ին, Դեղարտամենտի շենքում (ք. Երեւան, Վազգեն Սարգսյան 5, հեռ. 56-79-53):

7 - 20-րդ կետերում նշված թափուր պաշտոններն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 20.03.2007թ.՝ ժամը 11:00-ին, Դեղարտամենտի շենքում (ք. Երեւան, Վազգեն Սարգսյան 5, հեռ. 56-79-53):

27 - 30-րդ կետերում նշված թափուր պաշտոններն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 20.03.2007թ.՝ ժամը 15:00-ին, Դեղարտամենտի շենքում (ք. Երեւան, Վազգեն Սարգսյան 5, հեռ. 56-79-53):

3 - 6-րդ., 23-րդ կետերում նշված թափուր պաշտոններն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 21.03.2007թ.՝ ժամը 11:00-ին, Դեղարտամենտի շենքում (ք. Երեւան, Վազգեն Սարգսյան 5, հեռ. 56-79-53):

1-ին եւ 2-րդ կետերում նշված թափուր պաշտոններն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 21.03.2007թ.՝ ժամը 15:00-ին, Դեղարտամենտի շենքում (ք. Երեւան, Վազգեն Սարգսյան 5, հեռ. 56-79-53):

ՌՈՒՍԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ

Չիրականացված հույսերի բեռը

Վիճարկվում է ռուս-ադրբեջանական ռազմավարական համագործակցությունը

Ադրբեջանում 2006 թ. անցկացված Ռուսաստանի տարին ակնարկելով՝ որոշ տարգլուխներ 2007 թվականը հայտարարել են «Ռուսաստանի հակատարի»: Թեեւ դա ծայրահեղություն է, բայց Մոսկվա-Բաքու հարաբերություններում փաստորեն որոշակի սառնություն է ծագել:

«Մոսկովսկիե նովոստի» թերթը հիշեցնում է, որ անցյալ տարվա փետրվարին նախագահներ Վլադիմիր Պուտինը եւ Իլհամ Ալիեւը հանդիսավոր պայմաններում բացեցին Ադրբեջանում Ռուսաստանի տարին, խոսեցին բոլոր ոլորտներում ռազմավարական համագործակցության ընդլայնման եւ ամրապնդման մասին: Նախատեսվեց երկկողմ առեւտրաբաշխանառության ծավալը հասցնել տարեկան 2 մլրդ դոլարի:

Երկկողմ առեւտրի ծավալն անցյալ տարի կազմեց մեկուկես միլիարդ դոլար, որը բավական լավ ցուցանիշ է: Սակայն «բոլոր ոլորտների ռազմավարական համագործակցությունն» անմիջապես հարցականի տակ դրվեց, հենց որ Մոսկվան ԱՊՀ երկրների հետ շուկայական հարաբերությունների խորացման հերթական քայլն արեց եւ Բաքվին առաջարկեց 2007 թ. 1000 խմ գազը գնել 235 դոլարով:

Բաքվի իշխանությունները մերժեցին «Գազպրոմի» առաջարկը, նախընտրելով մազութով աշխատեցնել սեփական ջերմաէլեկտրակայանները:

Կրակի վրա յուղ ավելացրին մանրածախ առեւտրի ոլորտում հունվարի 15-ից Ռուսաստանի սահմանած նոր կանոնները: Դրանց համաձայն, մինչեւ ապրիլի 1-ը երկրի մանրածախ առեւտրի ցանցը պետք է ազատվի օտարերկրացիներից, այդ թվում հարյուր հազարավոր ադրբեջանցիներից:

Որքան էլ տարօրինակ թվա, վերջին խնդիրն Ադրբեջանի համար կարող է ավելի բարդ լինել, քան գազի խնդիրը: Նախ եւ առաջ երկրի տնտեսությունը կզրկվի տարագիր աշխատավորների կողմից ամեն տարի ուղարկվող 1-1,5 մլրդ դոլարից: Երկրորդ, փորձագետները կանխատեսում են սոցիալ-քաղաքական լարվածության կտրուկ աճ, որը տեղի կունենա տարագիրների հայրենադարձման հետեւանքով:

Տվյալ հարցով մտահոգված նախագահ Իլհամ Ալիեւի նախաձեռնությամբ կառավարությանն առընթեր ստեղծվել է հատուկ հանձնաժողով, որին հանձնարարված է գտնել սպասվող «փոթորկի» սրությունը մեղմացնող լուծումներ:

Ադրբեջանի իշխանությունները Մոսկվայի «գազային եւ աշխատանքային ահաբեկմանը» պատասխանեցին երկու քայլերով: Արդեն հունվարին Ադրբեջանի պետական նավթային ընկերությունը դադարեցրեց նավթի արտահանումը Բաքու-Նովոռոսիյսկ նավթամուղով (2006 թ. ընկերությունը դրանով արտահանել էր 1,2 մլն տոննա նավթ, որից ռուսական «Տրանսնեֆթը» 18,8 մլն դոլար եկամուտ էր ստացել): Երկրորդ քայլն այն էր, որ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային խորհուրդը որոշեց հուլիսի 1-ից Ադրբեջանի տարածքում դադարեցնել ռուսական «PTP-պլանետա» եւ «Առաջին ալիք» հեռուստաալիքների տարածումը:

Միաժամանակ Բաքուն փորձում է հանդես գալ վերապահումներով, որպեսզի ինչ-որ չափով մեղմացնի երկկողմ լարվածությունը: Կառավարության տնտեսական եւ վարկաֆինանսական քաղաքականության վարչության պետ Օկտայ Ախվերդիեւը «Մոսկովսկիե նովոստի» թերթի թղթակցին հայտարարեց, որ երկու երկրների տնտեսությունը զարգանում է շուկայական սկզբունքներով, ուստի գազի թանկացումը եւ Ռուսաստանում մանրածախ առեւտրի նոր կանոնների հաստատումը չարժե քաղաքականացնել:

Կովկասի ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն Էլդար Իսմայլովն իր հերթին հիմարություն է անվանել Ադրբեջանում հակառուսական տարի անցկացնելու հայտարարությունները: Նրա կարծիքով, Բաքուն եւ Մոսկվան կապված են տնտեսական, քաղաքական եւ հումանիտար բնույթի վաղեմի ու բազմամակարդակ կապերով:

Իսմայլովի խոսքերով, գլոբալացման ներկայիս ժամանակաշրջանում Ադրբեջանը շարժվում է դեպի ԵՄ, ԱՄՆ եւ ՆԱՏՕ: Ռուսաստանից հեռանալը նա համարում է «միանգամայն օրինաչափ» երեւույթ: Ադրբեջանցի քաղաքագետի կարծիքով, այս տարի Մոսկվա-Բաքու հարաբերությունները կլինեն բարդ: «Բայց բարդությունները տնտեսական բարեփոխումների եւ համաշխարհային ընկերակցության մեր երկրների ինտեգրման անխուսափելի վարձն են», ընդգծում է փորձագետը:

Պ. Ք.

Գնացքի պայթյուն Հնդկաստանում

Դա թերեւս հնդկա-պակիստանյան հաշտեցումը շախտելու փորձ է

Երեկ գիշեր Դելիից մոտ 100 կմ հյուսիս՝ Պանիպատ քաղաքի մոտակայքում ռումբեր են պայթել դեպի Պակիստան շարժվող «Բարեկամության գնացքում»: Կա առնվազն 66 զոհ: Վիրավորների թիվն անհամեմատ մեծ է:

Ֆրանսպրեսը մեջբերում է Հնդկաստանի երկաթուղիների նախարարի խոսքերը, որի կարծիքով, պայթեցման նպատակը հնդկա-պակիստանյան հաշտության գործընթացի ձախողումն է:

Պայթուցիկները հայտնաբերվել են երկու ճամպրուկներում: «Թայմս նաու» հեռուստաընկերությունը հաղորդում է, որ պայթյունների հետեւանքով գնացքում հրդեհ է բռնկվել, բայց փրկարարները տեղ են հասել մեկուկես ժամ հետո միայն:

Անցյալ տարվա հուլիսին Բոմբեյի արվարձանում տեղի էին ունեցել գնացքների համանման պայթեցումներ, որոնց հետեւանքով զոհվել էին 186 եւ վիրավորվել ավելի քան 800 անձինք: Այդ ահաբեկչությունները մի քանի ամսով ընդհատել էին 2004 թ. հունվարին սկիզբ առած հնդկա-պակիստանյան հաշտության գործընթացը: Այն ժամանակ Դելին Իսլամաբադին մեղադրել էր պայթյունները կազմակերպած զինյալներին աջակցելու մեջ:

ARMENPRESS/G

1947 թ.-ից իրար հետ երեք անգամ պատերազմած Հնդկաստանն ու Պակիստանը վերջերս փոխանակեցին իրենց միջուկային օբյեկտների քարտեզները, որպեսզի նոր պատերազմի դեպքում չհարվածեն դրանց: 2006 թ. վերջերին նրանք որոշեցին նաեւ գործակցել հակաահաբեկչական պայքարում:

Պ. Ք.

Երուսաղեմում պղծել են սիոնիզմի հիմնադրի գերեզմանը

Երուսաղեմում վանդալները պղծել են սիոնիզմի հիմնադիր Թեոդոր Հերցլի գերեզմանը: Նրանք պոկոտել են ծաղիկները, պատռել իսրայելական դրոշներից մեկը, իսկ մյուսը գողացել են: «Եդիոտ Ահրոնոտ» թերթը հաղորդում է, որ ոստիկանությունը միջադեպի կապակցությամբ քննություն է սկսել:

Թեոդոր Հերցլը քաղաքական սիոնիզմի հիմքը դրեց, 19-րդ դարում առաջ քաշելով հրեաների պատմական հայրենիք վերադառնալու եւ Պաղեստինում հրեական պետություն ստեղծելու գաղափարը: 1897 թ. նա Բազելում անցկացրեց առաջին սիոնիստական համագումարը, որտեղ հիմնվեց Համաշխարհային սիոնիստական կազմակերպությունը:

Հերցլը մահացավ Վիեննայում 1904 թ.: Իր կտակում նա խնդրեց իրեն վերաթաղել աղագա հրեական պետության տարածքում: 1949 թ. սիոնիզմի հիմնադրի աճյունը տեղափոխեցին Երուսաղեմ եւ վերաթաղեցին իր անունը կրող բլրի վրա:

ԻՍՊԱՆԻԱ

Անդալուզիան դարձավ ինքնավար

Իսպանիայի հարավում գտնվող Անդալուզիայի մարզի բնակիչները կիրակի օրն անցկացված հանրաքվեի ժամանակ հավանություն են տվել մարզի ինքնավարացման նախագծին: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ Անդալուզիայի ինքնավարության կարգավիճակի օգտին արտահայտվել է մարզի բնակչության մոտավորապես 90 տոկոսը:

Ընդունված փաստաթղթի ներածությունում Իսպանիայի ամենաաղքատ շրջաններից մեկը համարվող Անդալուզիան բնութագրվում է որպես «ազգային իրողություն»: Փաստաթուղթն ընդլայնում է մարզի իրավասությունները հարկային ոլորտում:

Սպանվել է Ֆիլիպինյան թերթերից մեկի խմբագիրը

Ֆիլիպիններում երեկ գնդակահարվել է «Lighting Courier Weekly» թերթի գլխավոր խմբագիր Հերնանի Պատոլերոն: Ֆրանսպրեսի տվյալներով, միջադեպը տեղի է ունեցել Մինդանաո կղզու Կոտաբատո քաղաքից ոչ հեռու: Երբ Պատոլերոն պատրաստվում էր սրճարան մտնել, հանցագործները երկու անգամ կրակել են նրա գլխին եւ ապա փախուստի դիմել մոտոցիկլետով:

Սա Ֆիլիպիններում լրագրողի սպանության առաջին դեպքն է 2007 թվականին: Անցյալ տարի զոհվել էին հինգ, 2005 թ.՝ վեց լրագրողներ: Ոստիկանությունն այդ հանցագործություններից ոչ մեկը չի բացահայտել:

Միջազգային իրավապաշտպանական կազմակերպությունների կարծիքով Ֆիլիպինները լրագրողների համար առավել վտանգավոր երկրների ցանկում երկրորդ տեղն է զբաղեցնում Իրաքից հետո:

Պ. Ք.

ԹԳԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԼՈՆԴՈՆԻՑ

Շերիֆի տեղակալը խոսում է

Շերիֆն անշուշտ Բուշն է: Նրա տեղակալը (կամ տեղակալներից մեկը)՝ այս դեպքում Ավստրալիայի վարչապետ Ջոն Հովարդը: Անգլիաբնակ անկախ լրագրող Գուին Դայերն անդրադառնում է վերջինիս միջամտությանն ամերիկյան նախընտրական պայքարին:

Որոշ մարդիկ ծնվել են այնպիսի անամոթ լկտիության տաղանդով, որ քաղաքագետ լինելուց բացի այլ ելք չունեն: Նման մի անձնավորություն է Ավստրալիայի վարչապետ Ջոն Հովարդը, որն օրերս միջամտելով Մ. Նահանգների առաջիկա նախագահական մրցարշավին, զգուշացրեց ամերիկացիներին չքվեարկել հոգուս դեմոկրատների ընդհանրապես եւ Բարաք Օբամայի մասնավորապես:

Հայտարարելով իր թեկնածության մասին Օբաման ասել էր, որ ամերիկյան զորքերը պետք է դուրս գան Իրաքից մինչեւ 2008 թվի մարտը: Ջոն Հովարդը, որն այս տարվա վերջին նույնպես ներքաշված է լինելու վերընտրության մրցարշավի մեջ, անմիջապես կառչեց Օբամայի խոսքերից՝ վերահաստատելու իր ջերմ աջակցությունը Բուշի վարչակազմի մարտավարությանը, որով էլ առաջին հերթին առաջացավ Իրաքյան ճահճուտը:

Նա ասաց, որ Օբամայի Իրաքյան քաղաքականությունը «պարզապես քաջալերելու է բոլոր նրանց, ովքեր ցանկանում են ամբողջովին ապակայունացնել եւ քանդել Իրաքը, ստեղծելով քաոսային վիճակ եւ հաղթանակ ապահովելով ահաբեկիչներին, որոնք հույս ունեն, որ Օբաման կհաղթանակի»: (Նույնիսկ իր խոսքերն աղավաղելու մեջ նա շատ նման է նախագահ Ջորջ Բուշին):

Հովարդն այնուհետեւ շարունակեց. «Եթե ղեկավարեի «Ալ Ղաիդան» Իրաքում, շրջանակի մեջ կառնեի 2008 թ.-ի մարտը եւ ինչքան հնարավոր է շատ կաղոթեի ոչ միայն Օբամայի, այլ բոլոր դեմոկրատների համար»:

Եթե նույնիսկ ուշադրություն չդարձնենք «Ալ Ղաիդան» Իրաքում» սխալ արտահայտությանը, որով նա կարծես «Իրաքի ահաբեկիչներին» պատճառ եւ ոչ թե հետեւանք է համարում Իրաք ներխուժելու Մ. Նահանգներ-Մեծ Բրիտանիա-Ավստրալիա կոալիցիայի որոշումը, պետք է անհապաղ արձագանքենք, որ Հովարդը որպես օտար երկրի մի առաջնորդ, իրավունք չունի ամերիկացիներին թելադրելու, թե ում քվեարկեն:

Խիստ հետաքրքրական է Հովարդի մեծադողորդ խոսքերին տված Օբամայի պատասխանը, որով բացահայտում է Ավստրալիայի պաշտոնական քաղաքականության էությունը. «Ես ինձ շոյված եմ զգում, որ աշխարհի մյուս կողմում Ջորջ Բուշի դաշնակիցներից մեկն սկսեց հարձակվել ինձ վրա: Կուզենայի նշել, որ մենք մոտ 140 հազար զինվորներ ունենք այնտեղ (Իրաքում), եւ ինչքան գիտեմ, պրն Հովարդը տեղակայել է ընդամենը 1.400 զինվոր: Կառաջարկեի, որ նա եւս 20 հազար ավստրալացիների ուղարկեր Իրաք, պատերազմը լավ կազմակերպելու համար: Թե չէ այդ ամբողջը դատարկ խոսակցություն կլինի», ասաց Օբաման:

Հովարդի պատասխանը չուշացավ: Նա ասաց, որ ավստրալացիների ներկայությունն Իրաքում «շատ նշանակալի եւ համապատասխան ներդրում» էր՝ հաշվի առնելով իր երկրի բնակչության քանակը: Բայց մի՞թե դա իրոք այդպես է: Միացյալ Նահանգները մոտ 300 միլիոն բնակիչ ունի: Ավստրալիան՝ մոտ 20 միլիոն, այսինքն՝ Ամերիկայի բնակչության 1/15-րդը: Այնպես որ «նշանակալի եւ համապատասխան ներդրում» կատարելու համար Ավստրալիան պարտավոր էր 140 հազար (կամ ավելի ճիշտ 160 հազար, քանի որ Բուշը նախատեսում է 20 հազար զինվոր եւս ուղարկել) զինվորների 1/15-րդ մասի չափով (այսինքն՝ մոտ 10.600) զինվորներ ուղարկել եւ ոչ թե սոսկ 1.400:

Բայց այսպիսին է եղել ավստրալական պաշտպանության քաղաքականությունն ընդհանրապես:

Ավստրալիայի արտաքին քաղաքականության շրջադարձային կետը դարձավ այն գիտակցությունը 1942-43 թվերին, որ Անգլիան այլեւս չէր կարող պաշտպանել այդ երկիրը, եւ միակ մեծ տերությունը, որ կարող էր ստանձնել այդ դերը, Միացյալ Նահանգներն էր: Այդ օրվանից օրակարգային հարց է եղել երաշխիքներ գտնել ապահովելու այդ աջակցությունը:

Բնական է ավստրալական զորքերի ներկայությունն այնտեղ, որտեղ Մ. Նահանգները դրա կարիքն զգում է, ծառայում է այդ նպատակին: Բայց դա չափազանց նվաստացուցիչ քաղաքականություն է որեւէ երկրի համար: Այդ իսկ պատճառով ավստրալացիներին նման «օժանդակությունները» ներկայացվում են որպես սպառնալիքների դեմ պայքարելու անհրաժեշտություն: Վիետնամում դա «կոմունիստական սպառնալիքն» էր, Իրաքում՝ «ահաբեկչական սպառնալիքը» եւ այլն: Բայց միեւնույնն է, ուղարկված զինվորների քանակը մնում է հնարավորինս փոքր, չառաջացնելու համար հասարակության դժգոհությունը:

Ավստրալացիները ցարդ հնարավորություն չեն ունեցել պարզելու, թե իրենց երկրի վտանգի ենթարկվելու դեպքում Ամերիկան հասնելու է օգնության, թե ոչ: Սակայն իրենք (Ավստրալիայի պաշտպանական քաղաքականությունը վարողները) միշտ պատրաստ են օգնության ձեռք մեկնելու Ամերիկային: Եթե վերջինս մի օր Մարս ներխուժի, Ավստրալիան անպայման մի զորագունդ կուղարկի կատարած լինելու համար իր «նշանակալի եւ համապատասխան ներդրումը»:

Թարգմ. Հ. ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻ

«Հայաստանի լեռներում 500 հազար տարվա պատմություն»

Շիրակի հնագիտական գանձերի ցուցահանդեսը Սեն Ռաֆայելում



Ֆրանսիայի Սեն Ռաֆայել քաղաքի հնագիտական թանգարանի ցուցասրահում, այս երկրում Հայաստանի տարվա շրջանակներում արդեն մեկ ամիս գործում է «Հայաստանի լեռներում՝ 500 հազար տարվա պատմություն» ցուցահանդեսը, որը ներկայացնում է Շիրակի նյութական եւ հոգեւոր մշակույթը վաղ քարի դարից մինչեւ մ. թ. I-IV դարերը: Մեր երկրի այս հարուստ եւ ինքնատիպ պատմամշակութային ժառանգությամբ տարածաշրջանը ներկայացված է երեք տասնյակ հնավայրերից հայտնաբերված 350 ցուցանմուշներով, որոնցից 300-ը Շիրակի երկրագիտական թանգարանի նյութերից են: Ցուցահանդեսին իրենց մասնակցությունն են բերել Գյումրու «Կումայրի», Հայաստանի պատմության պետական, «Էրեբունի», Սեն Ժերմենի հնագիտական թանգարանները եւ Լուվրը:

«Հայաստանը Արարատ լեռան շուրջը սփռված կորուսյալ դրախտն է, որի մի մասնիկը ներկայումս ցուցադրվում է Սեն Ռաֆայելում», ցուցահանդեսի բացումից առաջ մամուլի եւ հասարակայնության համար կազմակերպված ասուլիսի ժամանակ այսպես է արտահայտվել ֆրանսիացի հնագետ Ֆրանսուա դ'Կլերֆոնտենը: Մոտ երկու ժամ տեւած ասուլիսի ընթացքում հայ եւ ֆրանսիացի կազմակերպիչները լուսանկարների ուղեկցությամբ մանրամասն տեղեկություններ են ներկայացրել Հայաստանի, հայոց պատմության ու մշակույթի, Շիրակի, ցուցադրանքի բովանդակության մասին, պատասխանել ներկաներին հետաքրքրող բազմաթիվ հարցերի: Բացմանը մասնակցել են Սեն Ռաֆայելի քաղաքապետ, պատգամավոր Ժորժ Ժինետան, Հայաստանի տարվա Ֆրանսիայի հանձնակատար Նելլի Տարդիվյե-Անրոն, հյուրընկալող երկրի եւ Եվրոպայի այլ քաղաքներից հրավիրված մոտ 300 հյուրեր:

Շիրակի երկրագիտական թանգարանի տնօրեն Համազասպ Խաչատրյանից նաեւ տեղեկացանք, որ ցուցադրությունն ընթանում է մեծ հաջողությամբ եւ արդեն ունեցել է հազարից ավելի այցելուներ, բազմիցս լուսաբանվել ֆրանսիական մամուլում ու ազգային հեռուստատեսությամբ: Տպագրվել է 210 էջանոց, հարուստ բովանդակությամբ շքեղ գիտական կատալոգ: Այս ամենի նախապատրաստմանն ու իրականացմանը կազմակերպչական եւ գործնական մեծ աջակցություն են ցուցաբերել ֆրանսիացի գործընկերները:

«Ցուցահանդեսի հաջողությունը պայմանավորված էր նաեւ այն մեծ աջակցությամբ, որ ցուցաբերվեց Ֆրանսիայում Հայաստանի տարվա հայկական կողմի հանձնակատար Վիգեն Սարգսյանի, «Ազգային տարի» ՊՈԱԿ-ի տնօրեն Արման Ծատուրյանի եւ ողջ աշխատակազմի կողմից», ընդգծեց Հ. Խաչատրյանը: Հարկ է նշել նաեւ Սեն Ռաֆայելի քաղաքապետարանի եւ հնագիտական թանգարանի աշխատակիցների ջերմ վերաբերմունքն ու ջանադիր աշխատանքը, որը պայմանավորված էր Հայաստանը եւ հայկական մշակույթը ֆրանսիական հասարակայնությանը լավագույնս ներկայացնելու ձգտումով:

«Հայաստանի լեռներում՝ 500 հազար տարվա պատմություն» ցուցահանդեսը Սեն Ռաֆայելում կգործի մինչեւ ընթացիկ տարվա մարտի վերջը: Ապրիլի սկզբից կտեղափոխվի Նորմանդիայի մայրաքաղաք Ռուան եւ տեղի հնագիտական թանգարանում կգործի միչեւ հուլիսի վերջը:

Գ. Մ.



Հանրային պատասխանատվությամբ ապրած մի կյանք

Սարգիս Հակոբյանի հիշատակին



Սարգիս Հակոբյանի ամփոփ կենսագրությունից, որ «Ազգին» տրամադրել է Հայաստանի Ամերիկյան համալսարանի «Հայաստանի թռչուններ» նախագծի տնօրեն Լեսլի Ջանոյանը, մեզ է ներկայանում հասարակական եւ ազգային կյանքով հետաքրքրված, բարեսիրությունը իրապես գոյակերպ դարձած մարդու կերպար: Ամերիկահայ մտավորականի բարեգործական իրագործումներին մեր հանրությունն անտեղյակ է, քրիստոնեական ներքին նկարագիրն է նրան մղել գործելու անաղմուկ ու ծածուկ: Ոչ հեռուստատեսությամբ, ոչ մամուլով այդ մասին չի խոսվել:

Մեկ ամիս առաջ ԱՄՆ Փենսիլվանիա նահանգի Իսթոն քաղաքում իր մահկանացուն կնքեց 80-ամյա Սարգիս Հակոբյանը՝ ազգային գործիչը եւ մեծ բարերարը: Ծագումով պարսկահայ, ծնվել է մտավորականի ընտանիքում. ծնողները բժիշկներ էին: Երիտասարդ տարիքում մեկնել է ԱՄՆ, տեխնիկական բարձրագույն կրթություն (ինժեներական) ստանալով, հիմնել է իր ընկերությունը՝ Acopian Technical Company: Մասնագիտական ունակությունները դրսեւորել է էլեկտրոնային սարքավորումների ոլորտում՝ նորարարական բազմաթիվ նախագծերով: Նրա անվան հետ են կապված էներգամատակարարման էլեկտրոնային սարքերը, արեգակնային մարտկոցներով ռադիոընդունիչները, Մյունխենբերգում ստեղծված թռչնաբանական կենտրոնը: Սակայն իր էության անբակտելի մաս, ներքին համոզմունքներին ու աշխարհայացքին ներդաշնակ բարեսիրական գործունեությունն իր ապրած կյանքի ու միջավայրի հանդեպ ունեցած պատասխանատվությունից է բխում: Ինչպես ԱՄՆ-ում, այդպես էլ Հայաստանում Սարգիս Հակոբյանը կարեւոր ներդրումներ է ունեցել բնապահպանության, առողջապահության, գիտության ոլորտներում, նույնպես եկեղեցաշինության մեջ: Մեծապես աջակցել է Ամերիկայի Հայ առաքելական թեմին: Հյուսիսային Կարոլինա նահանգում կառուցել է սբ. Սարգիս եկեղեցին: Գարեգին Ա կաթողիկոսի եւ Փառեն եպս. Ավետիքյանի նախաձեռնությամբ Գյումրիում կառուցել է սբ. Հակոբ եկեղեցին: Նրա բարեգործությամբ իրականացավ Երեւանում՝ սբ. Մեսրոպ եկեղեցու շինարարությունը եւս:

Հայաստանում նրա նպաստաբեր գործունեությունը արձանագրվում է տարբեր բնագավառներում: Լինելով Հայաստանի Ամերիկյան համալսարանի խոշոր եւ մշտական հովանավորներից մեկը՝ 1992-ին հիմնադրում է շրջակա միջավայրի պաշտպանության եւ հետազոտական կենտրոնը: Երկրաշարժից հետո Գյումրիում շինարարական նյութերի արտադրության գործարանի ստեղծման համար կատարում է ամենախոշոր ներդրումը: Ամբողջությամբ վերանորոգում եւ բուժսարքավորումներով վերազինում է Երեւանում ազգային բանակի ռազմական կենտրոնական հոսպիտալի վիրահատական բաժանմունքը: Հայաստանում եւ ԱՄՆ-ում թռչնաբանների իր կազմած խումբը սկսում է Հայաստանի թռչունների հետազոտման եւ հավաքման աշխատանքները եւ 1997, 1999, 2000 թվականներին հրատարակվում է «Հայաստանի թռչուններ» դաշտային ուղեցույցը, համանուն գիտական ձեռնարկը եւ քարտեզը՝ անգլերենով եւ հայերենով՝ շատ արժեքավոր ուսումնասիրություն եւ դիտարժան հրատարակություն:

Սարգիս Հակոբյանը աջակցել է նաեւ Ամերիկայի հայկական համագումարին: Կանադայում Հայաստանի դեսպանատան շենքը նույնպես նրա նվիրատվությունն է: Անշուշտ, մարդասիրական այսօրինակ գործունեությունն աննկատ չէր կարող անցնել, որքան էլ՝ նրա անձի համեստությանը. նրան արժանացրել են Էլիս Այլենդ եւ սբ. Գրիգոր Լուսավորիչ պատվո շքանշաններին ու Մյունխենբերգի համալսարանի գիտությունների դոկտորի կոչմանը:

Մ. Ռ.

Ազատության մենաշնորհը

Թե ինչպես են փորձում վերաբերմունք ունենալու իրավունքից զրկել

Ամենից պայմանականը մեր կյանքում ազատության ըմբռնումներն են: Իսկ դրա բացարձակը փնտրելն աբսուրդ է: Չարնոն էլ, թեեւ լավ է պարում, բայց «ազատագրված էներգիա» չկա մեջը, իր արվեստը կախված է իր մարմնից: Ազատության բազում սահմանումներ կան, բայց մենք դրանցից ու ազատության փիլիսոփայությունից անդին ենք ու ոչ էլ կփորձենք հետեւել «Ճանաչիր ճշմարտությունը, եւ նա կդարձնի քեզ ազատ» խոսքին, որովհետեւ միեւնույն է, սա էլ է վիճարկման ենթարկվելու:

Յուրաքանչյուր հասարակություն ինքն է նորմավորում իր կյանքն ու չափագրում ազատությունները. դրա համար օրենսդրական ինստիտուտներ են գործել ու գործում բոլոր ժամանակներում: Ու սա տարածվում է ինչպես ազատության առօրյա ըմբռնումների, նաեւ դրանց արվեստային դրսեւորումների վրա, այլապես մեր կյանքը քաոսի կվերածվի: Եվ վերջապես որեւէ մեկի ազատությունը վերջանում է այնտեղ, որտեղ սկսում է մյուսի իրավունքները: Պավոլ, սա է հանրային համակեցության պարտադրանքը: Ճգնակյաց մենավորի ու ինքնասույզ յոգի ժամանակներն անցել են վաղուց (որոնք թերեւս ավելի հեշտ ճանապարհով էին ուզում հասնել ազատության բարձրագույն վիճակի: Դե փորձիր առօրյայի լաբիրինթոսում ու հանրային կապանքների մեջ հասնել դրան): Հասարակական կյանքի ազատությունները, ըստ էության, նրա անդամների իրավունքների ու պարտականությունների շրջանակի մեջ զանազան սահմանադրություններով հաստատված են, բայց անհատականի պարագայում էլ յուրաքանչյուր մարդու ներսում, նույնիսկ ամենացինիկի, դրված է իր կյանքը կանոնավորող ինչ-որ ցենզուրա: (Սոլզաքարները կամ խելագարները մեկուսացվում են, հանցագործները՝ նույնպես, մարմնավաճառները եւս, համենայն դեպս, հասարակաց տները ինչ-որ առումով կյանքը որոշակիորեն կանոնավորելու նպատակով են գործում):

Երբ մենք բողոքում ենք հասարակական վայրերում չափից ավելի աղմուկից, աղբից, փողոցներում մեզ կանգնեցնող, մեր դռներն անհարկի թակող, կամ հեռախոսազանգով անհանգստացնող զանազան աղանդավորներից, հեռուստատեսային հաղորդումներից կամ թեկուզ պատգամավորներից, նորմալ բան է համարվում, չէ՞: Մշակույթն ու արվեստն էլ հանրային սպառման առարկա են: Իհարկե, անհատական ինքնություն ճշտելու լավագույն պայմաններն են ստեղծված այսօր՝ ընտրության հնարավորությամբ. չես ուզում այսինչ հաղորդումն ու ֆիլմը նայել, մի նայիր, ո՞վ է սփոփում կարդալ այսինչի զաքանչանքը կամ մյուսի նկարած խզբզոցը, մարդիկ ինքնարտահայտման հնարավորություն են ստացել. դպրոցական ԿԲՀ-ների մակարդակի հումորը հանրային «32 ատամով» ամեն երկուշաբթի միեւնույն է՝ մատուցելու է, այբուբենի տառերն էլ «Տես»-ին պարտադրել-սփոփելու են միօրինակ հարցեր հորինելու, եթերային ժամանակ են լցնելու, ի՞նչ անեն: Մի երիտասարդ ասում էր, թե ինքը ստրխառնոց է զգում, երբ բանաստեղծությունը զգացմունքների կամ հոգեկան ապրումների մասին է, մի ուրիշն էլ գլխացավ կարող է ունենալ մեկի սեռային կյանքի անատոմիայի մասին պատմող գրություններից: Խոսքը բնավ ճաշակի իրավունքի վրա պարտադրանքների մասին չէ եւ ոչ էլ ինքնարտահայտման հնարավորությունների սահմանափակման, նույնիսկ ոչ էլ բարոյականության, որովհետեւ դա էլ է վիճարկվող խնդիր, այլ ազատության մենաշնորհի, իմա՝ արվեստագետի պահանջած կատարյալ ազատության իրավունքի եւ ստեղծագործության նկատմամբ վերաբերմունք ունենալու արգելքի: Ի ցույց հանրության որեւէ գործ (արվեստի կամ ոչ) ունենում է արձագանք, վերաբերմունք, ընդունվում կամ չի ընդունվում, անտարբերության է մատնվում եւ այլն: Ինչո՞ւ այդչափ ընդվզում ինքնադատական մտքի ազատության հանդեպ. լոելյայն խեղդվե՞նք ազատությունների այս ճիրանում, որ սարդոստայն է գոյացրել մեր շուրջը՝ միմյանց ոչնչացնող նախանձի թունավոր մթնոլորտի, հեռուստատեսային աղմուկի, ֆինանսիկական կամայականությունների, աթոռակռվի հիստերիայի, հիմա էլ մշակութային պարտադրանքի տեռորի. այս դեպքում վերաբերմունք արտահայտելը մեկնաբանվում է իբրեւ «գործ տալ» (ի՞նչ էլ արտահայտություն է, ում մտքով կանցներ: Գաղտնի, անլեգալ հրատարակությո՞ւն է, ինչ է, ամենքն էլ տեղյակ են եւ ունեն իրենց կարծիքը: Խնդիրը պահի տակ հայրենասիրության խաղին էր վերաբերում՝ օտարի մի ելույթի առիթն օգտագործելով):

Խորհրդային կարծր գաղափարաբանությունը սարքովի մտավորականի անվան տակ իր կեղծ բարոյականությունն ու հայրենասիրությունն էր վաճառում իբրեւ թմրանյութ, այսօր էլ՝ արվեստ-արվեստագետի ազատությունների ներքո ամեն տեսակ անմտիս, տափակ, ձեւախեղված պատկերի, նկարի, ֆիլմի, երգի, գրքի միջոցով այլասերում են մեր կյանքն ու բարոյականությունը: Ու ամենից վատը՝ կարծիքի իրավունքից զրկելու միտումն է մեր կյանքը թունավորող ամեն տեսակ կեղծիքին ու կամայականությանը, բայց ցավոք խոսքի այդ արգելքը դնում են ոչ միայն իշխանական թեւը, այլ հենց ազատ մտքի ջատագովները, իրենց գրականության մեջ սահմաններն անցած ու տաբուներն իբր ջարդած ստեղծագործողները: Եթե կան նման ազատություններ, ուրեմն կա՞ն դրանց դրսեւորումների հանդեպ վերաբերմունք ունենալու իրավունք: Այլապես պետականության մի ամբողջ ինստիտուտ՝ մշակույթի նախարարությանը ուղղված խոսքերն էլ միջազգային կազմակերպություններին «գործ տալ» կարելի է համարել: Թե՞ պարզապես վերաբերմունք է մեր մշակույթի նախարարի՝ տկար եւ խոցելի հայտարարությանը (կամ թեկուզ Աշոտ Խաչատրյանից արված մեջբերումը):

*Հ. Գ. «Ժամանակ-Երեւան» թերթի հոդվածագիրը («Գրականության ջինը ոչից դուրս եկավ») գոհունակությամբ վկայաբերում է 23-ի ստորագրությամբ եւ Լեւոն Բարսեղյանի «Սրամիտ, կիսախաղ ու անքախույց նամակ մշակույթի նախարարին» գրությունները, ի դեպ վերջինիս հեղինակը այստեղ տողեր ունի. «Ի՞նչ կարող է անել եռագույնին բրիտանական կղզուց մեկն այստեղ կամ այնտեղ դրա վրա պարելով: Իհարկե, ոչինչ, բացի... ինչի՞ց: ...**Բացի մեզ մտածել տալուց, ոչինչ անել չի կարող:** Ինքն, իհարկե, կմեկնաբանի, թե ինչ էր ուզում ասել, մեկնաբանեց կարծեմ, բայց դա այլեւս կարեւոր չէ: Կարեւոր է հասկանալ, թե Դուք, Ջերդ Լուսաւորը, ինչո՞ւ ծոցում չեք հանում, երբ ամեն 15 վայրկյանը մեկ բռնաբարում են հայ մշակույթն ու ամեն 22 վայրկյանը մեկ (որոշ տվյալներով 21,5 վայրկյանը մեկ) լկում մեր պետականությունը: Հավատացեք, դրոշի վրա պարելն էր մնացել, էդ էլ Չարնոը հուշեց: Էդ պարը մնաց կազմակերպել, թեկուզ նախարարության շենքի շուրջը...»: (Օրինակներ չի բերում, իր իրավունքն է):*

ՄԵԼՈՆՅԱՆ ԲԱՐԱԼԵՅՆ.

Պարգեւավճարների համար պայքարը թեժանում է

Մոսկվայում ընթացող շախմատի «Աերոֆլոտի» մրցաշարի վերջին երեք տուրերում ուժեղագույն շախմատիստների մրցավեճին մասնակցող Հայաստանի գրոսմայստերներից առավել հաջող հանդես եկավ Գաբրիել Սարգսյանը՝ վաստակելով 2,5 միավոր: Գաբրիելը հաղթեց Յան Նեպոմնյաշչուն եւ Վալերի Պոպովին, ոչ-ոքի ավարտեց պարտիան Վիկտոր Լազնիչկայի հետ: 5 տուրից հետո Գաբրիել Սարգսյանը 3,5 միավորով առաջատարների խմբում է: Նույնքան միավոր ունեն նաեւ Վլադիմիր Հակոբյանը եւ Արտաշես Մինասյանը: Հակոբյանը հաշտություն կնքեց Յան Էլվեստի ու Դարմեն Սադվակասովի հետ, իսկ 5-րդ տուրում պարտության մատնեց Վլադիմիր Բելովին: Իսկ Արտաշես Մինասյանը բոլոր երեք պարտիաներն էլ ավարտեց ոչ-ոքի՝ հաշտություն կնքելով Ստանիսլավ Նովիկովի, Դմիտրի Յակովենկոյի եւ Զոլթան Ալմաշիի հետ:

Կարեն Ասրյանը նախ միավորը բաժանեց Յուրի Զակովիչի եւ Թիմուր Գարեեւի հետ պարտիաներում, առա հաղթեց Կոնստանտին Մասլակին: Ասրյանը 5 հնարավորից վաստակել է 3 միավոր: 2,5 միավոր ունի Զավեն Անդրեասյանը: Նա 3-րդ տուրում հաղթեց Էմիլ Սուտովսկուն, առա ոչ-ոքի խաղաց Հաո Վանգի հետ, իսկ 5-րդ տուրում պարտվեց Նի Հուային:

Անհաջող մեկնարկից հետո մրցաշարային իրավիճակը որոշ չափով շտկեց Աշոտ Անասասյանը՝ վաստակելով 1,5 միավոր: Նույնքան միավոր վաստակեց նաեւ Տիգրան Պետրոսյանը, որը մեկնարկում երկու անընդմեջ պարտություն էր կրել:

A1 մրցաշարի միանձնյա առաջատարը ռուսաստանցի գրոսմայստեր Ստանիսլավ Նովիկովն է, որը 5 հնարավորից վաստակել է 4,5 միավոր: Նրանից կեսական միավորով հետ են մնում Եվգենի Ալեխեեւը, Դմիտրի Յակովենկոն եւ Եվգենի Տոմաշեւսկին:

A2 մրցաշարում հայ շախմատիստներից բոլորից հաջող են հանդես գալիս Դավիթ Պետրոսյանը, Ավետիք Գրիգորյանը, Արման Փաշիկյանը, որոնք վաստակել են 3,5-ական միավոր: Այստեղ 4,5 միավորով աղյուսակը գլխավորում են Սոկրաս Սաֆինը, Վեն Յանգը եւ Ալեքսանդր Դանիլովը: Տիգրան Նալբանդյանը, Արսեն Եղիազարյանը, Բենիամին Գալստյանը եւ Արթուր Չիբուխչյանը վաստակել են 3-ական միավոր: 2,5-ական միավոր ունեն Արա Մինասյանը, Էլինա Դանիելյանը: Տիգրան Քոթանջյանի եւ Լիլիթ Մկրտչյանի օգտին 2-ական միավոր է գրանցված, իսկ Հրանտ Մելքումյանն ունի 1,5 միավոր:

B մրցաշարում հայ շախմատիստներից բոլորից շատ միավոր է վաստակել Դավիթ Քալաշյանը՝ 5: Նա ընդամենը կես միավորով է զիջում Վասիֆ Դուդարբեյլուն ու Կարտիկ Արունին: 4,5 միավոր ունի Յուրի Համբարձումյանը:

C մրցաշարում էլ առաջատարների խմբում է Սուրեն Պողոսյանը, որն ունի 5 միավոր: Նա կես միավորով է զիջում աղյուսակը գլխավորող Ալեքսեյ Շամինին, Սերգեյ Գիլեւին եւ Գուլմիրա Դայլեցովային: 4,5-ական միավորով առաջատարներին հետաքնդում են Առնոլդ Մինասյանը., Տիգրան Սիմոնյանը եւ Դավիթ Գետոյանը:

«Բանանցը» վերադարձավ Կիպրոսից ու մեկնեց Ծաղկաձոր

Կիպրոսում ուսումնամարզական հավաքն ավարտելուց հետո փետրվարի 16-ին Երեւան վերադարձան Երեւանի «Բանանցի» ֆուտբոլիստները: Ավարտական խաղում առաջնության արծաթե մրցանակակիրը 0-1 հաշվով պարտվել է բուլղարական «Սոֆտիգային»: Բուլղարացիները միակ գոլը խփել են 11 մ հարվածով:

Հիշեցնենք, որ մինչ այդ «Բանանցը» Կիպրոսում եւս երեք մրցախաղ էր անցկացրել: Հայ ֆուտբոլիստները նախ 0-1 հաշվով պարտվել էին ռումինական «Ֆարուլին», ոչ-ոքի (0-0) ավարտել հանդիպումը հարավկորեական «Դեյխոնի» հետ եւ խոշոր հաշվով (1-4) զիջել ռումինական «Օցելուլին»: Կարճաստեւ հանգստից հետո երեկ «Բանանցը» ուսումնամարզական հավաքի մեկնեց Ծաղկաձոր: Մինչեւ մրցաշրջանի մեկնարկը «Բանանցն» ուսումնամարզական եւս մեկ հավաք կանցկացնի Թուրքիայի Անթալիա քաղաքում:

«Փյունիկը» զիջեց մրցակցին

Սոչիում ուսումնամարզական հավաք անցկացնող Երեւանի «Փյունիկը» մարզումներին զուգահեռ նաեւ ստուգողական հանդիպումներ է անցկացնում: Հայաստանի չեմպիոնը Պյատիգորսկի «Մաշուկի» հետ ստուգողական խաղում 0-1 հաշվով պարտություն է կրել:

Ռաջաբովը կողոպտվեց եւ հրաժարվեց մրցաշարից

Մեկնարկել է շախմատի միջազգային խոշոր մրցաշարը ութ ուժեղագույն շախմատիստների մասնակցությամբ: Առդեն երկրորդ տարին անընդմեջ Լինարեսի մրցաշարի առաջին շրջանի հանդիպումները տեղի են ունենում մեքսիկական Մորելիա քաղաքում (մինչեւ փետրվարի 25-ը), իսկ մարտի 2-11-ը շախմատիստները մրցավեճը կշարունակեն Լինարեսում: Մրցանակային ընդհանուր հիմնադրամը 314 հազար եվրո է: Այդ գումարից 100 հազարը կստանա հաղթողը, 75 հազարը՝ 2-րդ, 50 հազարը՝ 3-րդ տեղ զբաղեցնողը: Վերջին տեղը գրավող շախմատիստին կտրվի 11 հազար եվրո:

Մինչ մրցաշարի մեկնարկը տխուր միջադեպ տեղի ունեցավ, որի հետեւանքով ադրբեջանցի գրոսմայստեր Թեյմուր Ռաջաբովը հրաժարվեց մրցումներին մասնակցելուց: Նրան մրցաշարում փոխարինեց ուկրաինացի գրոսմայստեր Վասիլի Իվանչուկը: Իսկ տեղի էր ունեցել հետեւյալը: Մրցաշարի կազմակերպիչները շախմատիստներին առաջարկել էին կլիմայափոխվելու համար մի քանի օր հանգստանալ մեքսիկական Պասսուարն քաղաքում: Ռաջաբովը հոր հետ, որը նաեւ նրա մարզիչն է, ռեստորանում ընթրելուց հետո վերադառնալով հյուրանոցի իր համարը, դռան կողպեքը ջարդած էր գտել: Անհայտ հանցագործները կողոպտել էին Ռաջաբովին: Թեեւ տեղի ունեցածի մասին նրանք հայտնել էին ոստիկանությանը, սակայն վերջինս ոչինչ չէր ձեռնարկել: Ռաջաբովը փոխհատուցում էր պահանջել մրցաշարի կազմակերպիչներից, սակայն այդպես էլ ոչինչ չստանալով, հրաժարվել էր մասնակցությունից:

Իսկ այժմ մրցաշարի ընթացքի մասին: Առաջին տուրում Լեւոն Արոնյանը սեւերով ոչ-ոքի խաղաց ռուսաստանցի Պյոտր Սվիդլերի հետ: Խաղաղ դաշն կնքեցին նաեւ Թոփալովն ու Անանդը, Իվանչուկն ու Լեկոն: Հաղթանակ տարավ միայն Մագնուս Կառլսենը, որն առավելության հասավ Ալեքսանդր Մորոզեւիչի նկատմամբ: Երկրորդ տուրում եւս միայն մեկ արդյունավետ քայլ գրանցվեց: Այս անգամ իր օգտին հաղթական միավոր գրանցեց Վասիլի Իվանչուկը՝ հաղթելով Թոփալովին: Արոնյանը սպիտակներով ոչ-ոքի խաղաց Կառլսենի հետ: Հաշտություն կնքեցին նաեւ Լեկոն ու Մորոզեւիչը, Անանդն ու Սվիդլերը:

Երկու տուրից հետո 1,5 միավորով աղյուսակը գլխավորում են Վասիլի Իվանչուկն ու Մագնուս Կառլսենը: Արոնյանը, Անանդը, Լեկոն ու Սվիդլերը վաստակել են մեկական միավոր: 3-րդ տուրում Արոնյանը սեւերով կմրցի Մորոզեւիչի հետ:

Իբրահիմովը կրկին պարտվեց

Ուզբեկստանցի ծանրաքաշային պրոֆեսիոնալ բոքսամարտիկ Թիմուր Իբրահիմովը երկրորդ անընդմեջ պարտությունը կրեց՝ WBC-ի վարկածով Ամերիկայի չեմպիոնի տիտղոսի համար մենամարտում զիջելով ամերիկացի Թոնի Թոմփսոնին: 10 ռաունդանոց մենամարտում բոլոր երեք մրցավարներն էլ միավորներով հաղթանակը շնորհեցին Թոմփսոնին:

Նշենք, որ մինչեւ անցյալ տարվա հունիս Իբրահիմովը պրոֆեսիոնալ ռինգում անպարտելի էր: Նա տարել էր 21 հաղթանակ (13-ը՝ նոկաուտով), մեկ մենամարտ ավարտել ոչ-ոքի: Սակայն նա պարտվեց ամերիկացի Կելվին Բրոկին:

35-ամյա Թոմփսոնի համար հերթական մենամարտը 29-րդն էր: Միակ պարտությունը նա կրել էր 2000թ. իր հայրենակից Երիկ Կիրկլանդի հետ մենամարտում: 17 անգամ նա մրցակիցներին նոկաուտի էր ենթարկել:

«Ուեմբլիի» շահագործումը հնարավոր է ձգձգվի

Հնարավոր է, որ Լոնդոնի հանրահայտ «Ուեմբլի» մարզադաշտի շահագործումը կրկին ձգձգվի: Հիմնովին վերակառուցվող մարզադաշտը պետք է շահագործման հանձնվեր դեռեւս անցյալ տարի, սակայն շինարարական կազմակերպությունների միջեւ ծագած կոնֆլիկտի պատճառով աշխատանքները դանդաղեցին: Ամեն դեպքում, շինարարները պետք է ձգտեն մինչեւ մայիսի 19-ն ավարտել աշխատանքները, քանի որ այդ օրն «Ուեմբլիում» նախատեսված է Անգլիայի գավաթի եզրափակիչ հանդիպումը:

Բայց ամեն դեպքում, ապահովության համար Կարդիֆի «Միլենիում» մարզադաշտը պատրաստ վիճակում են պահում եւ հարկ եղած դեպքում գավաթի եզրափակիչ հանդիպումը կտեղափոխվի այդ մարզադաշտ: Նշենք, որ վերջին տարիներին պատվավոր մրցանակի համար վճռորոշ խաղը տեղի է ունեցել հենց «Միլենիում» մարզադաշտում:

Ռոնալդուն կգնա Կանտոնայի հետքերով

Պորտուգալիայի հավաքականի եւ «Մանչեսթր յունայթեդի» կիսապաշտպան Քրիստիանու Ռոնալդուն արդեն գիտի, թե ինչով է զբաղվելու ֆուտբոլային գործունեությունն ավարտելուց հետո: Նա որոշել է դերասան դառնալ: Նրա մոտ դերասանությունը բնավ էլ վատ չի ստացվում նաեւ խաղադաշտում, երբ մրցավարներին կարողանում է համոզել, թե իբր մրցակիցներն իր նկատմամբ կոպիտ են խաղացել:

«Ես ինձ կարող եմ լիովին պատկերացնել որպես դերասան: Ինձ այդ մասնագիտությունը դուր է գալիս: Կարծում եմ՝ վատ չի ստացվի», հայտարարել է Ռոնալդուն: 22-ամյա կիսապաշտպանի համար օրինակ կարող է ծառայել «Մանչեսթր յունայթեդի» նախկին «աստղ» Էրիկ Կանտոնան, որը ֆուտբոլիստի կարիերան ավարտելուց հետո արդեն նկարահանվել է 13 ֆիլմում:

Լրատվամիջոցների հաղորդագրության համաձայն՝ Ռոնալդուով հետաքրքրվում են Մադրիդի «Ռեալն» ու «Բարսելոնը»: Լոնդոնում բրազիլացիների հետ պորտուգալացիների հանդիպմանը հետեւում էր կատալոնյան ակումբի մարզական տնօրեն Չիկի Բիգիրիստայնը: Այս առնչությամբ Ռոնալդուն հետեւյալն է նշել. «Այս պահին մտածում եմ միայն մարզումների մասին: Ամեն օր աշխատում եմ առավելագույն ծանրաբեռնվածությամբ: Սակայն չգիտեմ, թե 6 ամիս հետո որտեղ կլինեմ: Համոզված եմ միայն այն բանում, որ ցանկանում եմ օրեցօր առաջադիմել եւ հասնել մեծ հաջողություններ», հայտարարել է Ռոնալդուն:

Իսպանական լրատվամիջոցների հաղորդագրության համաձայն՝ Մադրիդի «Ռեալը» պատրաստ է Ռոնալդուի համար 30 մլն ֆունտ ստեռլինգ վճարել: Ինչ վերաբերում է «Բարսելոնին», ապա ակումբը պատշաճաբար հերքել է Ռոնալդուի գործակալի հետ բանակցելու փաստը: Ճիշտ է, Լոնդոնում Չիկի Բիգիրիստայնը հանդիպել է Ռոնալդուի գործակալ Ժորժի Մենդիշի հետ, սակայն Ռոնալդուի մասին ոչ մի խոսք չի գնացել: Ըստ Բիգիրիստայնի՝ իրենք վաղեմի ծանոթներ են եւ պարզապես զրուցել են:

Բեկելեն գերազանցեց աշխարհի ռեկորդը

Անգլիական Բիրմինգհեմ քաղաքում անցկացված թեթեւ ատլետիկայի միջազգային մրցումներում եթովպացի վազորդ Կենենիս Բեկելեն 2000 մ վազքում մարզասրահների աշխարհի նոր ռեկորդ սահմանեց: Նա մրցաստարածությունը հաղթահարեց 4 ռոպե 49,99 վրկ.-ում: Այդ մրցումներում աշխարհի իր ռեկորդը գերազանցելու եւս մեկ փորձ կատարեց ռուսաստանցի ձողացատկորդուհի Ելենա Իսինբաեւան: Սակայն 4 մ 94 սմ բարձրությունը հաղթահարել նրան այդպես էլ չհաջողվեց: Ճիշտ է, Իսինբաեւան մրցակցությունից կրկին դուրս էր եւ այս մրցաշարում էլ հաղթեց՝ ցույց տալով 4,73 մ արդյունք:

Ռոնալդոն բացեց գոլերի հաշիվը «Միլանում»

Վերջերս իտալական «Միլան» տեղափոխված բրազիլացի Ռոնալդոն առաջնության հերթական խաղում բացեց գոլերի հաշիվը նոր ակումբում: Նրա խփած երկու գոլերը օգնեցին «Միլանին» հյուրընկալվելիս դժվարին հաղթանակ տոնել «Սիենայի» նկատմամբ (4-3):

Խաղերը կկայանան «Սան Սիրոյում»

Իտալական «Միլանն» ու «Ինտերը» Չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչի սեփական հարկի տակ նախատեսված հանդիպումները կանցկացնեն Միլանի «Սան Սիրո» մարզադաշտում: ՈՒԵՖԱ-ն թույլատրել է խաղերն անցկացնել Միլանում, սակայն հանդիսականների թվի սահմանափակում է մտցրել: Չորեքշաբթի կայանալիք «Ինտեր»-«Վալենսիա» հանդիպմանը պետք է ներկա գտնվեն 36 հազարից ոչ ավելի հանդիսականներ: Իսկ «Միլան»-«Սելթիկ» հանդիպման հանդիսականների առավելագույն քանակի հարցը կորոշվի ավելի ուշ:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՈՐՈՒՍԱԿԱՆ «ՖՈՐԲՍ»

Հայկական անուններով տարօրինակ հրեաներ

«Ֆորբս» ամսագրից բացի Ռուսաստանի զանազան բնավ էլ ոչ բուլվարային հրատարակություններ ժամանակ առ ժամանակ հրապարակում են երկրի մեծահարուստների՝ ձեռնարկատերերի, բանկիրների, գույքատերերի եւ ուրիշ այլ գործարար մարդկանց ցուցակներ: Սակայն վերջին նման մի «տեղեկատու» ուշադրություն էր գրավում, որ ցուցակում տեղ էին գտել միայն հրեաների անուններ: Ընդսմին, արտաքնապես ինչ ազգանունի ասես չես հանդիպի՝ բուն հրեական, մահմեդական, վրացական, ռուսական... Օրինակ, ըստ այդ ցուցակի, հրեա են Ադրբեջանի ծնունդ, «Լուկոյլ» նավթային ընկերության նախագահ Վագիտ Ալեքպերովը եւ «Կոկուս» ընկերությունների խմբի տիրակալ Արաս Աղալարովը:

Հայտնի է, որ հրեաները իրենց ազգային պատկանելությունը որոշում են մոր կողմով: Սակայն այս անգամ այն տպավորությունն է ստեղծվում, որ սկսել են հրեա համարվել նաեւ մի շարք մեծահարուստներ, որոնց... կինն է այդ ցեղի ներկայացուցիչը: Ինչեւէ, ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում հիշյալ ցուցակի մեջ մտած մի շարք «հրեաների» անուններ, որոնք, կարծում ենք, կառաջացնեն ամենամեծ... հետաքրքրությունը:

Ալեքսանդր Տեր-Ավանեսով-«Տեխինվեստ» ընկերության համաստեր:

Ատոն Եղիազարյան-Պետդումայի պատգամավոր, «Դաեւ-պլազա» ընկերության համաստեր: Տարեսկզբին ընկերությունը 150 մլն դոլարով վաճառեց Ռուբլյովսկոյե խճուղում գտնվող «Եվրոպարկ» առեւտրի կենտրոնը:

Գրիգոր Խաչատուրով-«Պրոտեկ» կենտրոնի հիմնադիր եւ համաստեր:

Ռուբեն Վարդանյան-«Տոյկա դիլոգ» ընկերության տնօրենների խորհրդի նախագահ:

Դանիել Խաչատուրով-«Ռոսգոսստրախ» ընկերությունների խմբի նախագահ: Վերահսկում է Ռուսաստանի խոշորագույն ապահովագրական ընկերության բաժնետոմսերի 75%-ից մեկով պակաս բաժնետոմսեր: Նաեւ խաղային հիպոթեկային բանկի տերն է:

Գենադի Այվազյան-«Կուզբասրազրեզուգոլ» հոլդինգի համաստեր, Krutrade ընկերության տնօրենների խորհրդի նախագահ:

Արտաշես Թերզյան-«Տրաստ» ազգային եւ ներդրումային բանկերի տնօրենների խորհրդի անդամ:

Ալեքսանդր Խաչատրյան-«Կոմեյկա» առեւտրի ցանցի տնօրենների խորհրդի անդամ: Սերգեյ Լոմակինի եւ Ալեքսանդր Սամոնովի հետ տիրում է ընկերության 50 տոկոսին: Մնացյալ 50 տոկոսը պատկանում է «Ուտլսիբ» ֆինանսական ընկերությանը:

Ջիվան Չելոյանց-«Լուկոյլի» նավթի եւ գազի հանույթի ապահովման գլխավոր վարչության պետ: Տիրում է ընկերության բաժնետոմսերի 0,1 տոկոսին:

Ռուբեն Դիզդիշյան-«Սենտրալ պարտներշիպ» պրոդյուսերական ընկերության գլխավոր տնօրեն եւ համաստեր: 2005 թ. նոյեմբերին բաժնետոմսերի սուզգիչ փաթեթը վաճառեց «Ինտերռոս» հոլդինգի մեջ մտնող «Պրոֆ-մեդիա» խմբին:

Սակայն ամենահետաքրքրականը երեւի այն է, թե այս մարդիկ իրենք իրենց ինչ են համարում՝ հա՞յ, թե հրեա: Ելնելով այս տարօրինակ ցուցակից, գալիս ես այն եզրակացության, որ ամենահիսկական հայը, այնուամենայնիվ... Առա Աբրահամյանն է: համենայն դեպս նրա անունը չկա այդ ցուցակում:

ԿԲ նախագահ Տիգրան Սարգսյանի այցը Մոսկվա

Փետրվարի 18-ին ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տիգրան Սարգսյանը Ռուսաստանի Դաշնության Ֆինանսական շուկաների դաշնային ծառայության հրավերով մեկնեց Մոսկվա, որտեղ մասնակցելու է ԱՊՀ երկրների արժեթղթերի շուկաները կարգավորող պետական մարմինների ղեկավարների խորհրդի չորրորդ նիստին:

Նիստին քննարկվելու է մասնակից երկրների արժեթղթերի շուկաների ընթացիկ իրավիճակը, ներկայացվելու են արժեթղթերի էմիտենտների գործունեության մասին տեղեկատվության բացահայտման, բրոքերային, դիլերային գործունեության, արժեթղթերի սեփականության հաշվառման կարգավորմանն ուղղված օրենսդրությունների համեմատական վերլուծություններ, քննարկվելու են ազգային արժեթղթերի շուկաներ ԱՊՀ անդամ երկրների շուկաների պրոֆեսիոնալ մասնակիցների մուտքի թույլտվության սկզբունքները:

Նիստին անդրադարձներ են լինելու նաեւ 2007-2008 թթ. համար խորհրդի աշխատանքների ծրագրին եւ այլ հարցերին:

ԿԲ մամուլի ծառայություն

ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

Հայրենիքը գիտակցություն է

Հայրենադարձության եւ հիմնավորման «Երկիր» հասարակական կազմակերպությունների միության նախաձեռնությամբ ու ֆինանսավորմամբ, ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի արշավախումբը 2005-2006թթ. հայտնաբերեց եւ իրականացրեց Հայոց արքա Տիգրան Մեծի կողմից կառուցված Արցախի Տիգրանակերտ քաղաքի նախնական պեղումները:

2007 թվականի հունիս-հուլիս ամիսներին նախատեսվում է իրականացնել Արցախի Տիգրանակերտի լայնամասշտաբ պեղումներ: Տեղանքի պատմամշակութային համապարփակ կերպարի վերականգնումը լուրջ ներդրում կլինի ոչ միայն մեր պատմության ու մշակույթի հետազոտության, այլեւ Արցախի հիմնախնդրի հայանպաստ լուծման համար:

Այս անհետաձգելի ծրագրի շարունակական լինելու նախապայմանը ձեր ֆինանսական աջակցությունն է:

ARMECONOMBANK

Beneficiary: Union of NGO YERKIR on the Settlement and Population

Beneficiary's A/C No. ***163008113538 [USD]***
163008113520 [AMD]

E-mail: anahit@yerkir.org Tel. 091 459994

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է բաց մրցույթ՝ «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակ» հիմնարկի գործադիր տնօրենի թափուր աշխատատեղի համալրման համար:

«Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակ» հիմնարկի խնդիրներն են.

Գերմանիայի Դաշնային Հանրապետության «Վերականգնման վարկերի բանկի» (KfW) եւ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից համատեղ իրականացվող «Մասնավոր փոքր եւ միջին ձեռներեցության աջակցման, «Բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացման», «Վերականգնվող էներգիայի զարգացման» եւ «Վարկային երաշխիքների հիմնադրամ» ծրագրերի իրականացում:

Պահանջվող կրթությունը եւ գիտելիքների շրջանակը

Բարձրագույն տնտեսագիտական կրթություն եւ 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, որից առնվազն 3 տարի բանկային համակարգում

Գիտելիքներ հետեւյալ ոլորտներում՝ բանկային օրենսդրության եւ նորմատիվային դաշտի տիրապետում (խորացված), վարկային եւ տոկոսային ռիսկերի կառավարում (խորացված), կառավարում (ներածական)

Լեզուների իմացություն՝ հայերեն, անգլերեն լեզվի վարժ տիրապետում, գերմաներեն եւ ռուսերեն լեզուների տիրապետումը ցանկալի է:

Անհրաժեշտ հմտություններ՝ Համակարգչով աշխատելու հմտություն (MS Office)

Փաստաթղթերի ընդունելության վերջնաժամկետը՝ **2007թ. մարտի 16**

Պահանջվող փաստաթղթերը.

- դիմումի ձեւ (ձեւը զետեղված է ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում - www. cba. am /«Մեր մասին»/«Թափուր աշխատատեղեր» բաժնում, կամ տրվում է ՀՀ կենտրոնական բանկում)
- անձնագիր, անձնագրի պատճեն
- սոցիալական ապահովության քարտ, սոցիալական ապահովության քարտի պատճեն
- դիպլոմ, դիպլոմի միջուկ, դիպլոմի եւ դիպլոմի միջուկի պատճեններ
- գինգրքույկ, գինգրքույկի պատճեն (արական սեռի ներկայացուցիչների համար)
- աշխատանքային գրքույկի պատճեն
- երկու գունավոր լուսանկար, 3x4 չափսի

ՀՀ կենտրոնական բանկում մրցույթների անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը զետեղված է ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում (www. cba. am) կամ տրվում է Կենտրոնական բանկում:

Պարզաբանումների համար կարող եք զանգահարել՝ 56-14-40 եւ 06-34 (ներքին)

ԿԲ մամուլի ծառայություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ - ՄԲԱՊՁԲ - 07/7» ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **Պետության կարիքների համար ավտոտրանսպորտի ստուգման ինտեգրացված տեխնոլոգիական սարքավորման ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 850 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինինվեստբանկ», Հ/Հ 247010010343 «Կոմունալախագիծ» ՓԲԸ-ի հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 2893-25 Լ.Ավանեսյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրվա ժամը 16:00-ն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ՄԲԱՊՁԲ-07/8» ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ Դատական դեպարտամենտի կարիքների համար ավտոմեքենաների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 750 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինինվեստբանկ» «Կոմունալախագիծ» ՓԲԸ-ի N 247010010343 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, Կ. Դամբյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 10.00-ն:

ՀԱՍՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից՝ ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է **«Որոտան-Արփա ջրառ» ՓԲԸ** ոռոգման նպատակով «Հեր-հեր» եւ «Դավիթ Բեկի» ջրանցքներից համապատասխանաբար 1,98 մխվկվ. եւ 0,024 մխվկվ. ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2007 թ. փետրվարի 27-ին, ժամը 16-00, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

2 սեն. բնակարան Կիեւյան փողոցում: 63 քմ, 2-րդ հարկ, քարե շենք: 27-01-02, 093062061

www.azg.am
www.azgdaily.com

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 19.02.2007, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: